





ԵՐՍԻՆ ՎԵՐԴՅՈՒԹԵԱ ԱԼՑԱԽԵՆ.

34 (~)  
Հ-42

# ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԻՐԱԿԻՈՒՆՔ

(Համառուսական)

ԺԱԿԱՐ)

Կիեվսկայ գրատուր,  
պր. Տայբ Պատուհանցի,  
1904



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԻՋԱՋԱՑԻՆ ԻՐԱԿԱԿԻՆՔ



7047

## УЧЕБНИКИ ПО ПРАВУ

- 1) Международное Право. Лекцій  
Проф. Моск. Имп. Универс. Гр. *Л. А. Комаровского*. Москва.
- 2) Международное право. Курсъ Лек-  
цій Прив.-доцента. *Уляницкаго*. Москва.
- 3) Вѣстникъ Европы. 1899 г. №№ 6  
и 9. 1900 г.
- 4) Рѣчъ проф. *Мартенса*. 1900 г.

A — II  
11454

## Մ Ի Ք Ա Ն Ի Խ Օ Ս Ք

Յաւակնութիւններով շէ որ հրատարակում ենք  
մեր ներկայ փոքրիկ աշխատութիւնը Միջազգային  
իրաւունքի մասին:

Մեր աղբիւներն եղել են Ռուս երկու պրօֆե-  
սորների դասախոսութիւնները և այն, ինչ որ մեր  
յիշողութեան մէջ մնացել է Միջազգային իրաւունքի  
դասախոսութիւններից՝ Մոսկվայի Համալսարանում:

Դրոյկիս նպատակն է մօտաւոր գաղափար կազ-  
մել տալ հայ ընթերցող միջակ հասարակութեանը,  
միջազգային յարաբերութիւնների, իրաւունքների,  
պարտաւորութիւնների և նրանցից ծագած բազմա-  
թիւ խնդիրների մասին:

Աշխատէլ ենք շարադրելիս հնարաւոր եղածին  
շափ պարզ կերպով արտայայտել գիտական տեսու-  
թիւնները և ոչ այս խիստ, չափած ձեռվ, ինչ որ  
նըանց է յատաւակ. Հորից պարզ է, որ մեր գրածները  
գիտական տրակտատներ չեն այլ ժողովրդականա-  
ցրած տեսութիւններ՝ ուստի և զիջողութեան արժանի:

Արսեն վարդ. Ղլդնեան.

1904 թ. Մայիս 15.

Ալեքսանդրապոլ.



## ՄԻԶԱՉՎԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔ

### I

Դրուխ առաջին.—Միջազգային իրաւունքի առարկան։ Տէրութիւն—.Նրա իրաւունքներն իր բռնած տարածութեան վրա.սահմաններ։ Ե՞րբ կարսդ է մի տէրութիւն միջազգային միութեան անդամ լինել։ Նոր տէրութիւն։ —Նրա կազմւելը. Միջազգային միութեան վերաբերմունքը գէպի նա. Նոր տէրութեան ճանաշելու եղանակը։

Միջազգային իրաւունքը ծագում է այն բազմատեսակ և բարդ իրաւական յարաբերութիւնից, որի մէջ գտնուում են անընդհատաբար տէրութիւններն, իրրեն մարդկութեան մեծ ընտանիքի անդամներ. որից և հետեւում է այն, որ միջազգային իրաւունքի զբաղման առարկան տէրութիւններն են, ճիշտ այնպէս, ինչպէս որ քաղաքացիական իրաւունքի առարկան մար-

զիկ ու նրանց փոխադարձ իրաւական յարաբերութիւններն են. եկեղեցական իրաւունքի առարկան հաւատացեալների և իր փոխադարձ յարաբերութիւններն են և պետական իրաւունքի առարկան՝ պետութիւնը՝ իր օրէնսդրական, վարչական, դատաստանական և այլ բոլոր հիմնարկութիւններով: Այդ տեսակէտից, ինչպէս մի տէրութեան մէջ իր բաղկացնող անդամները կազմումն մի միութիւն մի կառավարող իշխանութեան զլխաւորութեամբ, ուր տէրութիւնը զրադւում է այդ միութեան իրաւական յարաբերութիւններով, այնպէս էլ միջազգային իրաւունքն զրադւումէ տէրութիւնների իրաւական, դրա վրա աւելացրած և քաղաքական յարաբերութիւններով, նայելով նրանց վրա իրքե մի միութեան, մի դաշնակցութեան վրա, և ոչ առանձին անհատների վրա: Աւելի պարզ ասած, միջազգային իրաւունքը մի տէրութեան ներքին զործերով չի զրադւում, նրա հպատակների փոխադարձ իրաւունքներն ու պարտաւորութիւնները չի որոշում, այլ զրադւում է տէրութիւնների միջազգային յարաբերութիւնների, փոխադարձ սլարտաւորութիւնների և իրաւունքների բարդ խնդրով:

Տէրութիւն ասելով հասկանում ենք երկրի որոշ տարածութիւն, որ իր ընակչութեամբ կազմում է քաղաքական մի միութիւն, մի իշ-

խանութիւն՝ իր օրէնքներով, իր վարչական կազմակերպութեամբ, իր կառավարութեան եղանակով։

Տէրութիւն իր բռնած տարածութեան վրա ունի բարձրագոյն պաշտպանի, հովանաւորողի և կառավարողի գերը, իսկ այդ տարածութեան այն մասը, որի վրա նա իշխում է իբր մասնաւոր սեփականատէր, գտնելում է լիովին նրա իշխանութեան տակ՝ կարգադրելու այնպէս, ինչպէս ինքը կը ցանկանայ։ Այն հոգաբաժինը, որի մասնաւոր սեփականատէրն է տէրութիւնը, կոչում է պետական կալւածք։

Ամեն տէրութիւն ունի իր աշխարհագրական սահմանները. այդ սահմանները լինում են կամ բնակամ և կամ սպայմանական, դաշնագրերավ որոշւած։ Գետութեան համար սահմանները մեծ նշանակութիւն ունին, ուստի և որ և է ընդհարումի, թիւրիմացութեան և սահմանների անորոշութեան առթիւ ծագած վէճերի առաջն առնելու համար, պէտք է նա որոշ հաստատուն վիճակի մէջ լինի. պէտք է մի յայտնի գիծ բաժանէ մի երկրի սահմանը միւսից։ Ամենալաւ սահմանն այդ տեսակէտից, մի սահման՝ որ ակներեն ցոյց տար մշտապէս և երկու կամ ուելի տէրութիւնների հոգերը բաժանէր միմիանցից, դա բնական սահմանն է, որին և ձգտում է հասնել ամեն տէրութիւն։ Բնական

սահմաններին հասնելը վերջ կտար որ և է վէճի,  
որ և է թիւրիմացութեան՝ երկու հարևանների  
մէջ։ Բնական սահմաններ կարող են կազմել դե-  
տերը, լճերը, լեռնաշղթաները, ծովերը և այլն։  
Երբ գետն է սահմանը երկու տէրութեան մէջ,  
սահմանագիծը հաշւում է գետի մէջ տեղը։  
Գետի ընթացքի փոխելու դէպրում նրա նախ-  
կին հունն է սահմանը որոշողը։ Սահման կազ-  
մող գետից հաւասարապէս օգտառմ են երկու  
սահմանակից տէրութիւններն էլ։ Եթէ ծովն  
է սահմանը, այն դէպրում ծովի վրա տէրու-  
թեան իշխանութիւնը տարածւում է 3—5 տն-  
գլխական ծովային մզոն, որից այն կողմ այլ  
ևս չի տարածւում նրա իրաւունքը, որովհետեւ  
րաց ծովից ազատ կերպով իրաւունք ունին  
օգտաելու բալոր տէրութիւններն առանց ար-  
դելքների։

Եյն դէպրում, երբ երկու տէրութեան մէջ  
ընական սահմանը լեռներն են կազմում, սահ-  
մանագիծ հաշւում են լեռնաշղթայի վերին  
ծայրերը։

Բնական կոչւած սահմանների մէջ մեծ  
նշանակութիւն ունի և վէճերի ու բարդութիւն-  
ների առիջ է տալիս սահման կազմող գետը,  
որա համար էլ տէրութիւններն յատուել զաշնա-  
գրեր են կազմում, համաձայնութեան են զա-  
լիս, որ իրենց մէջ սահման կազմող գետի

վրա նախ, աղատ կերպով նաւային երթեսեկութիւն լինի, երկրորդ, որ ոչ մէկը նրանցից արհեստական կերպով շփոխի ընթացքը, գետի մէջ բանդեր շկապի. երրորդ շկառուցի որ և է այնպիսի շենք, որ աղատ առետրի արդեկք լինի և այն: Ահա թէ զզուշութեան համար երկու տէրութիւն, երբ իրանց սահմանը որ և է զետ է, ինչպիսի միջոցներ են ձեռք առնում:

Երբ տէրութիւնների մէջ ընական սահմաններ շկան, նոքա գալիս են համաձայնութեան իրենց սահմանադիմը որոշելու համար. արդ զիմը ցոյց է տրւում սիւներով, փոսերով, եթէ լիճ, կամ փոքր ծով է՝ լողացող տակառներով և այլն:

Մի տէրութիւն՝ միջազգային միութեան անդամ լինելու համար ուրեմն, պիտի նախ բռնէ հոգի որոշ տարածութիւն, երկրի ընակշութիւնը պիտի կազմէ մի միութիւն, որ իր ձեռքում ունենայ երկրի վարչական, օրէնսդրական և գառաստանական ոյժը, որ նա որոշ քաղաքացիական կազմակերպութիւն, զոյն ունենայ: Երբ մի տէրութիւն այդ բոլորը կունենայ, հետեարար և կը կարողանայ միջազգային միութեան մի անդամ լինել: Այդ հիման վրա միջազգային միութեան անդամ շեն կարող լինել 1) վայրենիները, 2) մի երկրի քաղաքական կուսակցութիւնները, 3) առետրա-

ընկերութիւնները. 4) եկեղեցին. 5) ազգայնաւ-  
թունները. 6) մասնաւոր մարդիկ. և այլն:

Մարդկային պատմութիւնը նոր պետու-  
թիւններ կազմելու հետեւալ ձևերն է տալիս.—  
1) Երբ մի տէրութեան որոշ մաս բաժանւում  
է իր ամբողջաւթիւնից և կազմում է մի նոր  
տէրութիւն: Ինչպէս օրինակ Միջին Ամերի-  
կայում նորերս կազմւեց Պահամայի վոքրիկ հա-  
սարակապետութիւնը: Կամ չիւսիսային Ամե-  
րիկայի Միացեալ նահանգների բաժանւելին Ան-  
գլայից տասնութերորդ դարի վերջերին: Հա-  
րաւային Ամերիկայի բազմաթիւ տէրութիւն-  
ների անջատւելին Խոպանիայից և ինքնուրոյն  
տէրութիւններ կազմելը: Տասնիններորդ դարի  
30 թւականին Բէլգիական թագաւորութեան  
բաժանւելին Հոլանդիայից: Յունաստանի (1827  
թ.), Բռումբնիայի, Սերբիայի և այլն բաժան-  
ւելը Տաճկաստանից և անկախ տէրութիւններ  
կազմելը: Եւ այլս և այլն: 2) Երբ երկու կամ  
շատ տէրութիւններ միացած կազմում են մի մի-  
ութիւն, մի տէրութիւն: Այսովէս օրինակ. Գեր-  
մանական մանր տէրութիւններից Գերմանական  
կայսրութեան կազմւելը՝ Պրուսական թագաւո-  
րութեան զլիսաւորութեամբ: Խտալական տէ-  
րութիւններից Խտալական ներկայ թագաւորու-  
թեան առաջ դալը: Եւ այլն:

Միջազգային իրաւունքով, մի տէրութիւն

ինչ եղանակով էլ կազմւելու, առաջ դալու լինի, մի երկրի կառավարութեան ձեփ մէջ ինչ փոփոխութիւններ էլ տեղի ունենան, և նա ինչ ձեփ վարչական և քաղաքական կազմակերպութիւն էլ ներկայացնէ՝ պէտք է ընդունվի միջազգային միութեան միւս անդամների կողմից, որովհետեւ բաւական է որ, այդ տէրութիւնը կազմւել է, հաստատուն, երկրի կառավարութեան գելին իր ձեռում բռնած իշխանութիւն ունի և առնասարակ տէրութիւն կոչւելու բոլոր պայմանները կրում է իր մէջ։ Միւս տէրութիւնները գործ չունին խառնւելու որ և է պիտութեան նրբքին գործերին, նորա մի այլ տէրութեան, այսպէս ասած, ընտանեական գործերին միջամտելու իրաւունքը չունին։ Եյսպէս օրինակ երբ 1903 թ. մայիսի 29-ին Սերբիայում դաւգիրները սպանեցին թագաւորին և թագուհուն ու Սերբիական գահը բարձրացրին հակառակ տոհմի անդամին, ներկայ Պետար թագաւորին, Միջազգային միութեան միւս անդամները լուռ վկաներ եղան կատարւող դէպքերին և որ և է կերպ շմիջամտեցին Սերբիայի ներքին գործերին։ Տէրութիւնները շէին միջամտի և այն ժամանակ, եթէ Սերբիական ազգը զրա հետ միասին և փոխէր իր երկրի կառավարութեան վարչական ձեր և Սերբիային այլ բաղաքական կազմակերպութիւն

տար, Այսպէս ուրեմն, եթէ նոր կազմւած մի տէրութիւն ընդունակ է մի անկախ տէրութիւն կազմելու և կարսղ է տանել այն բարօր պարտաւորութիւններն ու իրաւունքները, որ նրա վրա գրւում է իրր միջազգային միութեան մի անդամի վրա, նա կարիք չունի և կարսղ է շատ էլ շաղասել, որ միութեան միւս անդամները պաշտօնապէս ճանաչեն իր զոյութիւնն անպատճառ։ Նոր տէրութիւնը ճանաշւելու կամ ընդունելու համար բաւական է և այն, որ նա իրր տէրութիւն զոյութիւն ունի, ուրեմն ընդունւած է անդամ միջազգային միութեան։ Նոր տէրութիւն ճանաշւելու այդ սկզբունքը պաշտօնապէս ընդունեց 1881 իւնի 10 օնդունում կայացած տէրութիւնների ներկայացուցիչների ժողովում։

Միջազգային միութեան անդամները որ և է նոր կազմւած տէրութիւն ճանաշելու զործում կանոնած են երկու ծանր խնդրի առաջ, եթէ որ և է տէրութիւն շտապի ճանաշել մայր երկրից անջատւած նոր տէրութիւնը, գրանով զժզոհութեան պատճառ տւած կլինի այն տէրութեանը, որից այդ նոր կազմւաղ տէրութիւնն անջատւում է, այդ զժզոհութիւնը կարսղ է այնպիսի շափեր ընդունել, որ պատերազմի առիթ դառնայ։ Միւս կազմից էլ, եթէ ուշ ճանաշի նոր առաջ եկող տէրութեան զոյութիւ-

նր, դա կարող է այդ նոր տէրութեան կողմից  
իրը թշնամական մի գործողութիւն կամ վե-  
րաբերմունք նկատւի, որ ցանկալի չէ և ոչ  
մի դէպքում, և որը կարող է երկու տէրու-  
թիւնների փոխադարձ շահերին աննպաստ լի-  
նել։ Այդ բանն ՚ի նկատ առած, միջազգային  
սովորութիւնըն որ՝ տէրութեան գոյութիւնն ըն-  
դունելու համար երկու զլիսաւոր պայման է ՚ի  
նկատ ունենում, 1) երբ նոր տէրութիւնն ունի  
քաղաքական անկախ կազմակերպութիւն և եր-  
կիրը կառավարող հաստատուն իշխանութիւն։  
և 2) երբ նա կը յայտնի թէ ընդունում է միջազ-  
գային իրաւունքի մշակած կարգերը և նրանց  
հիմամբ իր վրա դրած պարտաւորութիւններն  
ու իրաւունքները։

Բերլինի 1878 թ. Վեհաժողովը միջազ-  
գային յարաբերութիւնների մէջ նոր տէրու-  
թեան գոյութիւնը ընդունելու գործում նոր  
սովորութեան համարեալ թէ սկիզբը կրեց։ Այդ  
ժողովը նոր տէրութիւններ կազմելու և նրանց  
գոյութիւնը ընդունելու միջազգային առաջի ժո-  
ղովն է։ Ռուս-Ժուլիանական պատերազմից յետոյ  
Բերլինի Վեհաժողովի դաշնագրով անկախ և  
նոր տէրութիւններ ճանաշւեցին Տաճկաստանից  
անջատւած Սերբիան, Ռումինիան և Սե-Լեռան  
իշխանութիւնը։ 1884—85 թ. Բերլինիան մի  
այլ միջազգային ժողով Աֆրիկայի «Կոնգո» կոչ-

ւած անկախ տէրութիւնը ճանաչւեց։ Այսպիսի համաժողովները սակայն, միջազգային իրաւունքի կազմից նոր առաջ եկադ տէրութեան գոյութիւնը ճանաշող իր մի հիմնարկութեան, մի մարմին չի ճանաչւում, որ լիազօրութիւն ունենար ամեն դէպքում հաստատել նոր կազմւած տէրութեան գոյութիւնը ու նրա այդ գործողութիւնը պարտադիր ճանաչէր միջազգային միութիւն բոլոր անդամների համար։ Առաջ բերածս օրինակները՝ գէպքեր են միայն, ու յատուկ նշանակութիւն ունին։

Նոր առաջ եկած տէրութեան ընդունելու գործում իւրաքանչիւր պետութիւն վարւում է ըստ իր հայեցազութեան և իր շահերի։ Այսպէս, Խոտալական միութեան պատերազմի ժամանակ, 1860 թ., երբ զեռ նիազօլսեան թաղաւորը չէր հրաժարւել իր իրաւունքներից, ու իրը թաղաւոր զեռ գտնւում էր իր երկրում, Մեզլիան շտապեց ընդունել Խոտալական անկախ միութիւնն իրր արդէն կազմակերպւած տէրութիւն՝ Սափյեան տան գահի՝ Սարգինեայի թաղաւորի զլիսաւրութեամբ։ Կամ երբ 1827 թ. Թուսաստանը, Փրանսիան և Մեզլիան ընդունեցին Յունաստանի անկախութիւնը, չնայելով այն հանգամաներին, որ Թուբրիան չէր էլ զեռ մտածում հրաժարւել իր ծայրագոյն իրաւունքներից յունակուն իր այդ նահանգի վրա։

Եյսուեղ հարկաւոր ենք համարում տսել,  
որ միջազգային միավոթեան կողմից որ և է նոր  
տէրութեան զայռութիւնը ճանաչելը շի տալիս և  
ոչ մի երաշխառ սրութիւն, որ այդ նոր կաղ-  
մած տէրութեան անկախութիւնն անձեռնմխե-  
լի է, որ նա երկար կեանք կարսդ է ունենալ.  
զա նրա զործը չէ: Տէրութիւններն ինչպէս  
այսօր ճանաչել են նոր կաղմած որ և է տէ-  
րութեան զայռութիւնը նոյնպէս էլ վաղը կըն-  
դունեն նրա կուլ զնալը մի այլ տէրութեան,  
կամ նրա միանալը մի այլ տէրութեան հետ՝  
մի դաշնակցութիւն կաղմելու համար: Եյսպէս,  
չարաւային Աֆրիկայում զայռութիւն ունեին  
իրենց խաղաղ կեանքով անկախ երկու նոր  
տէրութիւններ—Տրանսվաալի և Օբանի հասա-  
րակապետութիւնները: Ամբողջ քաղաքակիրթ  
աշխարհն ընդունում էր նրանց ինքնիշխան  
զայռութիւններ: Մի օր Ենդլիական առիւծը ցան-  
կացաւ կուլ տալ դրանց, և կուլ տւեց: Նախ-  
կին այդ երկու հասարակապետութիւններն  
այսօր կաղմում են մի այլ անկախ տէրութեան—  
Ենդլիայի մի մասը: Դոցա անկախութիւնն ըն-  
դունող տէրութիւններն, այսօր ընդունում են  
նրանց միանալն Ենդլիային:

Միջազգային միավոթիւնն այդ ընդհանուր  
օրինքից բացառութիւններ անսամ է, օրինակ.  
1856 թ. Թուս-Տաճկական պատերազմից յետոյ,

Փարիզեան վիճաժողովին մասնակցող եւրոպական տէրութիւնները երաշխաւորեցի Ցածկաստանի անձեռնմխելիութիւնը. Նոյն վիճակի մէջ է համարեա այժմ 2ինաստանը, որի ամբողջութիւնը պահպանելու երաշխաւորութեան համար այնքան ջանքեր են անում միջազգային կոնցերտի անդամները:

---

II

Դլուիս երկրորդ, — Տէրութեան հիմնական իրատնքները. — Անկախութեան կամ ինքիշխանութեան իրաւունք. Զանազան ձեի քաղաքական կազմակերպութիւններ, Ինքնիշխանութեան դերը պետութեան ներքին կեանքում. Ներկայացուցիչներ նշանակելը, պատերազմ յայտարարել և հաշտութիւն կապել.

Ամեն մի հիմնարկութիւն ամեն մի անհատունին իրաւունքներ, որոնցով պայմանաւորւում է նրանց կեանքը, զոյութիւնը և փոխազարձ յարաբերութիւնները շրջապատող հիմնարկու-

թիւների և անհատների հետ։ Նոյնն է և տէրութիւնը։ Նա էլ իր միջազգային միութեան մի անդամ ունի հիմնական իրաւունքներ և պարտաւորութիւններ։ Նրա հիմնական իրաւունքներն են, մէկը նրա զոյութեան իրաւունքն է, իսկ միւսը պայմանագրերով կամ դաշնագրերով ձեռք բերած իրաւունքներն են։ Առաջին գեղքում իրաւունքը ծագում է տէրութեան էտթիւնից։ Նա մի միջազգային օրէնքով չի սահմանւում։ Եյդ իրաւունքը էական է, կարիք չունի կողմնակի տէրութիւնների պաշտօնապես ճանաշելուն և շճանաշելուն։ Նա կազմում է տէրութեան հիմք, առանց այդ իրաւունքի տէրութիւն զոյութիւն չի կարող ունենալ։ Նա տռանց այդ իրաւունքի միջազգային միութեան անդամ լինել չի կարող։ Եյդ հիմնական իրաւունքը տէրութեան անկախութիւնը, ինքնիշխանութիւնն է, որ ընդհանուր է բոլոր տէրութիւնների համար, որը տալիս է նրանց ազատութիւն իրենց ներքին կեանքի խնդիրները կարգաւորելու զարձում և ազատութիւնն իրենց արուաքին յարարերութիւնների մէջ։

Մի մարդ որբան էլ ազատ լինի, որբան էլ ինքնիշխան լինի, այնուամենայնիւ նա մշտական յարարերութեան մէջ է շրջապատող միջնավայրի հետ։ Նա ամեն օր անընդհատ ընդհարման մէջ է իր շահերով, իր պահանջներով

և իր իրաւունքներով ու պարտաւորութիւններով։ Ինչ որ մարդն է հասարակութեան մէջ, նոյնն է տէրութիւնը մարդկութեան ընտանիքը կազմող տէրութիւնների մէջ, այսպէս ասած, միջազգային միութեան մէջ։ Եթէ մի տէրութիւն չի ուզում փակւել իր մէջ, եթէ նա չի ցանկանում իր սահմաններից դուրս բան ճանաչել, մի խօսքով եթէ նա չի ուզում Զինաստանի նման հազարաւոր տարիներ քնել ու քարանալ, նա իր զոյութեան շահերի, իր առաջադիմութեան համար պարտաւոր է և պէտք է մտնէ միւս տէրութիւնների հետ յարաբերութեան մէջ։ Ահա այս յարաբերութիւնների հիման վրա կազմում է տէրութեան երկրորդ հիմնական իրաւունքը՝ հազորպակցութեան կամ յարաբերութեան իրաւունքը։

ա. Ինքնիշխանութիւն, — Տեսնենք թէ տէրութեան ինքնիշխանութիւնից ինչ իրաւունքներ են բղխում։ Մենք արդէն ասել ենք, որ միջազգային իրաւունքը տէրութեան ներքին կեանքով չի զրագում, զա պետական և քաղաքացիական իրաւունքների զործն է, այլ զրագում է նրա արտաքին յարաբերութիւններից ծագած խնդիրներով։ Բայց նախքան դրանց անցնելը, կարենոր ենք հաշւում պետութեան անկախութիւնից բղխած հիմնական իրաւունքները լրիւ կերպով պատկերացրած լինելու հա-

մար, համառօտ կերպով անցնել այն բոլոր  
ընորոշիչ զծերը, որոնցով արտայայտում է  
նրա նշանակութիւնն իր ներքին կեանքի հա-  
մար իր ամեն տեսակի ասպարէզներում:

Անել ենք արդէն, որ եթէ պետութիւնն է,  
ուրեմն նա անկախ մի միջազգային միութիւնն է.  
Աակայն իրականութեան մէջ զոյտութիւն ունին  
պետութիւններ, որոնք անկախ են որոշ աս-  
տիճանի. Այդ շարք տէրութիւնները բաժան-  
ած լինելով մի այլ պետութիւնից, դեռ իրենց  
լապը չեն կտրել նրանից, վաստակի իրաւունք-  
ներով և պարտաւորութիւններով. Այսպէս օրի-  
նակ, 1878 թ. կազմելով բոլղարական ան-  
կախ իշխանութիւնը, նա բոլորովին շզատեց  
ժուրքիայից. լինելով անկախ իր ներքին քա-  
ղաքական կազմակերպութեան ամենատեսակ  
նիդիբներում, միևնոյն ժամանակ նա զտնւում  
է. Օսմանեան կայսրութիւնից որոշ կախման  
մէջ. Այսպէս, բոլղարական իշխանի հաստատու-  
թիւնը Թուրքիային է վերապահած Բերլինի  
դաշնազրով մեծ տէրութիւնների համաձայ-  
նութեամբ.

Նոյն հիմունքներով զոյտութիւն ունին Եպիպ-  
տոսի Խեղիվութիւնը և անցեալ դարի վերջին  
Օսմանեան կայսրութիւնից անջատած Կրէտէ  
կղղին. Այս և սրանց նման բոլոր զէպքերում,  
այդպիսի կախման մէջ զտնւելլ ներկայացնում

է, միջազգային իրաւունքի տեսակետից, ոչ  
ընական, կանոնաւոր դրութիւն։ Եյդ տեսակ  
կախումն ունենալը մի անցազական շրջան է.  
դեպի կատարեալ անկախութեան անցնելու,  
որովհետեւ այդպիսի տէրութիւններն ուշ թէ  
շուտ լիովին կը բաժանեին գերիշխող տէրու-  
թիւնից ու կը կազմեն անկախ—ինքնորոյն տէ-  
րութիւններ։

Միջազգային յարաքերութիւնների մէջ պի-  
տութեան ինքնիշխանութեան հիմնական իրա-  
ւունքից ծագում են։ —

1. Եւրաքանչիւր տէրութիւն իրաւունք  
ունի ընտրել իր համար կառավարութեան որ  
և է ձե, որ համապատասխան լինի իր պատ-  
մական կհանքին, իր ամրագութիւնը կազմող  
ազգի կամ ժողովրդների քաղաքական և ազ-  
գային ձգառւմներին, բնաւորութեանը, քաղա-  
քակրթութեան աստիճաններին և նրանցից  
բարեած պահանջներին։

Ներկայ քաղաքակիրթ ազգերի կեանքն և  
կառավարութեան եղանակները ցոյց են տալիս,  
թէ որքն բազմատեսակ կերպով կարող են  
արտայայտել ժողովուրդների և պետութիւն-  
ների ինքնիշխանութեան կամ անկախութեան  
սկզբունքները։ Այսպէս, ներկայումս մենք ակա-  
նատես ենք քաղաքական կազմակերպութեան  
հետեւալ ձեերին։ 1) Միահեծան կայսրութիւն.

2) Սահմանադրական միապետութիւն. 3) Հասարակապետութիւն. 4) Դաշնակցական հանրապետութիւն և 5) Բռնապետութիւն. Ըստսաստանում ենքնիշխան կայսրութիւն է, ուր երկրի կառավարչական, օրէնսդրական իշխանութիւնը կենդրոնացած է Միապետի անձի մէջ, որ այդ իր իշխանութիւնն իրագործում է ստորագիր, իր կողմից սահմանւած մարմինների միջոցով. Գերմանիայում, Գերմանական բոլոր տէրութիւններից կազմւած դաշնակցական սահմանադրական կայսրութիւն է, ուր երկրի օրէնսդրական ուժն և իրաւոնքը կենդրոնացած է դաշնակից տէրութիւնների ներկայացուցիչներից կազմւած պարլամենտի մէջ. Բելգիան, Շվից-Նորվէգիան, Աւստրիական կայսրութիւնը, Դանիան, Իտալիան, Իսպանիան, Պորտուգալիան և այլ մանր միապետական կազմ ունեցող տէրութիւնները՝ սահմանադրական միապետութիւններ են. Սահմանադրական միապետութիւնների մէջ Շնդլիական թագաւորութիւնը, ազատ հիմնարկութիւնների այդ պատմական երկիրը, մի առանձին և ինքնուրոյն տեղ է ըստում, ուր երկրի օրէնսդրական և վարչական ամբողջ կազմը յենւում է ազգի ներկայացուցիչների կամքի արտայայտութեան վրա, ուր երկիրը կառավարող մի նախարարութիւն չի կարող գոյութիւն ունենալ, եթէ նա ազգի ներ-

կայացու ցիշների ժողովում-պարլամենտում ձայների բազմութիւնն չունի իր կողմք:

Փրանսիայում հասարակապետութիւն է, ուր երկրի օրէնքներով տէրութեան անկախութեան կամ ինքնիշխանութեան իրաւունքը ներկայացնում են պատգամաւորների ժողովը, սենատը և հանքապետութեան նախագահը, ուր երկրի կառավարութիւնը դրւած է ընդունակ ընտրական սկզբունքների վրա, ուր, այլ կերպ ասած, տէրութիւնը ներկայացնում է ինքը՝ ժողովուրդը՝ տէրութիւնը բաղկացնող անհատների միութիւնը. Եզրակաց է առհասարակ բոլոր հանքապետական երկրներում:

Դաշնակցական հասարակապետութիւն են չիսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, Զուիցերեան, որ ներկայացնում են մաներ, իրենց ներքին կեանքի մեջ իրարից համարիա թէ անկախ ժողովրդապետութիւնների մի դաշնակցութիւն, իր դաշնակցական բարձր ժողովով և նախագահով:

Եստեղ հարկաւոր ենք համարում աւելացնել, որ մենք խօսում ենք ընդհանուր ձեւերի մասին և ոչ մանքամասնութիւնների, որպեսզում մի ընդհանաւր քաղաքական կազմ ունեցող տէրութիւնների օրէնքները տարրերւում են իրա-

րից, Մեր նպատակից դուրս է այդպիսի մանրամասնութիւնների մէջ մտնելը:

Բռնապետութեան կամ ահսահման միապետութեան ամենայայտնի օրինակ կարող է ծառայել Օսմանեան կայսրութիւնը, Պառավարութեան այդ ձևերը միանգամից չեն ծագել, այլ աջորդաբար, առանց մեծ թոփչքների: Ամեն մի կառավարութեան կազարական կազմակերպութիւնը պիտի հոգալատասոխանէ իր ամրողջութիւնը կազմով ժողովուրդների պատրաստութեանը, նրանց քաղաքական հասունութեանը: Եհա այդ է զլխաւոր պատճառներից մէկը տէրութիւնների տարրեր քաղաքական կազմակերպութիւններ ունենալու, տարրերութիւն, որ ներկայացնում է երկու իրար վերին աստիճանի աշխի ընկերող հակազիր ծայրեր: Մի կողմից անսահման բռնապետութիւն, միւս կողմից ամենաշնորհարձակ իրաւունքներով ժողովրդապետութիւն: Միջազգային տեսակէտից, շատ առաւելութիւններ է ներկայացնում, ու թիրիս ամենից ցանկալին լինի, որ մարդկութիւնը քաղկացնող բոլոր տէրութիւնները աւել կամ պակաս իրար նման քաղաքական կազմակերպութիւն ունենային:

Ենկախութեան կամ ինքնիշխանութեան իրաւունքի ֆունկցիան, ինչպէս տեսանք, մի տէրութեան մէջ, երբեմն բաժանում է տէ-

տութիւնը կազմող քաղկացուցիչ մասերի և  
պետական բարձր իշխանութեան մէջ, այդ եր-  
կրի օրէնքների գորութեամբ։ Այդ տեսակ տէ-  
րութեան ինքնիշխանութիւնը ներկայացնում է  
մի բարդ քաղաքական կեանքի բարձր զարգաց-  
ման հասած լինելու ապացոյցն է։

2. Ինքնիշխանութեան էռութիւնից ծա-  
զում է պետութեան այն իրաւունքը, որով նա  
կարգաւորում է իր երկիրը և իր ներքին կեան-  
քի բաղմատեսակ խնդիրները, որով նա իր  
ներքին կեանքի պահանջներին բաւարարութիւն  
տալու համար, պետութիւնը կազմող անհատ-  
ների և հիմնարկութիւնների կանոնաւոր զար-  
գացման, և փոխադարձ յարաբերութիւնների  
կանոնաւոր ընթացքի համար օրէնքներ է հը-  
հրատարակում և պարտադիր անում բոլորի  
համար։ Ամեն մի տէրութեան մէջ պետութիւնը  
սեփականատէր է իր հոգի և իր բռնած տա-  
րածութեան վրա, ուստի և նրա հրատարակած  
օրէնքները պարտադիր են ոչ միայն այդ երկրի  
համար, այլ և այդ երկրի վրա գտնած իրե-  
ղիների վրա, առանց նայելու, թէ արդօք նա  
պատկանում է իր ժողովրդին, թէ օտար տէ-  
րութիւնների հպատակների։ Այս տեսակէտից  
իրաքանչիւր տէրութեան բռնած երկրամասը  
անձեռնմխելի է։ Միջազգային իրաւունքով ոչ

մի այլ տէրութիւնք իրաւունք շունի խախտել որիէ տէրութեան ինքնիշխանութեան իրաւունքները իրեն պատկանած երկրի — տարածութեան նկատմամբ։ Ոչ մի այլ տէրութիւն իրաւունք շունի որիէ գործողութիւն կատարել մի այլ տէրութեան երկրում, առանց այդ մասին առանձին թոյլատութեան։ Օտար տէրութեան գորբն իրաւունք շունի մտնել հարեան երկրի սահմաններից ներս, իւրաքանչիւր այդպիսի գործողութիւն այդ երկու տէրութիւնների մէջ խաղաղութիւն տիրած ժամանակ, կնկատի իրր բռնի մի գործողութիւն, լեռնամական մի քայլ, որ կարող է առաջ բերել ծանր հետեանքներ։ Ամեն մի այդպիսի դեպքի համար, երբ օրինակ հարկաւոր է երկրի սահմաններից զուրս զանւած յանցաւորին ձերբակալել մի այլ տէրութեան հողի վրա, այդ առթիւ տէրութիւնները նախընթաց համաձայնութիւններ պիտի կայացնեն, զաշնազրեր պիտ կնքին, որոց հիման վրա անարգել կերպով կարաղանան յանցազործերին ձերբակալել և յանձնել իրար։ Եյդպիսի զաշնազրեր շատ տէրութիւններ ունին կատած փոխադարձաբար։

Եյդ օրէնքից իրր բացառութիւն, որիէ տէրութեան մէջ զանւող օտար տէրութեան պետերը, ներկայացուցիչները դեսպանները,

Նիւպատոսներն և այլն այդ տէրութեան օրէնքներին շեն ենթարկեռում, այդ օրէնքների աղբեցութեան շրջանից դուրս են: Օտար տէրութեան օրէնքները շեն զործադրում նաև իր հոգի վրա դանւած այլ տէրութիւնների ներկայացուցիչների տների նկատմամբ, ուր նորա են բնակւում, որովհեան միջազգալին օրէնքով այն տեղն ուր բնակւում է որևէ տէրութեան ներկայացուցիչ կազմում է այդ տէրութեան սեփականութիւնը, կամ այլ կերպ ասած ներկայացնում է նրան վորք չափով: Բացի դրանից կան նաև այլ մի շաբք միջազգային պարտաւորութիւններ, որոնք գարձեալ շեն ենթարկեռում որևէ տէրութեան ինքնիշխանութեանը՝ միջազգային սովորութիւնների և դաշնապիրների դօրութեամբ:

3. Ուրիշ տէրութիւնների հետ յարարերութեան մէջ մտնելու համար ամեն մի տէրութիւն նշանակում է իր կողմից ներկայացուցիչներ, որոնք իրենց նշանակով տէրութեան կամքի և ցանկութիւնների արտայայտիչը պիտինին օտար պետութեան կառավարութեան առաջ: Օտար տէրութիւնների մօտ տէրութիւնների ներկայացուցութիւնը լինում է զանազան կարգի և իրաւասութեան: Մի երկրի բուժե պլատոոր ներկայացուցիչը, որին ենթարկեռում են մեացած բոլոր ներկայացուցիչները,

կոչում է զիսպան։ Իւրաքանչիւր զետպան կամ զետպանատուն ունի իր խորհրդականները, քարտուղարները, նրանց օգնականները, թարդմանները, զինուորական կցորդները և այլ ստորին զիւանատան ծառայողների մի շարք։ Բացի զբանից օտար տէրութիւնների նշանաւոր քաղաքներում, բայց նամանաւանդ նաւահանգիստ ունեցող քաղաքներում տէրութիւններն ունենում են իրենց զլիսաւոր հիւպատոսր, փոխ հիւպատոսները և քաղաքական գործականները։ Դեսպանների և առհասարակ օտար տէրութիւնների քաղաքական ներկայացուցիչների զերը շատ ծանր է և պատասխանատվութիւնը շատ մեծ, ուստի և այդ պաշտօնի համար պիտի նշանակին այնպիսի տատրաստութիւն ունեցող մտրդիկ, որոնք կարողանան արդարացնել պաշտօնի ծանրութեամբ նրանց վրա զրած յոյսերը։

Դեսպան նշանակելուց առաջ, նախապես քանակացնեան մէջ են մտնում այն կառավարութեան հետ, որի մօտ որ մտադրուեմ են որ և է անձի զետպան նշանակել։ Ելու դէպրում իւրաքանչիւր կառավարութիւն, միջաղպային յարաբերութիւնների մէջ ընդունւած սովորութեան համաձայն կարող է համաձայնութիւն շատ առաջարկւած անձը առաջարկող պետութեան ներկայացուցիչ ճանաշել։ Նշանակւած

անձնաւորութիւնը դեսպան շընգունելու դէպ-  
րեր շատ են պատահել: Երբ Նիկոլայ և Կայ-  
սեր օրով Անգլիան դեսպան ուղեցաւ նշանա-  
կել Պետերբուրգում լորդ Պալմերուսին, որ  
յայտնի էր իր հակակրանքով դէսլի Ռուսա-  
տանը և թշնամական վերաբերմունքով դէսլի  
նրա Կայսրը, Նիկոլայ Լ-ը շընգունեց նրան  
դեսպան նշանակելը Ռուսատանում: Այդպէս  
էլ այդ նշանակումը չկայացաւ: Բացի դրանից  
չի կարելի դեսպան նշանակել 1) այն տէրու-  
թեան հպատակին, որի մօտ ուղում են դես-  
պան նշանակել նրան, 2) դատաստանավ արա-  
տաւորւածներին:

Իւրաքանչիւր նոր նշանակած դեսպան  
մտնում է իր պաշտօնի մէջ պաշտօնապէս այն  
ժամանակ, երբ ներկայացնում է իր տէրու-  
թեան հաւատարմագրերը այն տէրութեան  
պիտին կամ կառավարութեանը, որի մօտ  
ինքն է նշանակել դեսպան: Նոյն ձեռք էլ  
կատարում է դեսպանի հեռանալը, նա ետ է  
պահանջում իր հաւատարմագրերը, որից յիտոյ  
նա այլիս դեսպան չէ, այլ մի մասնաւոր մարդ:  
Ասացինք որ դեսպաններն ու առհասարակ քա-  
ղաքական ներկայացուցիչներն անձեռնմխելի  
են. բայց այն դէպրում եթէ որիէ մէկը նրան-  
ցից կը զօրծէ՝ այնպիսի յանցանք, որ նրա  
մնան այլիս այդ տէրութեան մօտ անհնար է,

նայելով դէպքին, կամ պահանջում են որ նո  
սո կանչւի և կամ ինքը — այդ տէրութիւ-  
նը նրան իր սահմաննրից հեռացնում է։ Այս-  
պէս ուրեմն ինչ տեսակ էլ լինի զեսպանի  
յանցանքը (քաղաքական, քրէական թէ քա-  
ղաքացիական) նու մնում է միշտ անձեռն-  
մխելի։

Քաղաքական ներկայացուցիչների համար  
մնում է ասել, որ զեսպաններն ու արտա-  
պարզ զեսպանութիւնները նշանակում են  
երկրի պետից կամ բարձր կառավարութիւնից.  
ուկ հիւպատոսներն ու փոխհիւպատոսները,  
ինչպէս և կցորդներն և այն նշանակում են  
սախարարները կամ երկրի պետի (Ռուսաստա-  
նում) հաստատութեամբ և կամ ուզգակի իրենց  
իշխանութեամբ։

4. Պետութեան ինքնիշխանութիւնից բլո-  
յոդ իրաւունքններից մէկն էլ պատերազմ  
յոյտարարելու և հաշտութիւն կաղելու իրա-  
ւունքն է։

Ահա համառօտ կերպով առաջ բերւած  
անկախութեան կամ ինքնիշխանութեան իրա-  
ւունքից բղխող այն իրաւունքների շաբարը,  
որ մի տէրութեան համար կազմում են հիմ-  
նական սկզբունքներ և որոնց հիման վրա  
հիւսում է որիէ տէրութեան քաղաքական  
կազմը իր ներքին կեանքի մէջ։ Ինչպէս այդ

իրաւունքից յութեան շուշ է գույս, որի  
բութիան իր զայտվածեան ընթացքում անընդհատ  
յարարերութեան մէջ է զանւում միւս տէրու-  
թիւնների հետ։ Այդ արտաքին յարարերու-  
թիւնների մէջ նա հիմնական երեք իրաւունք  
անի, այժմ անցնենք այդ իրաւունքների տե-  
սութեանը, որոնք միջաղզային իրաւունքի  
էական մասերն են կազմում։

Դրսի Արքուղի, — Ինքնապաշտպանու-  
թիւն, — Դրա համար ձեռք տանւած միջոցներ,  
պահպանողական և յարձակողական դաշնապրեր։  
Յառաջաղիւթեան կամ ազատ զարգանարու-  
իրաւունք, — Տնտեսական և արդինարերական  
խնդիրներ, զաղութներ ձեռք բերելու և եր-  
կրներ դրաւելու եղանակները։ Հաւասարու-  
թեան իրաւունք, — Միջաղզային յարարերու-  
թիւնների մէջ հաւասարութեան հիմնական  
սկզբունքը, տէրութիւնների տարրերութիւնը։

ա. Ենքնապաշտպանութիւն։ Ամեն անհատ  
իրաւունք ունի ինքնապաշտպանութեան և անար-  
դել զայտվածեան, զա անհատի անբռնաբարելի  
իրաւունքն է։ Միջաղզային յարարերութիւն-  
ների մէջ և նրա իրաւունքի տեսակէտից նոյն  
պայմանների մէջն է զանւում և զայտվածեան  
նոյն իրաւունքներն ունի տէրութիւնը։ Նրա  
համար ինքնապաշտպանութիւնն նշանակում է  
պահպանել իր երկրի ամրովչութիւնը և ան-  
ձեռնմխելիութիւնը՝ իր բոլոր մասերավ, իր

քաղաքական կազմակերպութեամբ, վարչական ձևով, ազգարնակութեամբ. և այն գէպրում եթէ վտանգ է սպառնում գրանցից մէկին կամ աէրութեան ամբողջութիւնը, հանդէս դուրս գալ սպառագանելու իր շահերը, իր իրաւունքները, և շթոյլտալ, որ դրանցից և ոչ մէկը ուանատակ կնան աւելի զօրեղի կազմից. շթոյլ տալ, որ թշնամի մի տէրութիւն ձգտի խախտել իր անկախութիւնը, իր բռնած երկրի ամբողջութիւնը և այլն և այլն. Եյս տեսակէտից, իւրաքանչիւր տէրութիւն, եթէ չի ցանկանում վտանգի ժամանակ անսպատրաստ լինել, սպառաւոր է բոլոր հարկաւոր միջոցներն ունենալ՝ նրան դիմաւորելու համար. Ինքնապաշտպանութեան համար իւրաքանչիւր աէրութիւն պիտի աշխատի կազմակերպել երկրի զինւորական ուժը. պիտի ձգտի զարգացնել իր ցամաքային և ծովային ինքնապաշտպանութեան բոլոր միջոցները ժամանակի դիտութեան և տեխնիքայի ցուցումներով. Նա պիտի զինւորական կրթութեան աստիճանը բարձրացնէ, զօրանոցներ, պատերազմական միջերանոցներ և նոցա պատրաստելու գործարաններ ունենայ, զէնքի պահեստներ, զինազործարաններ և այլն. Պիտի շինէ ամրոցներ, նաւահանգիստներ, պատերազմական նաւատորմ, մի խօսքով պիտի հոգ տանի ձեռք բերել և զարգացնել այն ա-

մենատեսակ միջոցները, որ անջրաժեշտ են երկրի ինքնապաշտպանութեան համար՝ որիէ վտանգի ժամանակ նրա պաշտպանողական դրութիւնը անթերի և տատրաստ զտնւելու համար։

Միայն զէնքը չէ որ միջազգային յարտրերութեան բարդելու ժամանակ գործ են զնում իրենց դատը պաշտպանելու համար։ Ըստ ցաւալի կլինէր, եթէ տարածայնութիւնները լուծելու համար միայն այդ բիրտ, կոպիտու բանի միջոցը զոյութիւն ունենար։ Բարերախտաբար միջազգային յարաբերութիւնների մէջ ծագած վէճերը, թիւրեմացութիւնները կտրպաւորելու գործում այդ բիրտ ուժի միջոցը այժմ բռնում է ամենավերջին տեղը։ Երկրի ինքնապաշտպանութեան համար, ինչպէս մենք այժմ տեսնում ենք, և այն ոչ առանց աջոպաւթեան գործ են զնում, բացի վերոյիշեալ բոլոր միջոցներից, նաև դաշնազրեր, որով երկու կամ աւելի պետութիւններ իրար հետ գրաւոր պայման են կնքում, օգնել իրար որիէ սպառնացող վտանգի ժամանակ։ Այդ դաշնազրերը լինում են պաշտպանողական, յարձակողական և յարձակողական-պաշտպանողական (մի դաշնազիւ՝ որով ՚ի նկատ է առնեսում երկու զէպքն էլ ՚ի միասին)։ Միջազգային յարաբերութիւնների բարդելու երկիւզից առաջ

եկած պաշտպանողական միայն նողատակ ունեցալ դաշնագիրը օրինաւոր, և խաղաղութիւնը ապահովելու և պատերազմների առաջն առնելու մի ոչ անհամակրելի միջոց է, եթէ իրօք բուն նողատակը ինքնապաշտպանութիւնն է, Դրա հակառակ յարձակողական նպատակ ունեցող դաշնագրերը անհամակրելի, անմարդասէր և եսկական նպատակներ առաջ տանելու միջոցներ են:

Ներկայումս կապւած դաշնագրերից յայտնի են 1) Երկպետեան դաշնակցութիւնը՝ Խուսաստանի և Թրանսեայի մէջ, 2) Եռապետեան դաշնակցութիւնը՝ Գերմանեայի, Աւստրեայի և Իտալիայի մէջ և 3) Ենգլիայի և Ճապոնեայի դաշնակցութիւնը:

Չատ գժւար է որոշ դիմ կամ սահմանքաշել, թէ առհասարակ մի որեւէ կապւած դաշնագիր պաշտպանողական է, թէ յարձակողական, Դրա ամենից լաւ որոշողը կեանքն է, իրականութեան մէջ դաշնագրերի գործադրութիւնն է, Իրականութեան մէջ շատ անգամ նաշէ յարձակողը կամ յարձակողական դաշնագիր կապողը, որ բարդութիւններ առաջ եկած դէպրում ամենից առաջ է սկսել պատերազմական գործողութիւնները, այլ նա, որ վերջնիս ստիպել, հարկադրել է դէնքի դիմել՝ պաշտպանելու իր ստիտակա'լ զնացող իրա-

տունքները, Սրանից պարզ է, որ եթէ դիցուք  
մի զոյդ տէրութիւն պաշտպանողական դաշ-  
նագիր են կնքել, իսկ մի ուրիշ զոյդը յարձա-  
կողական, ու չնայելով նտխմին զոյդի պաշտ-  
պանողական անուն կը ուղարկած կաշնազրին, նոքա-  
կամ նրանցից մէկը զոյտթիւն ունեցող ոչ մի  
հնար ձեռքից բաց չեն թուղնում համրերու-  
թիւնից հանելու յարձակողական դաշնագիր  
կնքող տէրութիւններին կան նրանցից մէկին:  
Եթէ վերջիններս ստիտւած լինին դիմել պա-  
տերազմական գործողութիւնների իրենց ինք-  
նապաշտպանութեան համար, ահա այս զէպ-  
քում, սոքա չեն, որ յարձակում են, կամ պա-  
տերազմի պատճառ են դառնում, այլ այն  
զոյդ տէրութիւնը, որ պաշտպանողական դաշ-  
նագիր էր կնքել: Ակներեւ է, որ այդպիսի զէպ-  
քերում պատերազմական գործողութիւններն  
առաջ սկսովի արարմունքը կամովի չէ, ստիտ-  
ւամբ է. իսկ զաշնազրերի այդպիսի գործա-  
զրութեամբ երեան կուգայ ոս իրավեռ հակա-  
ռակն են եղել կապւած դաշնազրերի նպատակ-  
ները:

Այժմ տեսնինք թէ, հարհան տէրութիւնը  
ինչպիսի գործողութիւններ կարող է ձեռնար-  
կել, որ միւս տէրութիւնն ստիտւած լինի ծայ-  
րահեղ զէպքում զէնքի դիմել: Այսպէս օրինակ.  
պատերազմ չկայ, իսպաղութիւն է, և յան-

կարծ տռանց որիէ յայտնի պատճառի, ինչ ինչ  
հանգամանքներից զրդած, հարևան տէրութիւն  
իր զօրքերը կենդրանացնում է սահմանի վրա:  
Գուցէ այդ տէրութիւնը իրօք և ոչ մի նպա-  
տակ էլ շունի թշնամական զօրծողութիւն-  
ների գիտելու, սակայն այն քայլը, որ նա  
խաղող ժամանակ իր պատերազմական ուժե-  
րը կենդրուացնում է սահմանի վրա, բաւտ-  
կան է արդէն, որ նկատի իրը թշնամական  
մի ցոյց, աւելին կասենք, թշնամական մի զոր-  
ծողութիւն։ Եյդպիսի դէպքերում սահմանը  
զօրքեր կենդրուացնող տէրութիւնը պարտա-  
ւոր է անկեղծ կերպով քաշարարութիւն և զը-  
րաւոր երաշխաւորութիւն աալ՝ իր այդ քայլի  
մասին։ Հակառակ դէպքում հարևան տէրու-  
թիւնն էլ իր կողմից իրաւունք ունի նոյն մի-  
ջոցները զօրծ զնել նրա դէմ՝ կենդրուացնե-  
լով իր զօրքերը հարևան նոյն քայլն անսղ տէ-  
րութեան սահմանի վրա։

Համանման հանգամանքներից առաջացած  
միջազգային թիւրիմացութիւնների խաղաղ  
կերպով վիրչանալու դէպքում, առաջ այն տէ-  
րութիւնը պարտաւոր է ետ քաշել իր զօր-  
քերը սահմանի վրայից, որ տէրութիւնը որ  
առաջ է կենդրուացրել իր այդ ուժերը հարև-  
անի սահմանի վրա։ Եյդպիսի դէպքերում զօր-  
քերն ետ են քաշում նաև մաս առ մաս և

փոխնէփոխ, այդ տռթիւ կապած տռանձին համաձայնութեան տրամադրութեամբ։

Ինքնապաշտպանութեան համար տռաջ եկած, կամ առհասարակ որևէ պատերազմի դէպքում, պատերազմողներից և ոչ մէկն իրաւունք չունի, միջազգային համաձայնութեամբ շեղոք ճանաշւած տէրութեան շեղոքութիւնը խախտել ու մտնել նրա երկիրը, լինի այդ բանը նոյն այդ շեղոք տէրութեան թէկուզ կամքի համաձայն։ Այսպէս օրինակ, Եւրոպական որևէ պատերազմի ժամանակ Զուփցերիայի կամ Բելգիայի հողի վրա մուտք գործելը կլինէր մի մեծ շարադրութիւն և միջազգային իրաւունքի խախտումն։

Միջազգային յարաբերութիւնների մէջ պակաս շնորհ դէպքեր, նամանաւանդ 19-րդ դարի քաղաքական կեանքից, երբ որևէ տէրութեան ինքնապաշտպանութեան և անկախութեան իրաւունքների հակառակ, դաշնագրերով պարտաւորեցրել են քանդել ամրոցներ, շաղանել որոշ տեղերում նաւատորմ, նոր ամրոցներ շկառուցանել և այլն և այլն։ Անկասկած է, ձեռք առնեած այդ միջոցները դէմ են ազգային ինքնաճանաշութեանը ու պատւին, սակայն իրրե դաշնագրերով յանձն տռած պարտաւորութիւններ՝ պարտաւորական են։ Այսպէս Խրիմի պատերազմից յետոյ 1856 թ. Փա-

րիդի վեհաժողովով արգելւեց Ռուսաստանին  
նաւատօրմ պահել Սև ծովում և Սևաստազո-  
ռում ամրոցներ կառուցանել: 1878 թ. Բերլինի  
վեհաժողովով արգելւեց Բոլղարեային նոր ամ-  
րոցներ կառուցանել, նոյնը և Սև Լեռան իշ-  
խանութեանը: Նոյն Բերլինիան դաշնազրով  
Ռուսաստանին պարտաւորեցրել էին Բաթումի  
անել ազատ նաւահանգիստ (Պօրտօ-Ֆրանկօ) ու  
ծովային ամրութիւններ չկառուցանել այնտեղ:  
Ռուսաստանն այս պարտաւորութիւնից հրա-  
ժարեց 1886 թւին:

Սրա հակառակ պատահում են դէպքեր,  
երբ սրին, ազգի ինքնապաշտպանութեան իրա-  
ւունքի դէմ ձեռք առած միջազգային համա-  
ձայնութեամբ մասնաւոր միջոցները չի նկատ-  
ում և չի կարող նկատել ընդդէմ և վիրա-  
ւորական ազգային պատեին, այլ մի միջոց,  
որով վերացում է պատերազմի մշտական առիթ  
ներկայացնող մի պատճառ: Այսպէս, 1867 թ.  
Էօնդոնի վեհաժողովով որոշեց քանդել Լիւկ-  
սիմբաւրգի ամրութիւնները, որ քիչ էր միա-  
ցել Ֆրանսեայի և Պրուսեայի մէջ արիւնահեղ  
պատերազմի առիթ լինէր:

ը. Յառաջադիմելու—ազատ զարգանա-  
րութեամբ. — Այդ իրաւունքից բնութեան  
մէջ չէ զրկւած և ոչ մի անհատ ծառ ու ծա-  
զիկ, մարդ ու անասուն ազատ են իրենց ան-

հատական կեանքի մէջ աճելու, զարդանալու, մի իրաւունք, որ ընութիւնը դրել է նրանց էութեան մէջ՝ անբաժան և անբռնաբարելի կերպով։ Ինչ որ է մարդը հասարակութեան մէջ, նոյնն է և տէրութիւնը միջազգային միութիւնը կազմող տէրութիւնների մէջ, մի խօսքով առած՝ մարդկութեան մէջ։ Տէրութիւնն էլ իրը անդամ այդ ընտանիքի, օգտը ւում է քաղաքականապէս և անտեսապէս զարգանալու և առաջադիմելու իրաւունքներով։

Որեէ տէրութիւն, կամ տէրութիւններ իրենց քաղաքական զարդացման ասպարիզում իրաւունք ունին ընտրելու նոր, կամ փոխելու հին այն քաղաքական կազմը կամ կառավարութեան եղանակը, որ իրեն այսովէս կամ այնովէս անհամապատասխան և անբռնաբար է։ Նա լիազօր է միանալ այլ պետութիւնների հետ, բաժանելի իր մայր տէրութիւնից և այն և այն։ Ինչպիսի ազատաւթիւն որ վայելում են տէրութիւններն իրենց քաղաքական իրաւունքի զարդացման ասպարիզում, նոյնպիսի ազատութիւնով էլ օգտը ւում են իրենց անտեսական խնդիրներն ու միջազգային յարաբերութիւններ այդ խնդրի առթիւ կարգաւորելիս, որիշ տէրութիւնների հետ համաձայնութիւններ կնքելիս, գաշնապրեր քանդելիս, մարսեր նըշտնակելիս, քշադնելիս կամ աւելացնելիս ու

իսպառ վերցնելիս և այլն և ալին, Տէրութեան ինքնիշխանութեան այդ իրաւոնքը պարտաւորում է հոգ տանել երկրի տնտեսական վիճակը բարձրացնելու, առևտութը, արդինարերութիւնը ծաղկեցնելու միջոցներ ձեռք առնելու, Եթէ հարկաւորութիւններ կայ՝ պահպանուզական կամ հովանաւորող մաքսերով օժանդակելու, զաղթավայրեր ձեռք բերելու, իր արդինազործութեան համար կամ շուկաների մասին հոգ տանելու, առևտրական նաւատորմ ստեղծելու, ճանապարհների հաղորդակցութիւնը հեշտացնելու՝ երկաթուղու զծեր և ջրանցքներ անցկացնելով, զետերը նաւազնացութեան յարմարեցնելու և այլն և այլն: Ահա համարեա այն բոլորն ինչ որ անելու է մի տէրութիւն իր արդինարերութիւնը ծաղկեցնելու և տնտեսապէս առաջադիմելու համար առհասարակ:

Տէրութիւններն իրենց երկրի արդինարերութիւններն ու առևտութը զարգացնելու և իր զործաբանական և այլ արտադրութիւնները տարածելու համար երկու հիմնական ոկզրունքի են հետեւմ 1) ազատ առևտրի ոկզրունքին, որի միակ համարեա ներկայացուցիչն Անդլիան է, և 2) մաքսային պահպանողական կամ հովանաւորող ոկզրունքին: Ազատ առևտութն արտահանելու և ներմուծելու համար

ոչ մի մարս չի ճանաչում. այդտեղ զլխաւոր ուժը ազատ մրցումն է: Իսկ մաքսային սիստեմի մեջ, որ ձգտում է հովանաւորող միջոցներով երկրի արդիւնագործութիւնը զարգացնել, աչքի է ընկեռում երկու հակադիր շահեր: Միացեալ նահանգներում, ուր խիստ հովանաւորող մաքսային քաղաքականութեան են հետևում, երկրի զործարանական արդիւնագործութիւնը բարձրացնելու համար և սեփական չուկաներում օտար երկրների զործարանական և այլ արդիւնարերութիւնների՝ իր երկրի ապրաների հետ մրցման շդիմանալու զիտաւորաւթեամբ, զիմել և զիմում են հովանաւորող ուղղութեան՝ բարձրացնելով ներմուծուզ ապրաների մաքսերը: Միւս կողմից երկրի արդիւնարերութեան մի ուրիշ հարուստ ճիւղ—երկրագործային արդիւնարերութիւնը, հացահատիկների ահազին պաշար ունի, որի սպասելու զլխաւոր շուկան Եւրոպան է. իսկ սա մի արդիւնարերութիւն է, որ հովանաւորող մաքսային քաղաքականութեան կարիք չունենալուց զոկ, նաև իր շահերով հակառակ է զրան: Ահա մի երկրի արդիւնարերութիւն, ուր նրա երկու զլխաւոր մասերի շահերն իրար հակադիր են: Նոյն հակադիր շահերն են ներկայացնում զործարանական արդիւնարերութեամբ հարուստ Աւստրիան և հացահատիկ-

ների արդիւնաբերութեամբ հարուստ չունդարեան։ Եյս և համանման գէպքերում հովանաւրող մաքսային քաղաքականութեան հետեւզ տէրութեան մէջ իրար հակառակ շահեր են ներկայացնում երկրի արդիւնաբերութեան զանազան ճիւղերը, մինչ մէկը պահանջում է իր զարգացման համար պաշտպանողական միջոցներ, միւսն ընդհակառակը, իր արդիւնաբերութեան համար ազատ մրցման կողմնակից է։

Եյս բոլորից պարզ է, որ հովանաւրող մաքսային քաղաքականութեան նպատակը բուն երկրի արդիւնագործութեան մրցմանը օտար ասլրանքների շղիմանալն է։ Եյսուեղ պիտի ասել, որ մի երկրի արդէն կազմակերպւած արդիւնաբերութիւնը շպիտի վախենայ որիէ մրցումից. իսկ այն գէպքում, երբ մրցման համար նա դեռ խիստ թոյլ է, ճշմարիտ է, հայրենի արդիւնագործութիւնը հովանաւրող քաղաքականութեամբ պահպանում է, ձեռնարկներն օգտառում են, սակայն նախ, նորա աւելի վատ յատկաւթեան ապրանք են հասցնում սպառողներին և երկրորդ աւելի թանգ։ Բացի դրանից հովանաւրող մաքսային սիստեմը ձլդումն ունի աւելի ու աւելի բարձրանալու։

Մաքսայի հովանաւրող քաղաքականութիւնը երբեմն միջազգային յարաբերութիւնների մէջ այնպիսի լուրջ բարդութիւններ է,

տռաջ բերում։ Այդ բարդութիւններն առաջացնողը՝ երկու հարեան տէրութիւնների իրար զէմ զսրծ զբած մաքսային միջոցներն են։ Ինչպէս մի տէրութիւն իր ինքնիշխանութեան իրաւունքը պաշտպանելու ժամանակ, երբ հարեան տէրութիւնն իր սահմանի վրա զօրքեր է կենդրունացնում, որից ստիպւած նա էլ իր զօրքերն է, սահմանն ուզարկում, այլպէս էլ, եթէ մի հարեան տէրութիւն իր մաքսերն աւելացնում է հարեան երկրից ներս մուծւած ապրանքների վրա, միւս տէրութիւնը ստիպւած է լինում պատասխանել նոյն միջոցներով։ Եյտպիսի փոխադարձ ձեռք առած միջոցները առաջ են բերում մաքսային պատերազմ երկու հարեան տէրութիւնների մէջ։ Ճշմարիտ է, արիւն չի թափւում, մարդիկ չեն դոհւում, սակայն երբեմն նա կարող է այնպիսի սուր կերպարանը ստանալ, որ իսկական պատերազմի ոլտաճառ գտնայ։ 1890-ական թւականների սկզբներին եւրոպական միրանի տէրութիւններ գտնւում էին իրար մէջ մաքսային վտանգաւոր պատերազմի մէջ։ Եյդ մաքսային պատերազմներից մէկը Ռուսաստանի և Դերմանեայի մէջ էր (1892 թ.) միւսը Խոտելեայի և Ֆրանսեայի մէջ, որոնք սակայն խոզոկ վախճան ունեցան։ Առաջներս ցոյց են տալիս, որ մաքսերն աւելացնելու և առհաստ-

բակ մաքս նշանակելու գործում կայ մի եր-  
րորդ անձնաւորութիւն, որի շահերը շոշափ-  
ւում են զրահով. հետեարար որիէ տէրութիւն  
չի կարող առանց պատերազմի երկիւղի ան-  
վերջ կերպով բարձրացնել մաքսերը, զրա հա-  
մար կայ մի սահման, որից այն կողմն անց-  
նելն անհնար է:

Հավանաւորով մաքսային քաղաքականու-  
թեան պատճառով առաջացած շարիքներից  
մէկը մաքսանենպութիւնն է, որ մեծ շափերով  
կատարւում է սահմանադլուխներում և որի  
պատճառով, երկու հարեան տէրութիւններ  
յաճախ ստիպւած են լինում մտնել անախորժ  
զրագրութիւնների և վէճերի մէջ:

Նպատակից գուքս է այս համառօտ ակ-  
նարկներիս մէջ զրադւել մանրամասն կերպով  
մաքսային քաղաքականութեան խնդրով,  
որի համար մենք, խոստովանում ենք, հար-  
կաւոր մասնագիտական պատրաստութիւնը շու-  
նինք: Աւստի և անցնենք այս զլիսի վերջին  
խնդրին, որ վերաբերում է մի տէրութեան  
ձգտմանը՝ լայնացնել, ընդարձակել իր հոգային  
սեփականութիւնները:

Մենք արգէն ասել ենք, որ եթէ մի տէ-  
րութիւն իր բնական սահմաններին չէ հասել,  
աշխատում է իր հոգային տիրապետութիւն-  
ները հասցնել մինչի իր բնական ցանկալի

սահմանին, Բացի դրանից ամեն տէրութիւն, ինչպէս տեսանք, իր տռետրի ինչպէս և իր բուն երկրի ընակշութեան աւելացած մասերը տեղաւորելու համար զաղթավայրեր պիտի ձեռք բերէ և այն:

Միջազգային յարաբերութիւնների մէջ մեծ նշանակութիւն ունի այն խնդիրը, թէ ի՞նչ ձեռվ կարող է որեէ տէրութիւն իր սահմաններն ընդարձակել, իր տիրապետութիւնը տարածել երկրագնտի զանազան մասերի վրա, և առհասարակ ուժ հաշվին կարող են լինել այդ գրաւումները։ Միջազգային միութեան անդամները շեն կարող թոյլ տալ, որ որեէ մի տէրութիւն, ի հաշիւ իրենց կամ մի տէրութեան միայն, ընդարձակէ իր տիրապետութիւնները. զա դէմ կլինէր տէրութեան ինքնիշխանութեան և ամրոգջութիւնը պահպանելու հիմնական իրաւունքներին։ Այդ հիման վրա էլ, իր երկրամասերի կրճատման ենթակայ տէրութիւնը իրաւունք ունի ինքնապաշտպանութեան բոլոր հնարիները գործ զնել, սահման քաշելու իր զօրեղ հարեանի ապօրինի ախորժակին։ Բայց երբ խնդիրը զալիս է գրաւելու վեռ քաղաքակիրթ տէրութիւններից չը գրաւած հոգերը, երկրները, այդ բանում արգելքներ և անկախութեան խախտումն տեղի ունենալ չի կարող, ուստի և տէրութիւններն ազատ են

եղել և են՝ զրաւել շտիրապետւած երկրներ:

Միջազգային համաձայնութեամբ, 1885 թ.

Բերլինեան համաժողովը երկրներ ձեռք բերելու համար ընդունել է հետևեալ հիմունքները:

1. Գրաւման ենթակայ կարող են լինել այն երկրները որ չեն զրաւած ուրիշ տէրութիւններից ու կամ բնակւած են վայրենի ցեղերով և կամ անմարդաբնակ են: Գրաւումն երբեմն տեղի է ունենում որոշ վարձատրութեամբ, օր. միացեալ նահանգների կառավարութիւնը ձեռք է բերում Հեղիկների հողամասերը վնաման միջոցավ: Գրաւումն ըստ այդմ տեղի չի կարող ունենալ ոչ Եւրոպայում ոչ Ասիական այն երկրներում, ուր քաղաքական կազմակերպութեան հասած տէրութիւններ կան:

2. Գրաւումը իրական է այն ժամանակ, երբ զրաւած երկիրը տիրապետելու յայտարարութիւն արել է կամ պաշտօնական տնձն և կամ զինուրական արշաւախումբ: Այն դեպքում եթէ զըստ ունը կատարել է մասնաւոր մարդորեն տէրութեան անունով, այն ժամանակ այդ տէրութիւնն իր կողմից պարտաւոր է յայանել իր համաձայնութիւնը:

3. Գրաւման յայտարարութիւնը օրինական-իրաւաբանական գործողութիւն կլինի այն ժամանակ, երբ զրաւող տէրութիւնը կմացնի

այդ երկրի մէջ իր իրական կառավարով վարչութիւնը, կամ երկրի գրօշակը կը բարձրացնի տիրած երկրի վրա, սրոնք այդ երկրի իրական տիրապետութեան նշաններ են:

4. Այն տէրութիւնը, որ յայտնի մի երկր է տիրել կամ զրաւել, կամ վերցրել է զրաւելու նպատակով, պարտաւոր է այդ մասին դիպլօմատիական եղանակով յայտարարել միւս տէրութիւններին, զրահու միասին զրաւող տէրութիւնը պիտի յիշէ տիրած երկրի մօտաւոր սահմանները:

Բացի այս պայմաններով երկրի սահմաններն ու տիրապետութիւններն ընդարձակելը, միջազգային յարարերութիւնների մէջ յայտնի են և այլ եղանակներ, ինչպէս՝ փոխել, զնել և այլն: 1866 թ. Ռուսաստանը ծախսեց Հիւսիս-Ամերիկայի Միացեալ Նահանգներին Ելիասկա թերակղզին մօտ 14,000,000 բռուլու, որ իրեն համար անպէտք էր նկատուած: Երբեմն սահմանների կանանաւորման համար հարեւան տէրութիւններ որոշ հոգամասեր փոխում են իրար հետ: 1860 թ. Տուրինեան պայմանագրով Ֆրանսիային զիջեցին նեցցան և Սաֆոյեան: 1863 թ. Յոնեական կղզիները Յունաստանին: Սակայն այս վերջին առածո ձեերով մի տէրութեան սահմաններն ընդարձա-

կելու միջոցները պատահական և սակաւ կըք-  
կնւող երևյլմներ են:

Եզգերի քաղաքական պատմութեան մէջ  
զրաւոմների տենդի առաջին զլիսաւոր շրջա-  
նից յետոյ, այսինքն Ամերիկայի զիւտից և  
այնտեղ մեծ գաղթավայրեր ձեռք բերելու հա-  
մար տէրութիւնների տենդային զործունէու-  
թիւնից յետոյ, վերջին մօտ 50 տարուայ ըն-  
թացքում այդ տենդային աշխատանքները վերս-  
կսուեցին մեծ եռանգով, որի չնորհիւ Ասի-  
այում և Աֆրիկայում համարեած թէ շտիրա-  
պետած երկիրներ այլես չկան: Այդ զրաւում-  
ները տեղի ունեցան տւելի խաղաղ միջոցնե-  
րով և զինւորական փոքր արշաւախումբերով  
առհասարակ, եթէ շհաշւելու լինենք Սուլդանի  
տիրապետութեան համար տեղի ունեցած ար-  
իւնահեղ պատերազմները: Դրաւումների մէջ  
առանձին զործունեայ դեր, ինչպէս միշտ,  
ցոյց է տւել և տալիս Անգլիական ազգը:

Երդէն ասել ենք, որ տէրութիւններն  
իրենց տիրապետութիւններն իրաւունք չունին  
՚ի հաշիւ միւս տէրութիւնների անել: Եթէ  
որեէ տէրութիւն ձգտումներ ցոյց տայ ու մի-  
ջոցներ ձեռք առնի համաշխարային տիրապե-  
տութիւն սահմանելու միւս բոլոր տէրութիւն-  
ների, կամ Նրանց մի խմբի վրա, ու այդպի-  
սով հարւած տայ այդ տէրութիւնների ինք-

Նիշխանութեան և ինքնապաշտպանութեան իրաւունքներին, անկախութիւնը կորցնելու վտանգին ենթակայ այդ տէրութիւններն իրաւունք ունին ինքնապաշտպանութեան համար զէնքի դիմել և պատերազմ յայտաբարել վտանգը ըստանող տէրութեան դէմ, եթէ այլ միջոցներ ապարդիւն անցնեն: Եսկ եթէ որեւէ տէրութիւն անարդար և ապօրինի միջոցներով ձրգում է ընդարձակել իր տէրութեան սահմաններն, այդպիսի իւրաքանչիւր ապօրինի գործադրութիւն պիտի միջազգային միութեան միւս անդամների կողմից բռւռն բողոքի առարկայ լինի:

Ահա այն բոլորն, ինչ որ կարելի էր համառօտակի առել տէրութեան անկախ զարգանալու և տռաջապիմերա իրաւունքի մասին:

զ. Հաւասարութեան իրաւունք. — Եթէ նայենք ժամանակակից տէրութիւնների վրա, կը տեսնինք, որ նրանք խիստ կերպով տարրերում են իրարից՝ իրենց բռնած երկրի տարածութեամբ, ընակիչների թւով, ազգութեամբ առանձնայատկութիւններով, օրէնքներով, քաղաքացիական կազմակերպութեամբ զինուրական ուժով, արդիւնաբերութիւններով, առեստի զարգացումով, գաղթավայրերի մեծութեամբ և այլն և այլն: Եյտեղից հարց է ծազում, արդեօք այդպիսի տարրեր մեծութիւն կազմող

տէրութիւնները կարող են միջազգային յարաբերութիւնների ժամանակ իրար հաւասար նըկատվիլ և միջազգային միութեան մէջ հաւասար իրաւունքներով օգտւել՝ իրը մարդկութեան մեծ ընտանիքի հաւասար անդամ եւ արդեօք անարդարութիւն չէր լինի հաւասար իրաւունքներ տալ անհաւասար մեծութիւնների, ինչպէս են մեծ և փոքր տէրութիւնները։ Այդ հարցերի լուծումը տալիս է այն խնդիրը, թէ որն է տէրութիւններին միջազգային միութեան անդամ դարձնող իրաւունքը։ Այդ առմիւ նախընթացում մենք տեսանք, որ միջազգային միութեան անդամ կարող է լինել մի տէրութիւն, եթէ նա ներկայացնում է իրենից մի որոշ, հաստատուն քաղաքական կազմակերպութիւն՝ երկիրը կառավարող իր կենդրութեական իշխանութեամբ, որի վրա և յենում է այն հիմնական ոկզրունքը, թէ միջազգային միութեան մէջ բոլոր տէրութիւնները հաւասար են։ Եւելի որոշ ասած, միջազգային յարաբերութիւնների ժամանակ տէրութիւնների հաւասարութեան սկզբունքը բախում է նրանց անկախութեան կամ ինքնիշխանութեան իրաւունքից։ Միջազգային միութեան իւրաքանչիւր անդամ այդ հաւասարութեան իրաւունքը ստանում է նոյն հիմունքների վրա, ինչ որ իւրաքանչիւր անհատին տալիս են պետու-

թիւնն ու քաղաքական օրէնքները, լինի այդ  
անհատը մեծ, թէ փոքր, հարուստ թէ աղ-  
քատ, կրթւած թէ անկիրթ և այլն և այլն,  
չաւասարութիւն պետական օրէնքների առաջ  
բոլոր հպատակների համար, և հաւասարու-  
թիւն միջազգային իրաւունքի առաջ՝ միջազ-  
գային ընտանիք կազմող բոլոր տէրութիւնն-  
երի համար։ Սոքա իրաւարանական երկու  
արդար և ճանաշւած սկզբունքներ են, թէ պե-  
տութեան համար և թէ միջազգային յարարե-  
րութիւնների մէջ։

Հաւասարութեան այդ իրաւունքը տալիս  
է իրաքանչիւր տէրութեան մի հաւասար ձայ-  
նի իրաւունք, այն բոլոր խորհրդածութիւննե-  
րի ժամանակ, երբ միջազգային յարարերաւ-  
թիւնների մէջ ծագած որևէ խնդրի լուծման  
համար տէրութիւնները համաժողովներ են զու-  
մարում ժամանակ առ ժամանակ։

Երբ սկզբունքով բոլոր տէրութիւններն  
իրար հաւասար իրաւունքներ ունին միջազ-  
գային յարարերութիւնների մէջ, այն ժամանակ  
ոչ մի տէրութիւն իրաւունք շունի պահանջել  
միւսից աւելի մեծ յարդանք, քան ինքն է տա-  
լի փոխադարձարար այն տէրութեանը, որից  
ինքն է նոյնը պահանջում։

Թէև միջազգային իրաւունքով հաւասա-  
րութեան սկզբունքը պահանջում է հաւասա-

բութիւն բոլոր տէրութիւնների համար, սակայն զործնականի մէջ բոլոր տէրութիւններն էլ հաւասար կերպով զործնական կտրուկ դեր չեն կատարում միջաղպային քաղաքականութեան մէջ և միջաղպային խնդիրները կարգադրելու գործում: Նոյն բանը կատարում է և իւրաքանչիւր ընտանիքի մէջ, իւրաքանչիւր հասարակութեան մէջ և իւրաքանչիւր տէրութեան մէջ: Թէ բոլոր այդ հիմնարկութիւնների մէջ անդամները հաւասար իրաւունքներ են վայելում օրէնքի առաջ, սակայն ընտանիքի մէջ զլուխ է կանգնում նա, որ խելօք է, որ ընաւորութեամբ զօրեղ է: Հասարակութեան մէջ զործունեայ և ազդեցիկ դեր է կատարում նա, որ ամենից լաւ է կարողանում օգտել հասարակութեան վրա ազդելու և հասարակական զործերն առաջ տանելու իր ընդունակութիւններով և պատրաստութիւնով: Նոյնն է հիմնարկութիւնների մէջ, ուր մի կամ միքանի զործունեայ անդամներ ոգի և շունչ են մտցնում զործի մէջ և իրենց ետեից քարշակիս միւս բոլոր անդամներին ու ամրոգչ հիմնարկութիւնը: Շատերն են եւրոպական պարլամենտների և երկիրը կառավարող բարձր վարչութեան անդամներ, սակայն ըրչերն են, որ դեկավարում են մի երկրի զործերը և պարլամենտների մէջ իրենց ետեից

քարշ տալիս ձայների ահազին բազմութիւն։

Եյն, ինչ որ կատարում է ընտանիքի, հասարակութեան և տէրութեան մէջ, նոյնը կըրկնուում է միջազգային միութեան մէջ, մարդկութեան մեծ ընտանիքի քաղաքական կեանքի ընթացքում։ Միջազգային յարաբերութիւնների մէջ ով աւելի զօրեղ է, նա էլ աւելի ազգեցութիւն է ձեռք բերել և բերում տէրութիւնների մէջ ծաղած միջազգային խնդիրները կարգադրելու և լուծելու գործում։ Եյդ ազգեցութիւնը, զերակշիռ, կտրուկ դեր կատարելու այդ իրաւունքը միջազգային համաձայնութեամբ չի տրում մէկին և ոչ էլ փակւում է միւսի առաջ. ուստի և ամեն տէրութիւն աղատ է այդպիսի դիրք ձեռք բերել միջազգային յարաբերութեան մէջ. որից պարզ է, որ սկզբունքով դարձեալ հաւասարութիւնը մնում է անխախտ բոլոր տէրութիւնների համար։

Եյսպէս ուրեմն, զործնականի մէջ ազգեցիկ դիրք ձեռք են բերել և բերում զօրեղ տէրութիւնները, ուստի և միջազգային գործերի ընդհանուր զեկավարութիւնը բնականարար այդ խումբ տէրութիւնների ձեռքում պիտի լինի և իրօք էլ է։ Ազգերի պատմութիւնը ցոյց է տալիս, որ այն ժամանակում էլ, երբ միջազգային իրաւունքի մասին խօսք իսկ շէր կարող լինել, այս ու այն տէրութիւններ ժա-

մահակ առ ժամանակ, յաջորդաբար եղել են  
ազգերի բարպր որոշողը։ Առաջաւոր Սսիայում,  
Հիւսիսային Աֆրիկայում և Եւրոպայում փախ-  
նէիտիս տիրապետովից դեր են կատարել և աղ-  
զերի բախտն են որոշել եղիպտացիք, Փիւնի-  
կեցիկ Բարելացիք, Պարսիկները, Հռոմայեցիք,  
Յունա-Բնուդանդական կայսրութիւնը, Երարա-  
ցիք, Օսմանացիք։ Միջին դարերում Եւրոպա-  
յում Դերմանական կայսրութիւնը, երրեմն Շնզ-  
լիան, Խաղանեան, Ֆրանսիան և այլն և այլն։  
Այդ տէրութիւններից իւրաքանչիւրը սահման-  
ներ և օրէնքներ չեն ճանաչել՝ մի ուրիշ երկիրը  
և տէրութիւն նւաճելու, հիմնայատակ անելու  
նրա քաղաքական կեանքը։ Նրանց մեծամաս-  
նութեան համար այդ առթիւ ոչ մի արգելք  
չկար։ Այդպիսի պայմաններում ինչ խօսք, որ  
հաւասարութեան և իրաւունքի մասին և ոչ  
մի առարկութիւն չէր կարող լինել, իրաւուն-  
քը ուժի մէջն էր։

19-րդ դարում միջազգային խնդիրների  
կարգաւորելու գործում հանդէս եկան Եւրոպա-  
կամ հինգ մեծ տէրութիւններ Ռուսաստան, Շնզ-  
լիան, Ֆրանսիան, Աւստրիան, և Պրու-  
սիան, որից յետոյ փախարինեց Դերմանական  
միացեալ կայսրութիւնը՝ Պրուսիայի դրշ-  
խաւորութիւն։ Այդ հինգ մեծ տէրութեան  
շարքը մտաւ, Խաղական միութիւնը կայանա-

լուց յետոյ, նաև Խտալիան, որ եղաւ վեցերորդ մեծ պետութիւնը։ Այս վեց մեծ տէրութիւններն են ահա, որ միջազգային քաղաքական խնդիրների կարգաւորողն են հանդիսանում։ Նոցա միութիւնը կոչւում է Եւրոպական կոնցերտ։

Հիւսիսային Ամերիկայի և Խսովանեայի վերջին պատերազմից յետոյ, հանդէս եկաւ մի մեծ պետութիւն էլ՝ Միացեալ նահանգները, որ մինչև այդ միջազգային քաղաքականութեան մէջ աւելի լուռ դիտողի դեր էր կտարում։

Բացի այս եօթը մեծ պետութիւններից, կարծես կամաց կամաց հանդէս է զալիս մի նոր զօրեղ երիտասարդ տէրութիւն, Ասիային վերաբերեալ զործերում իր ձայնը լսել տալու համար — դա ձապնիան է, ծաղող Արեգակի կայսրութիւնը, Միկազօների երկիրը, որ Անգլիայի հետ դաշն կապելուց յետոյ աւելի բացորոշ կերպով միջամտում է Արևելքին վերաբերեալ միջազգային քաղաքականութեան մէջ, իրրի Արևելքի մի մեծ պետութիւն՝ մեծ յաւակնութիւններով։ Ահա Ամերիկան և ձապնիան են, որ իրրի զօրեղ, մեծ պետութիւններ, միւս վեց պետութիւնների կոնցերտի մէջ են մտել։ Այդ երկուոփ դերն յատկապէս շոշափելի է Ասիայի վերաբերեալ խնդիրներում։

Ինչ և իցէ, որքան էլ միջազգային խընդիրների նկատմամբ այդ տէրութիւնները զօրեղ լինին, այնուամենայնիւ նրանք իրաւունք չունին իրենց քմրի համաձայն կարգագրել իրենցից աւելի թոյլ տէրութիւնների բաղզը: Երբ բացառութիւն մեծ տէրութիւնները կարող են միջամտել մանր տէրութիւնների դործերին 1) երբ այդ բանը նոցա ցանկութեամբ է, այսինքն մանր տէրութիւնների կամ նոցանից մեկի. և 2) երբ այդպիսի մի դործողութիւն 'ի նկատ է առնւած միջազգային համաձայնութեան նախընթաց որոշմամբ, առանձին դաշնագրով: Բերենք օրինակներ. 1856 թ. Փարիզեան և 1878 թ. Բերլինեան վեհաժողովներով Տաճկաստանը գտնուում է մեծ տէրութիւնների խնամքի տակ՝ միջազգային համաձայնութեամբ, Ահա այդ համաձայնութեան, միջազգային իրաւունքի այդ մասնական որոշման հիման վրա, Եւրոպական տէրութիւնները պահանջուում են Տաճկաստանից բարենսրոզութիւն մտցնել իր կայսրութեան թէ Սփյական և թէ Եւրոպական վիլաեթներում: Երբ բորնկեց Մակեդոնեան տպատամրութիւնը, Եւրոպական տէրութիւնների համաձայնութեամբ, բալկանեան թերակղզում աւելի շահեր ունեցող երկու մեծ տէրութիւն—Ռուսաստանն ու Աւստրիան միջամտեցին և մշակելով նոյն իսկ

բարենորոգումների որոշ ծրագիր ներկայացրին Օսմանեան տէրութեանը։ Եյդ զեռ բաւական չէ, զանելով որ այդ բարենորոգումների մըտ-ձնելու յապապումը կարող է միասակար հետե-անքներ ունենայ, նոյն երկու մեծ տէրութիւնը հարկադրեցին Տաճկաստանին զործադրել տ-ուաջարեւած բարենորոգումների ծրագիրը։

Եւրոպական կոնցերտն այս դէպրում այդ-պէս է վարւում, որովհետեւ, ինչպէս ասացինք, այդ միջամտութեան իրաւունքը նրանց տևկ է Միջազգային համաձայնութիւնը։ Նորա նոյն միջամտելու իրաւունքը չունին, եթէ ոյզպիսի հոկոզութեան տակ չգտնւած մի տէրութիւն, իր երկրի մէջ ունենայ վարչական մի եղանակ, որ անհրաժեշտ բարենորոգումների կարօտ լի-նի։ Որքան էլ վատ, անժամանակակից լինի Եւրոպական մի անկախ տէրութեան կազմը, դիցում մի Խողանիայում, մի Սերբիայում, մի Յունաստանում, այնուամենայնիւ միջազգային ոչ մի օրէնքի հիման վրա ոչ փոքր և ոչ էլ մեծ պետութիւններն իրաւունք չունին միջա-մտել այդ երկրների ներքին կեանքին վերա-բերեալ խնդիրներում, եթէ միայն այդ միջա-մտութիւնը միջազգային համաձայնութեամբ չէ պայմանաւուրեած։

Մենք ասել ենք, որ տէրութիւններն իրա-րից տարբերում են նաև կառավարութեան

ձեռվ, մի տեղ միաղետութիւն է, միւս տեղ  
հանրապետութիւն։ Մի տեղ երկրի իշխանու-  
թեան զլուխը կայսր կամ թագաւոր է մի այլ  
տեղ պարզ քազաքացի, կամ իշխան։ Մի տեղ  
ժառանգութեամբ է անցնում զահը հօրից  
որդուն, միւս տեղ պետութեան զլուխն ընտ-  
րութեամբ է ձեռքն առնում տէրութեան  
բարձր ներկայացուցչութեան պաշտօնը։ Իր  
հիման վրա էլ նրանց ներկայացուցչութիւնն  
Օտար տէրութիւնների մօտ և տէրութիւնների  
ժողովի մէջ տարրեր է։ Արդ, այդ ներկայա-  
ցուցիչները իրենցից ներկայացնելով իրենց  
կառավարութիւնը, արդեօք հաւասար պիտի  
նկատուին իրար, թէ նախադահութեան և յար-  
գանքի աւելի կամ պակաս առատելութիւններ  
պիտի ունենան իրարից։ Այդ առթիւ միջազ-  
գային իրաւունքը ոչ մի ացաւիլութիւն չի  
տալիս որևէ մի մեծ տէրութեան, կամ չի սր-  
շում թէ, մանր, թոյլ տէրութիւնները պակաս  
յարգանքի են արժանի։ Միջազգային իրաւունքի  
համար ընդհանուր ոկզրունքը հաւասարութիւնն  
է, սակայն իրականութեան մէջ, առանց միջ-  
ազգային փոխադարձ համաձայնութեան, քա-  
զաքարկան և այլ հանգամանքների չնորհիւ, ա-  
ռաջնակարգ տեղ, զիրք և յարգանք են վայե-  
լում մեծ պետութիւններին ու իրենց ներկայա-  
ցուցիչները, անկախ նրանից, թէ արդեօք

դրանք կայսրութեան, թէ հանրապետութեան  
ներկայացուցիչներ են:

Մինչի այժմ հնարաւոր եղածին շափ  
հանգամանորեն խօսեցինք միջազգային յարա-  
րերութիւնների մէջ տէրութեան հիմնական  
իրաւունքներից միայն ինքնիշխանութիւն և  
նրանից բղիսած այլ իրաւունքների մասին։  
Այդ համառօտ ակնարկների մէջ ցոյց տւիր  
ինքնիշխանութիւնից կամ անկախութիւնից ծա-  
զած գերը պետութեան ներքին կեանքում, և  
դրա հիման վրա յենած սրոշ իրաւունքների  
ու գերը միջազգային յարաբերութիւնների մէջ։  
Այժմ անցնենք տէրութեան հիմնական իրա-  
ւունքներից երկրորդին՝ հազորզակցութեան կամ  
յարաբերութեան մէջ մտնելու իրաւունքին։

Դյուկս շոքը ըդուղող. — Հաղորդակցութեան կամ յաջաքերութեան իրաւունք. — Ազգերի հաղորդակցութեան միջոցները. կարող է մի տէրութիւն կզզիանալ իր մէջ, փակել իր սահմաններն օտարների առաջ, թոյլ շտալ օդուր-ւելու ճանապարհների հաղորդակցութեամբ և այլն:

Իրար հետ հաղորդակցելու դերը պիտութիւնների կեանքում ահազին՝ թէ հասարակական, թէ քաղաքական - կուլտուրական նշանակութիւն ունի. Երդէն իր տեղում առել ենք, որ տէրութիւնն իրը մի հիմնարկութիւնների մէջ միւս շրջապատող տէրութիւնների հետ։ Ժողովուրդների քաղաքական և տնտեսական կեանքի մէջ և առհասարակ ամեն ասպարէզներում, այդ յարաբերութիւնները պատահական, մասնաւոր դիպւածներ չեն, այլ ժամանակակից քաղաքակրթութիւնից և այլ քաղմաթիւ պայմաններից առաջ եկած անհրաժեշտութիւն։

Ազգերի փոխազարձ յարաբերութիւնների կամ հաղորդակցութիւնների հետեւալ աստիճաններն են տեսնելում, նրանց քաղաքական-կուլտուրական կեանքի պատմական զարգացման ընթացքում։

Ժողովուրդները քաղաքակրթութեան ա-

ւելի ստորին աստիճաններում իրար հետ կապող, իրար հետ յարաբերութեան և հազորդակցութեան մէջ պահող շատ քիչ հիմնարկութիւններ, զաղափարներ և հասկացողութիւններ ունեին: Եզզայնական ձգտումները նոր ժամանակի զաղափարներ են, քաղաքակրթութեան բարձր աստիճանի վրա գտնւած ազգերի կեանքում և նրանց հասկացողութիւնների մէջ զարգացած և գունաւորուած: Եզզերին իրար հետ հազորդակցող, իրար մի սրոշ խընդրով մօտեցնեսդ ամենաառաջնակարգ հիմնարկութիւններն են, կրօնական հասկացողութիւններն են, որ մօտեցրել են միմեանց, իրարից բնաւորութեամբ, ծաղմամբ և ձգտումներով ու շահերով բալսրովին տարբեր ազգեր: Եյսպէս, քրիստոնէութիւնը մօտեցրեց իրար հետ և հազորդակցութեան մէջ գրեց երկրադնդի զանազան ծայրերում իրարից տարբեր ազգութիւնների: Մահմետականութիւնը մինչի օրս Էլ այդ գաւանութեան հետեւող ծաղմամբ իրարից տարբեր հաւատացովների համար միակ ամենաէական կապն է, որ մոռացնել է տւել և տալիս նոյն իսկ ազգայնութեան զաղափարը և ազգայնական ձգտումները:

Քրիստոնէութեան սկզբի զարերից սկսած մինչի համարեա միջին դարերի վերջը և նոր ժամանակիների սկիզբը, նա իբր մի ընդհա-

նուր սկզբունք, իրը մի հիմնարկութիւն, իր մասնաւոր-տեղական ժողովներով, ուր ներկայ էին լինում քրիստոնեայ աշխարհի ամեն ծայրերի ներկայացուցիչներ, ընդհանուր որոշումներով սրոշ շափակ միացնում, հաղորդակցութեան մէջ էր զնում ու պահպանում ծագմամբ իրարից տարբեր և տարածութեամբ իրարից հեռու զտնւած զանազան ազգեր։ Քրիստոնէ-ութիւնը իրը արդպիսի մի հիմնարկութիւն միշտ կմնայ քաղաքակրթութեան պատմութեան մէջ ազգերի իրար հետ հաղորդակցելու, իրար մօտենալու և իրար հետ մի ընդհանուր զա- զափարով կապւելու նշանաւոր և առաջնաշակարգ դրսօն։

Բոլոր ժամանակների և ժողովաւրդների համար այդպիսի մի գեր կատարել է և առետուրը-վաճառականութիւնը։ Նրա միջոցով էլ հաղորդակցութեան մէջ են մտել և մտնում զանազան ազգեր և երկրներ։ Միջին դարերում, երբ պետական, ներկայ մտքով, կազմակերպութիւն զոյտաթիւն չուներ, որ ապահովէր առեարի զոյտաթիւնը և առհասարակ մի երկրի անտեռական ու արդինարերական կեանքը, քաղաքներում առաջ եկան առետրական միութիւններ, որոնք մի տեսակ կազմակերպւած, սրոշ տեղերում մի տեսակ նոյն իոկ քա-

զարական-առետրական ընկերութիւններ էին ներկայացնում, նպատակ ունենալով ապահովելու առետրի և արդիւնաբերութեան գոյութիւնը ու զարդացումը; արտահանութիւնն ու ներմուծութիւնը: Եյդպիսի միութիւններից յայտնի են պատմութեան մէջ Հիւսիսային Գերմանիայի երեք ազատ քաղաքների-Համբուրգի, Բրեմենի և Լիւբրէկի կազմած գաշնակցութիւնը: Եյս և նման ուրիշ միութիւններն անկախ գաշնազրեր էին կապում, համաձայնութիւն էին կայացնում, պատերազմներ էին վարում, և այն և այն, ու միաժամանակ հանդիսանում էին միջազգային յարաբերութիւններ տարածող մի գործօն:

Երբորդ գործօնն աղղերի հազորդակցութեան խնդրում քաղաքական կապն է, որով միջին գարերում յայտնի խումբ տէրութիւններ միացած, զլսաւորապէս ինքնապաշտպանութեան նպատակով, ժողովներ, խորհրդածութիւններ էին կայացնում իրենց համար ընդհանուր նշանակութիւն ունեցող խնդիրների և զործերի առիթով:

Ազգերի հազորդակցութեան գարդացման հետեալ աստիճանը նոր ժամանակների ծնունդ է, դա իրաւոնիքի զաղափարն է, որ չէր և չէ ոչնչացնում յարաբերութիւնների նախկին կապերը: Նա ընդհակառակը ծնունդ առաւ հովա-

նաւորելու և զարգացնելու աղքերի փոխագարձ յարաբերութիւնների համար հին ու նոր այն բոլոր պայմանները, որ անհրաժեշտ էին և են՝ բոլոր ժողովուրդներից, ինչ ազգութեան էլ նորա պատկանին, մի ընդհանուր միութիւն և եղբայրութիւն կազմելու համար։

Ազգերի հաղորդակցութեան մեջ միջազգային օրէնքների հիմամբ արդէն այնպիսի միութիւններ - դաշնակցութիւններ զոյութիւն ունին, որոնք կապել են իրեր հետ նոյն խոկ իրար ոչ բարեկամ ազգեր, աւելին կասենք ազգեր, որոնց շահերը տրամադօրէն իրար հակառակ են։ Եյգալէս է հաղորդակցութեան զաղափարը. նա իրար մօտեցնում, նոյն խոկ շահերով իրարից տարբեր տարբեր՝ մի ընդհանուր զործի համար։ Եյգալիսի միութիւններից յիշենք փոստային և հեռագրական միութիւնները, որին մասնակցում են երկրագնդի համարեա բոլոր քաղաքակիրթ տէրութիւնները։ Ճշմարիտ է, այժմ իրար հետ միացնող այդպիսի դաշնակցութիւնները քիչ են, սակայն նրանց զոյութիւնը մի մեծ զրաւական է այն ձգտման, որ ազգերն ունին այդ ասպարիզում։

Ցիշենք նաև «Կարմիր Խաչի», միջազգային նշանակութիւն ունեցող ընկերութիւնը, որի խնամքի առարկան պատերազմի ժամանակ անխտիր օգնութիւն հասցնելն է պատերազմի

արհաւիրքի զոհերին։ Կտրմիր Խաչի բնիկերութեան գաղափարը միացրել, իրար հետ հաղորդակցութեան մէջ է դրել ոչ միայն ցեղով այլ և կրօններով հիմնաւորապէս տարրեր ազգութիւններ։ Պարագոկս չէ արդեօք այդ բնիկերութեան գոյութիւնը հեթանոս ձապսնեայում։ Խաչի նշան և քրիստոնէութիւնից հիմնաւորապէս տարրեր գաւանութեան ժողովուրդ։ Եղգերն իրար հետ միացնող համամարդկային գաղափարները հրաշքներ են դործում։

Ներկայ ազգերի քաղաքական և կուլտուրական կեանքն այնպէս արագ է զարգանաւմ, և այնպիսի պայմաններ է առաջ բերել և բերում, որոնց մասին հին սերունդները նոյն խոկերեակայել չէին կարող։ Ամեն ժողովուրդ, ամեն տէրութիւն իր տնտեսական, ինքնապաշտպանութեան, կրթական և այլ ու այլ բազմաթիւ շահերի համար, հանգամանքների շնորհիւ հարկադրաբար պարտաւոր է հաղորդակցութեան մէջ մտնել միւս ժողովուրդների և տէրութիւնների հետ։ Մրցումն առևտրի արդիւնաբերութեան, քաղաքականութեան մէջ այնպիսի շափերի է հասել, որ ետ մնացողը, ինքն իր մէջ կենդրունացողը քարանալու կը զատագարաւի։ Եթէ մի ազգ, մի տէրութիւն շաշխատի ձեռք բերել այն քաղաքակրթական միջոցները, որով մրցում են առաջաւոր ժո-

զավուրպները, նա չի կարող ապահով լինել իր գոյութեան համար, մրցումը նրան կտւլ կտայ: Տէրութիւնների կեանքի մէջ հաղորդակցութեան, յարաբերութիւնների օգուտներն անհերքելի և շատ ակների են: Օրինակ, եթէ համատարած տարափոխիկ հիւանդաթիւններ կան, թէոր այդ շարիքի դէմ կռւելու լինի միայն մի տէրութիւն, նրա ձեռք առած միջոցները շատ քիշ կլինին այդ համատարած աղետի առաջն առնելու համար: Իսկ եթէ նոյն շարիքի դէմ միանան զործել բոլոր տէրութիւնները, անկասկած է, որ ձեռք առած միջոցներն անհամեմատ աւելի զործնական հետեւաների կհասցել: Այլ և այլ շարք միջազգային խնդիրների համար կազմւել և կաղմում են Յանձնաժողովներ, որոնք զործում են միջազգային համաձայնութեամբ որոշած կանոնների համաձայն: Այդպիսի յանձնաժողովներից յիշենք Փարիզեան մետրական (շափի) յանձնաժողովը. Կ. Պօլսի սանիտարական խորհուրդը. Գետային յանձնաժողովը:

Մինչի այստեղ մենք համառօտ կերպով գծաղբեցինք, թէ ժողովուրդներն ինչ ասպարէվեներում են իրար հաղորդակցութեան մէջ գտնւում: Միջազգային այդ յարաբերութիւններն, ինչպէս տեսանք, մի անհրաժեշտութիւն են, մի անխուսափելի պահանջ: Տէրութիւնների

հաղորդակցութեան մէջ առաջ են զալիս այն-  
պիսի հանգամանքներ, որ մի տէրութեան  
օրէնքներ բաւարարութիւն չեն տալիս ծաղած  
դիցուք սրեւ խնդիր կամ վէճ կարգաւորելու  
համար՝ երկու անձի կամ հիմնարկութիւնների  
մէջ, որոնցից մէկն իր հպատակն է, իսկ միւսը  
ոչ. և այլն և այլն:

Ներկայումս տէրութիւնները միջազգային  
յարաբերութիւնների և կեանքի մէջ ծաղած  
շատ խնդիրների համար ևս առանձին, մաս-  
նաւոր համաձայնութիւններ են կայացնում,  
որոնց հիման վրա երկու տէրութեան զատա-  
րաններ հարկաւոր գէպքերում կարող են դիմել  
իրար կամ վկաների ցուցմունքներ առնելու,  
կամ զանազան տեղեկութիւններ հաղորդելու  
և այլն. Այդպիսի մասնաւոր համաձայնութիւն-  
ների շարքին է պատկանում երկրի սահման-  
ներից փախած և օտար երկրներում ապատա-  
նած յանցաւորներին ձերբակալելու և փոխա-  
դարձարար իրար յանձնելու պարտաւորու-  
թիւնը:

Մի երկրի մէջ օրինական կարգով գոյու-  
թիւն ունեցող առևտրական ընկերութեան, ար-  
դիւնաբերական մի ձեռնարկութեան և այլն  
անարգել, առանց օրինական սահմաններից  
դուրս զալու զործունէութիւն ոկսելը օտար  
տէրութիւնների մէջ, և յուսալ նըանց պաշտպա-

նութեան և ձեռնտւութեան վրա և իրք իրաւական մարմիններ օտար հողի վրա էլ ձեռք բերել սեփականութիւն, վարել վէճեր, ունենալ իր ներկայացուցիչները և այլն ճանաշւած են քաղաքակիրթ տէրութիւնների կողմից.

Այս բոլորը ցոյց է տալիս, թէ յարաքերութիւնների զարգացման զործում, ազգերի պատմական կեանքը որքան առաջ է զնացել, որքան հակւած է միութեան, հաղորդակցութեան նոր ու նոր ասպարէցներ գտնել, ու իր յարաքերութիւնների մէջ ուշադրութեան առնել հարեանի օրէնքներն ու պետական կազմակերպութիւններ. Պետութիւնների փոխադարձ յարաքերութիւնների կամ հաղորդակցւելու առաջ բերած հանդամանքներից ծագում են հետեւալ գործնուկան եղբակացութիւնները. —

1. Որ ոչ մի տէրութիւն իրաւոնք չունի բոլորովին փակւել-կենոքընահալ իր մէջ ու յարաքերութեան մէջ շմտնել ուրիշների հետ, կամ նոյն վիճակի մէջ ձգել մի ուրիշ տէրութեան. Եւելնորդ է ասելլ, որ այդպիսի կամովի կզզիանալը անքնական վիճակ է, և հենց իր այդ կզզիանալ ձգտող տէրութեան շահերի տեսակէտից՝ անթոյլատրելի. Եյդպիսի մի կըզդիացած տէրութիւն, դրանով իրեն միջազգային իրաւոնքից զուրս վիճակի մէջ դրած կլինէր. Պատմութեան մէջ պատահել են և պատահում

նի դէպքեր, երբ մի տէրութիւն կտրում է իր յարաբերութիւնը մի այլ տէրութեան հետ ժանակաւորապէս, կամ պատերազմի դէպքում իր հակառակորդին շրջապատում է այնպէս, որ զրկում է արտաքին հազորդակցութիւնից, բայց այս դէպքերը ժամանակաւոր հանգամանքներ են՝ ժամանակաւոր պատճառներից առաջ եկած։

Դամաւոր կերպով իրեն կզղիացնելու օրինակ կարող է ծառայել 2ինական կայսրութիւնը։

2. Հազորդակցութեան սկզբունքի հիմունքով, ոչ մի տէրութիւն չպիտի փակի իր սահմանները օտարահանպատակների առաջ։ Միջազգային իրաւունքի տեսակէտից աւելի արդար կլինէր, որ մի տէրութեան մէջ ամեն ազգութեան և գաւանութեան պատկանող օտարահանպատակները հաւասար քաղաքացիական իրաւունքներով օգտաէին այն տէրութեան հպատակների հետ, որի երկրում որ գտնում են իրենք։ Օտարահանպատակների քաղաքական իրաւունքներ տալը իր երկրի մէջ թոյլատրելի շպիտի լինի։ Իր մէջ օտարահանպատակ ընդունող տէրութիւնը պարտաւոր է հոկել, որ իր երկրում ազրող կամ ազաստան գտնող օտարահանպատակը շապառնայ հարեան տէրութեան

հանգստութեանը, որ նա շշահազործի իր աղպարնակութիւնը և այլն:

3. Ոչ մի տէրութիւն շպիտի զրկէ մի այլ տէրութեան՝ օգտւել իր ճանապարհների հաղորդակցութեամբ և այն յարժարութիւններով, որ հետեւում են իր աշխարհազրական դիրքից: Ինչպէս տռաջ տեսանը, խաղաղ ժամանակ հաղորդակցութիւնը կտրել, ճանապարհները փակել ոչ մի տէրութիւն ոչ ինքն իր համար և ոչ ուրիշի համար իրաւունք չունի: Ուստի և այն տէրութիւնը, որ իր աշխարհազրական դիրքի շնորհիւ շունի դէպի բաց ծովը ելք, ևա իրաւունք ունի հարեան տէրութիւնից պահանջելու, որ իրեն դէպի բաց ծովը ճանապարհ տայ:

4. Որ տէրութիւնները փոխադարձարար արգելքներ շպիտի յարուցանեն առևտրի դէմ, խօսքը մաքսեր չնշանակելու մասին չէ, այլ ապրանքներ իր երկիրը առհասարակ ներս թափնելու մասին: Եւբարանչիւր տէրութիւն շահազրդուած է այն բանում, որ իր երկիրի արդիւնաբերութիւնը զարգանայ, սակայն հովանաւորելով իր երկիրի առեւտարը, միաժամանակ այնպիսի ծայրահեղ պայմաններ շպիտի ստեղծի, որի գորութեամբ օտար ապրանքների ներս մտնելն իր երկիրը անհնար լինի:

5. Առեւտրի մի քանի ձեւերն ու ապրանք-

ները ոչ միայն արգելւած պիտի լինին ամեն  
կերպ, այլ և բոլոր տէրութիւնները միասին  
պիտի աշխատին բոլորովին վերջ տալ նրանց,  
ու այդ յանձանքի մէջ բռնւած տնձերին հն-  
թարկել սպատասխանաւութեան, ինչ ազգի  
էլ նա սպատկաննելիս լինի: Այդպիսի առևտր-  
ներից է զերիների-նեզրերի առևտուրը, որի  
համար քաղաքակիրթ տէրութիւնները քանիցս  
վեհաժողովներ և համաձայնութիւններ են կայ-  
ացրել:

6. Հաղորդակցութիւնը իրր իրաւական  
սկզբունք՝ չի կարող լինել բացարձակ հասկա-  
ցողութիւն. ուստի և ննթակայ է սահմանա-  
փակումների: Այսպէս, չի կարող մի տէրու-  
թիւն մտնել մի ուրիշի հետ այնպիսի հաղոր-  
դակցութեան կամ միութեան մէջ, որի հիման  
վրա այդ միութիւնից բղխած բոլոր օդուտ-  
ները գաշնակցին լինի, իսկ ծանրութիւնը իր  
վրա, ենչպէս և մի տէրութիւն, առանց վտան-  
գելու իր անկախութիւնը, չի կարող և չի  
մտնի մի այլ տէրութեան հետ այն տեսակի  
յարաբերութեան մէջ, որով ինքը գտնելի նրա-  
նից կախումն ունենալու վիճակի մէջ: Հաղոր-  
դակցութեան իրաւանքի մէջ այս երկու սահ-  
մանափակումներն անհրաժեշտ պայմաններ են:

III

Դրույս հինգերորդ. — Պետութիւնների կրած փոփոխութիւններից առաջ եկած հետեւանքները. — Փոփոխութիւնների կերպը. դրանից ծագած պարտաւորութիւններ. պետութեան գոյութեան վերջանալը, դրա հետեանքները. ժառանգութեան խնդիր:

Մինչի այժմ մենք խօսել ենք տէրութեան մասին, երբ միջաղզային կեանքի առարկային՝ նրա հիմնական իրաւունքի մասին, այժմ անցնինք այն բանին, թէ արգեօք, երբ հանգամանքների շնորհիւ որիէ տէրութիւն փոփոխութեան է ենթարկւում է կամ ենթարկւի, է որ իր երկրի կառավարութեան եղանակի նկատմամբ, է որ իշխող տան փոփոխւելու առթիւ, է որ երկրի ծաւալի փոքրանալիս և այլն միջաղզային իրաւունքն ինչպէս է վերաբերում տեղի ունեցած այդ դէպքերին, միջաղզային միութեան միւս անդամների յարաբերութիւնը դէպի այդ փոփոխութիւն կրած տէրութիւնը որիէ փոփոխութիւն բնդունում է թէ ոչ. Երգին տէրութեան ինքնիշխանութեան մասին խօսելիս ասել ենք, որ տէրութեան կազմի, կառավարութեան եղանակի և այլ ձեի փոփոխութիւնների ժամանակ, միւս տէրութիւնները դորձ շունին խառնւելու որիէ անկախ տէրու-

թեան գործերի մէջ, որի հիման վրա մի երկիր են ներքին կեանքի մէջ ինչ փոփոխութիւնների էլ ենթարկվի, միջազգային իրաւունքի դարձեալ նա մի անկախ տէրութիւն է կազմում:

Այդ սկզբունքը միջազգային օրէնքով ճանաչւեց 1830 թ. Լոնգոնի Վեհաժողովի որոշումներով՝ Բելգիական թագաւորութեան Հռանգիայից բաժանւելու առթիւ:

Փոփոխութիւն կրած տէրութեան պարտաւորութիւններն են միջազգային յարարերութիւնների ժամանակ:

ա. Մի տէրութիւն ինչ փոփոխութիւն էլ կրած լինի իր քաղաքական կազմակերպութեան մեջ, նա պարտաւորէ կատարել այն բոլոր պարտաւորութիւններն ու հետեւ դաշնագրերի ճիշտ գործադրութեան, որ կապել է իր կառավարութեան այլ ձեի ժամանակ որիէ տէրութիւն կամ տէրութիւնների հետ: Միջազգային իրաւունքով ոչ մի կառավարութիւն իրաւունք չունի հրաժարել այն պարտաւորութիւններից, որ ծագումնն իրենից առաջ եղած թէկուզ կառավարութեան զեկը յափշտակազների հետ կապած դաշնագրերից: Միջազգային իրաւունքի տեսակէտից մի երկիր կառավարութիւն ներկայացնուածէ այն իշխանութիւնը, որի ձեռքին դանւումէ իրավես

երկրի կառաւարութեան զեկը, թէ կուզ այդ  
իշխանութիւնը ժամանակաւոր, ոչ օրինական  
իշխանութիւն լինի. Եզդերի պատմութիւնը  
այդպիսի շատ օրինակներ է ցոյց տալիս. այս-  
պէս Կրոմիէլը, Օրանեան իշխանը (XVIII դա-  
րում Ենգլիայում) ընդունեցին Կարլոս V-ի կա-  
պած պայմանագրերը. Նոյն իսկ Ֆրանսիական  
յեղափոխութիւնից յիտոյ առաջի չանրապե-  
տութեան կառավարութիւնն ընդունեց այն  
բոլոր պայմանագրերն ու պարտաւորութիւններ-  
ը, որ կապւած էին եղել Լուդովիկոս XVI-ի  
և նրա նախորդների օրով:

Միջազգային իրաւունքը չի ընդունում  
միայն այնպիսի պայմանագիր, որ վերացած  
կառավարութեան ներկայացուցիչներն անձամբ  
կապիլ են մասնաւոր ընդութիւն ունեցաղ խրն-  
դիրների առթիւ մի այլ կառավարութեան  
զլիսի հետ. Բերկնը մի օրինակ. նապոլէոն  
III կայսրը պայմանագրավ խոստացել էր Մար-  
սիմիլիան կայսեր (Մերսիլայի) զանի առանո-  
վութիւնը, որ ինարկէ. պարտագիր չեղաւ եր-  
րորդ չանրապետութեան համար՝ Ֆրանսիայում  
կայսերութիւնը վերանալուց յիտոյ:

թ. Եյն գեղրում, եթէ որիէ տէրութեան  
երկիր փոփոխութիւն է կրել կամ ընդարձակ-  
ւել է և կամ փորբացել, միջազգային իրաւուն-  
քի տեսակէտից, այդպիսի փոփոխութիւն կրած

տէրութիւնը մնումէ, նոյն տէրութեան իր փոփոխութիւն կրելուց առաջ ունեցած միջաղգային իրաւունքներով և պարտաւորութիւններով։ Այս կանոնն ընդունւած է իրրե միջաղգային օրէնք, և զործադրուած XIX դարում շատ անդամ։ Վերջին խոշոր դէպքը հսպանօւմերիկեան պատերազմից առաջ եկած փոփոխութիւնն էր հսպանիայի համար, որ կորցրեց Սփյայում և Սմերիկայում ունեցած իր բոլոր զաղթավայրերը։ Զնայելով կրած այդ ահազին փոփոխութեան, հսպանեան դարձեալ մնաց միջաղգային միութեան մեջ իրրե անկախ մի տէրութիւն իր նախկին իրաւունքներով։

Տէրութիւններն իրենց երկրամասերից զրկուում են երկու կերպ կամ՝ նրանցից մի մասը կտրուում կազմումէ մի անկախ նոր տէրութիւն և կամ պատերազմի դէպքում կտրուած մասն անցնում է յաղթողին։ Առաջ բերածս այդ երկու դեպքում էլ հարց է ծագում, արդեօք այն տէրութիւնը, որ կազմւել է անջատւած երկրամասի վրա, կամ այն տէրութիւնը, որին անցել է այդ հոգարաժինը պարտաւորութիւնները, որ կապւած են այդ երկրամասի հետ, թէ ոչ։ Միջաղգային իրաւունքով այդ հոգամասի հետ պարտաւորութիւններն անցնում են նրան տիրապետող կառավարութիւններին։ Այդպիսի

պարտաւորութիւններ կարող են լինել, օրինակ, այն պարտքերը, որ եղել են յատկապէս այդ հոգամասի վրա։ Երբ Էլզաս-Լօթարինդեան անցաւ Գերմանիային, նա վերցրեց իր վրա նաև այդ հոգամասի պարտքերը։

Արդեօք անջատւած հոգամասերից կազմւած տէրութիւնները կամ այն տէրութիւնը, որ վերցրել է այդ հոգաբաժինը, պէտք է մասնակցեն այն ընդհանուր պետական պարտքերին, որ մայր տէրութիւնն ունի։ Միջազգային իրաւունքն այդ առթիւ առանձին որոշումներ չունի, ուստի պիտի դիմել միջազգային յարաբերութիւնների մեջ տեղի ունեցած դէպքերից առաջացած սովորութիւններին։ Եյդ սովորութիւնն ասում է, որ մայր երկրի պետական պարտքերի մի մասն անցնում է իրենից անջատւած երկրի մասի վրա։ Սակայն որ մասն անցնի, որ արդար լինի. այդ դէպքում միջազգային իրաւագէտների կարծիքով պէտք է ՚ի նկատ առնելի անջատւող երկրամասի մեծութիւնը, նրա տնտեսական վիճակը, քնակիչների թիւը և այլն, որոց վրա պրօֆ. Դր. Կոռարովսկին աւելացնում է նաև անջատւած մասի պետական պարտքերից տարած օգուտի զնահատումը, այսինքն արւած պետական պարտքերից ինչ մասն է զնացել անջատւած հոգաբաժնի բարւորումի, տնտեսական

վիճակի բարձրացման, հազորդակցութեան ճանապարհների, երկաթուղիների, ջրանցքների վրա և այլն:

Միջազգային սովորութեամբ պետական պարտի բաժանելու համար միշտ համաձայնաթիւն են գալիս ու ընդհանրապես այն յարաբերութեամբ են բաժանում, ինչ յարաբերութեան մէջ որ զտնւում է անջառած հազարամինի մեծաթիւնը, մայր տէրութեան ընդհանուր տարածութեան վերաբերմամբ։ Բերենք պետական պարտքին մասնակցելու օրինակներ։ — Ցիւրիխեան դաշնապրով Սարգինեան, յստոյ արգեն միացեալ ետալիան, պարտաւորւց վճարել Աւստրիային նրա պետական պարտի այն մասը, որ Լոմբարդիայի համար Էրարել և որն անցել էր ետալիային։ 1878 թ. Շերլինեան դաշնապրով Թուրքեայի պետական պարտի համապատասխան մասերն անցան Բալգարեային, Սերբիային և Սե Լեռան իշխանութեանը։

Երբեմն մի տէրութեան հոգամասերն անցնում են, պատմական որոշ հանգամանքների շնորհիւ, մի այլ տէրութեան՝ որոշ պայմաններով և պարտաւորութիւններով կամ «առ միշտ» և կամ ժամանակաւոր՝ կապալապրով։ Այսպէս Նիշառատեան դաշնապրով Խուսաց Հայուրութեան հետ միացաւ որոշ պայմաններով

Օստղեան երկրամասը. ինչպէս և 1709 թ. համաձայնութեամբ Ֆինլանդեան անցաւ նոյն Ռուսաստանին. Եյտեղ միջազգային իրաւունքի տեսակետից հարց է ծաղում. տէրութիւններն արդիօք մշտապէս պիտի այդ պարտաւորութիւնները պահեն, թէ ժամանակի և կեանքի պահանջի հետ պիտի փոխափն նաև այդ պարտաւորութիւնները. Պրօֆ Մարտէնոն այն կարծիքի է, որ իւրաքանչիւր նոր ժամանակ նոր պահանջներ, նոր հասկացողաւթիւններ է բերում ազգերի կեանքում և զրա հետ էլ այդ պահանջներին և հասկացողաւթիւններին բաւարութիւն տալու հարկ.

Կապալազրավ սրեւ տէրութեան հողամասի այլ տէրութեան անցնելու իրողութեան տպացոյցներ տալիս է մեզ տէրութիւնների միջազգային կեանքի վերջին տասնամեակը. Եյտէս. Զին-Ճաղոնիական պատերազմից յիտոյ մէկը միւսի ետեից այդ կայսրութեան զանազան հողակտորներ անցան Եւրոպական երեք մեծ պետութեան. — Վէյ-Հայ-Վիյ նաւահանգիստն իլ շրջապատով՝ Անգլիային. Կեաօ-Ճօռն՝ Գերմանիային և Պօրտ-Երտուրը Կվանիթունեան թերակղզու հետ Ռուսաստանին. Եյս ձեռվ բողարկւած հողարածիններ ձեռք բերելու սովորաւթիւնը միջազգային յարաբերութիւնների մէջ մի նորութիւն է:

Պետութեան գոյութեան դադարիլը. — Բնութեան մէջ ամեն բան սկիզբն ունի և վախճան. անվախճան միայն նիւթն է որ հազար ու մի ձեռքոխութիւններ է ընդունում. Տէրութիւնն էլ սկզբին ունի և վախճան, ուստի և զարմանալի չէ, եթէ որևէ տէրութիւն երկար ժամանակ զօյութիւն ունենալուց յետոյ զանազան հանգամանքների շնորհիւ, իրը տէրութիւն՝ զողարի զօյութիւն ունենալուց. Պատմութիւնը պիտութիւններ ոչնչանալու, անյայտանալու ապացոյցներ շատ է տւել և տալիս. Եւրաքանչիւր այգպիսի դէպքում մի անհետացող տէրութեան տեղը բռնել է և բռնում է մի նոր-ուրիշ տէրութիւն, որը կամ առաջ է եկել նախկին անհետացած տէրութեան հողի վրա, և կամ հարեան որ և է մի տէրութիւն. Իր հողերին միացրել է անհետացող կառավարութեան տիրապետութիւնները. Երկու դէպքումն էլ այդ տէրութիւնները մի տեսակ ժառանգներ են հանդիսանում ոչնչացած տէրութեան. Քաղաքացիական օրէնքների մէջ ամեն մի ժառանգ իրաւունք ունի և կարող է հրաժարւել ժառանգութեան իրաւունքնիրից այն դէպքում, եթի տեսնի, որ իրեն մնացած ժառանգութեան պարտը ու կարողութիւնը իրարից տարբեր են այն մտքով, որ պարտն աւելի շատ է, քան կարողութիւնը.

Նոյն օրէնքով, եթէ մէկն ընդունում է իրեն  
մնացած ժառանգութիւնը, կամ արդէն մտել  
է ժառանգական իրաւունքների մէջ, նա պար-  
տաւորապէս պիտի ընդունէ և ժառանգութեան  
կայրի հետ նաև պարտքը, որից նա հրաժար-  
ւելու իրաւունքից զրկում է այդ դէպքում։  
Քաղաքական կեանքում, միջազգային յարա-  
բերութիւնների մէջ այլ կարգ է տիրում։ Նախ-  
րնթաց տողերի մէջ մենք տեսանք, որ մայր  
երկրից անջատած մասը վերցնում է պետա-  
կան պարտքի համապատասխան մի մասը։ Բը-  
նական է, եթէ մասի հետ անցնում է նրա  
համապատասխան պարտքը, նոյնպէս և եթէ  
ամբողջ երկիրն է անցնում, որա հետ էլ գուգ-  
ընթացաբար անցնում է նաև ամբողջութեան  
հետ կապւած պարտքերը։ Սակայն ամբողջ  
տէրութիւնը վերջանալու դէպքում հանգա-  
մանքներն աւելի բարդ են։ Վերջացող տէրու-  
թիւնն իր մի իրաւական մարմին, կարող է  
ունենալ իր մասնաւոր սեփականութիւնը։ օրի-  
նակ, պետական կալւածքներ, զրամագլուխներ։  
Կարող է ունենալ պետական պարտքեր՝ երկա-  
թուղիների և այլ ձեռնարկութիւնների վրա  
արւած։ Կարող է միջազգային պարտաւորու-  
թիւններ իր վրա վերցրած լինի, գաշնազրեր  
կնքած լինի այլ տէրութիւնների հետ և այն  
և այն։ Արդ, այդ տէրութեան վերջանալուց

յիտոյ, այդ երկրի հետ կապ ունեցող պարտաւորութիւններն ում պիտի անցին իրենց ամբողջութեամբ։ Միջազգային սովորութիւնն ու փորձը ցոյց է տալիս, որ այդ բոլոր պարտաւորութիւններն անցնելու են և անցնում են այն տէրութեանը, որ ժառանգ է հանդիսանում մեռած տէրութեան երկրների, նրա բընական հարստութիւններին. մի խօսքով պետական ամբողջ կարողութեանը, առանց հաշւի տռնելու թէ, պարագն է շատ, թէ կարողութիւնը, ինչպէս էլ լինի մուտքի և ելքի յարաբերութիւնը, նա անցնում է ժառանգին իր ամբողջութեամբ։

Ուստ պրօֆ. Մարտինս ամբողջ այդ ժառանգութիւնը բաժանում է հետևեալ երկու խմբի 1) պարագաւորութիւններ և դաշնապրեր և 2) հասարակական կայք, ինչպէս են հազորդակցութեան ճանապարհներ, հասարակական հիմնարկութիւններ և այլն և պետական ստացւածք, ինչպիսի են դրամագլուխներ, պետական կալւածքներ և այլն։ Դրանցից առաջին խումբը — պարտաւորութիւններն (պարտքերը) և դաշնապրերը անխախտ կերպով պարտաւորական են ժառանգողի համար։ Հասարակական կայքից նա պիտի օգտուի և նրա հետ վարւի հին տիրապետութեան ոգու և ուղղութեան համաձայն։ Խոկ ինչ վերաբերում է պետական-

ստացւածքներին — դրամագլուխներին ու կալւածքներին, զբանք անցնում են ժառանգող տէրութեանը լիակատար մասնաւոր սեփականութեան իրաւունքով, որոնց հետ նա, իր մասնաւոր սեփականատէր կարող է վարւել այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում:

Եյս առթիւ միջազգային յարաբերութիւններից բերենք մի օրինակ: 1869 թ. երբ Խտալական միացեալ թագաւորութիւնը վերացրեց Հռոմի Պապի աշխարհական իշխանութիւնը պապական նահանգից, նա իր վրա ընդունեց այն բոլոր պարտաւորութիւնները, որ Պապն իր աշխարհական պետ կապել էր ուրիշների հետ:

Պետութիւնների պատմական կեաները մի այլ ձև էլ է տւել մի երկիր ժառանգելու: Դա վերացող տէրութեան հողերի մի քանի ժառանգների մէջ բաժանելու է: 1797 թ. Լեհաստանը բաժանեց երկը մասի — Պրուսեայի, Աւստրեայի և Ռուսաստանի մէջ: Դրանից յետոյ 1815 թ. Ռուսաց կայսրութեան հետ միացւեց նաև Վարչաւեան Դրսութիւնը: Եյն դէպքում, երբ ժառանգները շատ են և ժառանգութիւններկայացնող երկիրը պիտի բաժանեի միքանի մասերի, նախ համաձայնութիւն են կայացնում բաժանել ժառանգութեան ամենաշական մասը, երկիրը, յետոյ արդէն աւելի երկրորդական մասերը: Իսկ պարտա-

ւարութիւնները բաժանելիս՝ ի նկատ են առնում, թէ որ ժառանգին ի՞նչ մաս է անցել և այդ մասն իք բնակիչների թւով, անտեսական պայմաններով բնական հարստութիւնով ինչպիսի արժէք է ներկայացնում:

Մի անզամ արդէն ասել ենք, որ որևէ տէրութեան բարձր կառավարութեան կայացրած համաձայնութիւնը՝ մասնաւոր բնաւորութիւն ունեցող խնդիրների նկատմամբ, պարտաւորական չէ, կառավարութեան եղանակը փոխւելուց առաջ եկած նոր կառավարութեան համար։ Եյդպիսի համաձայնութիւնները ես առաւել պարտաւորական շեն կարող լինել ժառանգող տէրութիւնների համար, ու շեն։

---

Դլուխ վեցերորդ.—Միջազգային պարտաւորութիւններ.—Միջազգային պետեր, լրճեր, նեղուցներ, ջրանցքներ, ծովեր և ծովափեայ մասեր. զրանց դերը միջազգային յարաբերութիւնների մէջ։ Սուէզի և Պահամայի ջրանցքներ. Դարդանելի նեղուցը։

ա. Միջազգային գնտեր—Միջազգային են կոչւում այն նաւազնաց զետերը, որ անց-

նում են միքանի տէրութիւնների միջով։ Աղերի քաղաքակրթութեան և փոխազարձ յարաբերութիւնների մէջ դետերն իրը հաղորդակցութեան միջոց, միշտ յայտնի դեր են կատարել և կատարում, ուստի և նրանց վրա նաւազնացութիւնը կանոնաւորելու համար միջաղղային կեանքի մէջ շատ անգամ զաշնապեր են կապւել և պարտազիր կանոններ են սահմանւել։ Առաջին այդպիսի զաշնապիր կապւել է Ռէյն գետի վրա նաւազնացութեան ազատութեան մասին 1815 թ. Վենեայի համաժողովում։ Նախքան այդ զաշնապիր կնքելը, առհասարակ բոլոր այն երկրներում, որոնց միջով միջաղղային գետեր էին անցնում, նրանց վրա նաւող նաւելի և ապրանքների վրա կամայական հարկեր և մաքսէր էին դըրւում, արգելքներ էին յարուցանուում, որոնցով միանգամայն խանգարւում էր ապրանքների և նաւերի երթեեկութեան կանոնաւոր ընթացքը։

Միջաղղային իրաւոնքի ենթակայ գետերն են Ռէյն, Փօ, Էլբա, Մօզէլ, Մասս, Շելդաս, Գանուը և այլն։

Միջաղղային պարտաւորութիւններով այժմ միջաղղային գետի վրա գտնուող տէրութիւնն իրաւոնք ունի վերցնել այնքան հարկ, որքան անհրաժեշտ է գետի մաքրութիւնը նաւազնաց տէրութեան մէջ պահպանելու և այդ առթիւ

վարչական ծախքերը ծածկելու համար:

Վենական համաժողովով կազմվեց թէյնի համար մի կենդրական յանձնաժողով գետափնեայ տէրոթիւնների ներկայացուցիչներից, որ պիտի կառավարէր և հսկողութիւն ունենար զետի համար նշանակած ստորին վարչութիւնների վրա։ Աւելիորդ հաշւելով մանրամասն խօսել այդ խնդրի առթիւ, ասենք որ միւս զետերի միջոցով առետրական յարաբերութիւնները պահպանելու համար կազմած համաձայնութիւնների հիմք ծառայել է թէյնի (Հռենոս) համար կազմած գաշնազիրը և յատկապէս նրա այն կէտը թէ միջազգային զետերի վրա առետուրն ազատ է որիէ արգելքներից։ Պատերազմի ժամանակ, սակայն, որքան էլ միջազգային զետերն ազատ լինին, այնուամենայնիւ զետափնեայ տէրութիւններն իրաւունք ունին արգելել պատերազմի համար նշանակւած մժերեղլնների և զինքերի մարտանենդութիւնը։

Միջազգային զետերի մասին կապած գաշնազիրից յայտնի է նաև Դանստրեան գաշնազիրը, որ 1856 թ. Փարիզեան Վեհաժողովով անցել է ժողովին ներկայ գտնաող պետութիւնների հսկողութեանը։ 1840 թ. Դանուրի վրա հազարզակցութեան իրաւունքը դաշնազըով, Աւստրեան և Ռուսեան էին միայն իրաւատէր՝

կարգաւորելու Դանուրի միջոցով առևտրական յարաբերութիւնների խնդիրը. սակայն ինչպէս տեսանք Փարիզեան համաձայնութեամբ այդ իրաւունքն անցել է Եւրոպական տէրութիւններին. Դանուրի նաւազնացութեան կանոնաւորութեան և այլ մի շարք խնդիրների համար կազմւել է և այժմ զոյութիւն ունի Դանուրեան Եւրոպական Յանձնաժողով, որին մասնակցում են Անգլիան, Ռուսաստանը, Ֆրանսեան, Գերմանեան, Աւստրեան, Իտալիան, Տաճկան, այսինքն քացի Եւրոպական բոլոր մեծ տէրութիւններից, այդ Յանձնաժողովովին մասնակցում են նաև Դանուրի գետավնեայ բոլոր շահագրգուած տէրութիւնները. Ի վերջ ասենք որ 1885 թ. Բերլինի համաժողովում ընդունվեց Կօնգո (Աֆրիկայում) գետի և նրա ամրոց ջրարաշխի նաւազնացութեան ազատութիւնը միջազգային միութեան բոլոր անդամների համար:

թ. Միջազգային ջրանցքներ.— Սուեդի և Գանամայի ջրանցքների պատմութիւնը ամենքին յայտնի է: Առաջինը միացնում է Կարմիր ծովը Միջերկրականի հետ ու գրանով արևմուտքի հաղորդակցութիւնը արագացնում և հեշտացնում է Սրեելրի Հնդկաստանի, 2ինաստանի, Ճապոնեայի և Եւրոպական տէրութիւն-

Ների Ասիական բազմաթիւ կալւածքների հետ. իսկ երկրորդը — Պանամայի ջրանցքը միացնելու է Ստլանտիան և Խաղաղական Ռվիկեանոսները իրար հետ. Երկումն էլ մարդկային խելքի հանձարեղ ձեռնարկութիւններ են ու բաղաքակրթութիւն տարածող առաջնակարգ միջոցներ:

1888 թ. Կոստանդնապօլում կայացրած համաձայնութեամբ պարտաւորութիւններ սահմանւեց Սուէզի ջրանքով օգտιելու նկատմամբ. այդ դաշնազրով ջրանցքն ազատ է միջաղղային ամենատեսակ հաղորդակցութեան համար. Պատերազմի դէպքում նա չի կարող որեւէ թշնամական գործողութեան ենթարկւել, ու նրա ջրերում ընդհարումը պատերազմող կողմերի մէջ անթոյլատրելի է. Պատերազմական նաւերը շեն կարող ջրանցքում կանգ առնել Պօրտ-Սահիտի և Սուէզի նաւահանգստներում պատերազմի ժամանակ, իսկ խաղաղ ժամանակ պատերազմական միայն երկու նաւ կարող են միտժամանակ կանգ առնել այդ նաւահանգստներում. Ջրանցքի վրա հսկողութիւնը թողնւած է Եղիպատոսում գտնւող տէրութիւնների ներկայացուցիչներին:

Պանամայի ջրանցքը դժբախտաբար ցարդ անկատար է մնացել. Միացեալ նահանգների կառավարութիւնը երկար բանակցութիւններից յետոյ, վերջապէս նոր կազմւած Պանամայի

փոքրիկ հասարակապետութեան հետ համաձայնութիւն կնքեց, որով այն ջրանցքը անցկացնելու պարտաւորութիւններն ու ոեփականութիւննը որոշ պայմաններով փողով զնեց ու յուսալի է, որ մօտիկ ապագայում քաղաքուկիրթ աշխարհը կտեսնի երկու միծ ովկեանոսների միանալը՝ այդ հսկայական ձեռնարկութեամբ։

զ. ծովեր, ծովափնեայ մասեր. — Ծովերի և Ովկեանոսների մասին ընդհանուր սկզբունքն այն է, որ նաւագնացութիւնը ոչ մի արգելրի չի կարող պատահել բաց ծովում, որովհետեւ բաց ծովը ոչ որի ոեփականութիւն չի կարող լինել և չէ, նա պատկանում է ամրող մարդկութեանը։ Բաց ծովերի վրա նաւագնացութեան համար ոչ ոք իրաւունք չունի նշանակել ոչ մարս, ոչ հարկ և ոչ որեւէ տեսակի տուրք, և որովհետեւ ինչպէս մի անզամ ասել ենք ամեն նաւ ներկայացնում է, իր տէրութիւնը, ուստի և բաց ծովի վրա նա այն տէրութեան մասն է կազմում, որ տէրութեան դրոշակի տակ որ նաւում է։

Ծովերի վրա ազատ նաւագնացութիւնը սահմանափակում է միայն Միջաղղային համաձայնութեամբ արգելած ապրանքների առետրի համար։ Այդ տռետուրը գերիների-նեգրերի առետուրն է զլիսաւորապէս։ Գերիների առետրի

Համար վերջին ընդհանուր համաձայնութիւնը կայացաւ 1885 թ. Բերլինում, որի հիմամբ բաց ծովի վրա ինչ ազգի նաւ էլ լինի, պիտի ձերբակալի և պատասխանառութեան ենթարկվի:

Երկրորդ արգելքը ծովային աւագակութեան դէմ է, որ այժմ արգէն համարեա բոլորովին վերացւած է միջազգային համաձայնութեամբ ձեռք տռած մի շաբթ միջոցներով:

Ծովափնեայ տէրութիւնները լիազօր տէր են ծովի այն մասին, որ միջազգային համաձայնութեամբ հաշւում է սեփականութիւն ծովափնեայ տէրութեան. այդ տարածութիւնը 3—5 Անգլիական մղոն է, որից այն կողմ բաց ծովը միջազգային սեփականութիւն է, ուստի և ծովափնեայ տէրութեան սահմաններից դուրս. Այն ծովախորշերը, ծոցերը նեղուցները և այլն, որոնք մի տէրութեան սահմանի մէջ գտնւած ծովի մասերն են կազմում, միջազգային օրէնքներով դոքա գտնւում են այդ տէրութիւնների լիակատար կարգադրութեան տակ՝ իբր սեփականութիւն:

Դ. Միջազգային նշանակութիւն ունեցող նեղուցներ. — Այդիսի նեղուցներ են Դարդանելի նեղուցը, որի բանալին գտնւում է Թուրքեայի ձեռքում, և Զիրքալտարի նեղուցը,

որի բանալին զտնւում է Անգլիայի ձեռքում, այն տարբերաւթեամբ որ Անգլիան ոչ մի պարտաւորութիւն չի յանձն առած իր Ֆիբրալտարի առաջ բռնած ռազմական դիրքի նկատմամբ, մինչ դեռ Թուրքեան, որոշ գաշնազրերով Դարդաննելի մուտքը պահելու նկատմամբ, պարտաւորութիւններ ունի, որոնք միջազգային հակողութեան տակ են զտնւում։ Դարդաննելի մուտքը բոլոր ազգերի առեստրական նաւերի համար ազատ է, բայց ոչ առանց հակողութեան։ իսկ պատերազմական նաւեր ոչ կարող են նեղուցը ներս մտնել և ոչ էլ գուրս դալ, բացի գեսպանատների համտր նշանակւած պատերազմական փոքր նաւերից, որոնց մուտքը դէպի Պօլիս և Միջերկրական ծով կամ Սև ծով՝ ազատ է։ Ֆիբրալտարը ազատ է և առեստրական և պատերազմական նաւերի համար ամեն ժամանակ։ Անգլիայի դերը նրա նկատմամբ կարտայայտի միայն պատերազմի ժամանակ՝ իր և մի այլ թշնամի տէրութեան մէջ։

Դարդաննելի նկատմամբ իր նորութիւն—գա ութսունական թւականներից սկսած Ռուսաց «Կամաւոր նաւատորմի» ազատ անց ու դարձ անելն է այդ նեղուցով։ Կամաւոր նաւատորմի նպատակը ճշմարիտ է, խաղաղ և կուլտուրական են, սակայն նա որոշ շափով նաև պատերազմի ժամանակ, օժանդակ նա-

ւատորմի թնաւորութիւն ունի, Ինչ էլ որ լինի,  
«Կամուռ Նաւատորմի» աղատ անցըը Դար-  
դանելի նեզուցով ուրախալի երկոյթ է Ռուս-  
աստանի լայնածաւալ շահերի տեսակէտից:

#### IV

Գլուխ եօթերոքդ.—Միջազգային վէճեր  
եւ թիւրիմացութիւններ վերացնելու միջոց-  
ները.—Էայ արդեօք միջազգային կազմակեր-  
պութիւն՝ լուծելու այդ բարդութիւնները.—  
Բոնի միջոցներ։ Պատերազմ.—Նրա իրաւունքը.  
պատերազմ վարելու ձեր, գերիններ, զրաւովի  
իրաւունքը, ծսվային պատերազմ։ Զեզորու-  
թիւն։ Պարտաւորութիւններ և իրաւունքներ  
պատերազմի ժամանակ՝ տռետրի մասին։

Միջազգային յարարերութիւնների մէջ  
եթէ հեարաւոր լինէր այնպիսի զրաւթիւն, որ  
ոչ մի վեճի, բնդհարմոն առիթ չլինէր և որ  
տերութիւնների փոխադարձ պարտաւորութիւն-  
ներն ու իրաւունքներն այնպիսի որոշ պայ-

մանների մէջ լինէին, որ ամեն վէճ և թիւրի-  
մացութիւն վերջանար խաղար ճանապարհնե-  
րով, եթէ հնար լինէր, որ նորա իսկի առաջ  
շպային, իհարկէ շատ լաւ կլինէր։ Սակայն իրա-  
կանութիւնը մեզ ցոյց է տալիս, որ այդ թիւ-  
րիմացութիւններն ամեն օր կան, որ վէճերն  
ամեն օր ծագում են, և որ տէրութիւնների  
շահերի ընդհարումներն ու դրանից բարդու-  
թիւններ առաջ գալու երկիրկն անընդհատ կայ։  
Քանի կան հակազիր շահեր և ձգտումներ,  
բանի կան ընդհարման բազմահստել պատճառ-  
ներ, միշտ էլ կլինին վէճեր և իրաւունքի խրն-  
դիրներ։ Այն տէրութիւնը, որի շահերը մնաս-  
ւել են, որի միջազգային իրաւունքները խախ-  
տել են, ընականաբար պիտի պահանջէ, որ այդ  
խախտւած իրաւունքներն ու շահերը վերա-  
կանգնին։ Այդ բանը թելագրում են իր ինք-  
նիշխանութեան իրաւունքը և միջազգային իրա-  
ւունքը, որովհետեւ ամեն մի տէրութիւն իրը  
միջազգային միութեան անդամ, միջազգային  
յարաբերութիւնների մէջ իրաւունք ունի պըն-  
դելու իր այն իրաւունքների վրա, որ միջազ-  
գային համաձայնութիւններով և կեանքով են  
սահմանւած։ Դրա հիման վրա էլ իրաքանչիւր տէ-  
րութիւն իրաւունք ունի պաշտպանել իրեն  
պատկանած իրաւունքներն ու շահերը բոլոր  
օրինական միջոցներով։

Միջաղպային իրաւոնքի առարկան այս  
խնդրում տէրութիւնների իրաւոնքներն ու շա-  
հներն են. իսկ մասնաւոր անհատների կամ ըն-  
կերութիւնների իրաւոնքով և շահներով զրադ-  
ուում է այն շափով, ինչ շափով որ նա վերաբե-  
րում է այն տէրութեանը, որի հպատակն են նոքա:

Միջաղպային յարաբերութիւնների մէջ  
յարուցւած վերջին տեսակի խնդիրներից յի-  
շնք Վենեցուէլլայի խնդիրը և Թուրքեայի հետ  
Կ. Պօլսի ծովափերի խնդիրը. Եռաջին դէպ-  
րում իրենց հպատակների շահները պաշտպա-  
նելու գուրս եկան Գերմանեան, Իտալիան և  
Ենգլիան. իսկ երկրորդ դէպրում Փրանսիան,  
Վենեցուէլլայի վէճի ժամանակ դաշնակից այդ  
տէրութիւնները խնդրի լուծման համար գէնքի  
գիմեցին՝ արարկու զրահակիրներով. իսկ եր-  
կրորդ դէպրում Փրանսիան քաղաքական ճըե-  
շողութիւն զօրծ դրեց ու խաղաղ միջոցներով  
պաշտպանեց իր հպատակների շահներն ու իրա-  
ւոնքները:

Խախտւած իրաւոնքների վերականգ-  
նելու եղանակները. — Խնչպէս տէրութեան  
ներքին կեանքում, քաղաքացիական յարաբե-  
րութիւնների ժամանակ իրաքանչիւր խախո-  
տւած իրաւոնք առաջ է ընդունվութիւն և իրաւոնքների  
պաշտպանութիւն, այնպէս էլ միջաղպային յա-

բարերութիւնների ժամանակ տէրութիւնների մէջ ծագած ընդհարումների ժամանակ, առաջ է գալիս խախտւած իրաւունքների պաշտպանութիւն՝ հեարաւոր եղած օրինական միջոցներով: Միջազգային յարաբերութիւնների ժամանակ տէրութիւնների մէջ ծագած թիւրիմացութիւնների և վէճների լուծման երեք խումբ միջոցներ են թւում միջազգային իրաւագէտները:

ա. Գործնական եղանակներ, երբ ուժ է գործ դրւում որևէ ծագած վէճ վերջացնելու համար:

բ. Բռնի միջոցներ. բռնի միջոցներ են կոչւում այն գործողութիւնները երբ մի տէրութիւն իր խախտւած իրաւունքների վերականգնելու նպատակով գործ է զնում մի ուրիշ տէրութեան դէմ: Այդ միջոցները տարրեր գործադրութիւն ունին խաղաղ ժամանակում և այլ գործադրութիւն պատերազմի ժամանակ: Բռնի միջոցներ գործադրելու ձեռնարկելու համար, պէտք է նախ ապացուցւած լինի, այդ միջոցները գործադրել ուզող տէրութեան իրաւունքների իրավէս խախտւելը. և երկրորդ իրաւունք խախտող պետութեանը դիմելիս նա բաւարարութիւն շէ տւել. Բռնի միջոցների գործողութիւնը կարսղ է ուղղւած լինել դէպի իրաւունքները խախտող տէրութեան կայքը և իրաւունքները և երկրորդ մասնաւոր

անհատների ստացւածքն ու իրաւունքները:  
Բոտ այդմ բռնի միջոցներ գործադրող տէրու-  
թիւնը իրաւունք ունի զրաւել իր իրաւունքը  
խախտող տէրութեան հպատակների կայքը և  
ստացւածքը, որոնք մնում են զրաւողի մօտ  
մինչի նրա բաւարարութիւն ստանալը, Երբեմն  
ծայրահեղ դէպքերում այդպիսի զրաւման են-  
թարկւած կայքերն ու ստացւածքները շեն վե-  
րադարձնուում, այլ հաշւում են հասցրւած վը-  
նամները բաւարարելու դէմ: Բայի զրանից  
կարող է այդ տէրութիւնը իր սահմանները  
փակել զրկանք հասցնող տէրութեան հպա-  
տակների առաջ, այդ տէրութեան հպատակ-  
ների իրաւունքները կրծատել, սահմանափակել,  
ծայրահեղ դէպքերում, եթէ կարիք կայ, նոյն  
իսկ բանգարեկել: Բո՞նի միջոցներին ենթակայ  
շեն զրկանք հասցնող տէրութեան ներկայա-  
ցուցիչներն ու առհասարակ քաղաքական գոր-  
ծակալները:

Բոնի միջոցների նկատմամբ այն հայ-  
եացքն է տիրապետում միջազգային յարաբերու-  
թիւնների մէջ, որ մասնաւոր անհատների ստաց-  
ւածքին չովեաք է վերաբերեն այդ միջոցները,  
որովհետեւ մասնաւոր մարդիկ պատասխանատու  
շեն իրանց կառավարութեան գործովութիւն-  
ների փոխարէն: Եերենք բռնի միջոցներ գոր-  
ծադրելու մի օրինակ: 1850 թ. Եթէկում

ամբոխը յարձակւեց հրէայ Պաշիֆիկոյի խա-  
նութի վրա և թալանեց. նա պահանջ յայտնեց  
յունաց կառավարութեանը 22,000 ֆ. ստեր-  
լինգի չափ ՚ի դիմաց իր կրած վնասների:  
Այդ պահանջը կառավարութիւնը թողեց առանց  
հետևանքի: Պաշիֆիկոն դիմեց Անգլիական  
կառավարութեանը և խնդրեց նրա պաշտպա-  
նութիւնը, թէ և ինքը նոյն իսկ անգլիահա-  
տակ չէր. Անգլիական կառավարութիւնը 24  
ժամ ժանանակ տւեց Յունաց կառավարութեանը  
բաւարարութիւն տալ Պաշիֆիկոյի պահանջին,  
սպառնալով հակառակ գէպքում դիմել բռնի  
միջոցների երբ այդ ժամանակն անցնելուց  
յետոյ Յունաց տռավարութիւնը անհետանեք  
թողեց այդ պահանջը, Անգլիական կա-  
ռավարութիւնը հրամայեց իր նաւատօրմին  
զրաւել Յունաց թէ պատերազմական և թէ առ-  
հարական նաւերը, սակայն նախրան գործա-  
դրելը, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջամտու-  
թեամբ խնդիրը վերջացաւ 15,000 ֆ. ստեր-  
լինգի վճարումով Պաշիֆիկոյի վնասների փո-  
խարէն:

Պատերազմի ժամանակ գործադրւող բրո-  
նի միջոցներն աւելի խիստ են և իրապէս պա-  
տասխան են այն խոտութիւնների, որ ցոյց է  
տալիս պատերազմով հակառակ կողմը: Եյս-  
պէս, երբ 1877 թ. Ռուս-Թուրքական պատե-

բազմի ժամանակ ապացուցւեց որ թուրք բաշիրովունիսերը ուստի գերիների հետ վայրենաբար են վարում. ՚ի պատասխան այդ միջոցների թուրք գերիների հետ սկսեցին նոյն ձեռվ վարւել. Բայց առնաստրակ Թուրուտատանը այդ պատերազում մարդասիրաբար էր վարում գերիների հետ.

Է. Բռնի միջոցների մեղմ ձեւ, որ ուղղած է ոչ թէ որևէ տէրութեան կայքի կամ իրաւունքների գէմ և զբա զործադրութեան որևէ տէրութիւն դիմում է, ոչ թէ նրա համար որ մի այլ տէրութիւն իր իրաւունքները խախտել է, ոչ, այլ մեղմ ձեր բռնի միջոցը զործ է դնում մի տէրութիւն իր երկրի օրէնքների հիման վրա, իր ցանկութեան համեմատ, առանց ՚ի նկատ առնելու թէ դրանով շոշափում են մի այլ տէրութեան շահեր.

Եղտօփիսի բռնի միջոցը կարսղ է լինել մարսերի տւելացնելը, որ բնականաբար կարսղ է նոյն միջոցն առաջ բերել և հակառակ կողմից. կոմ մէկն իր սահմանի վրա բերդեր է կանգնեցնում, միւսը նոյն միջոցն է զործ զբնում իր սահմաններում. Եյսինքն միջոցներ, որ իրօք իրար գէմ են ուղղւած, սակայն երկու կողմից էլ իրաւունքների խախտումն չէ:

Յ. Բռնի միջոցների շաբքին է պատկանակ մի միջոց — կմրարզո. Տէրութիւններն

այդ միջոցով բանդարկում են նաւերը, նրա վրայի ապրանքն ու նաւի վրայի ծառայողներին։ Եյսպիսի բանդարկութիւնը կարող է տեղի ունենալ սանիտարական-ոստիկանական հակո-դութեան համար։ Նաւերն այդպիսի բանդար-կութեան ենթարկում են խաղաղութեան ժա-մանակ մինչի բանդարկողի պահանջներին բա-ւարարութիւն տրւելը, ասել է զա մի ժամա-նակաւոր գործողութիւն է։ Բանդարկութեան ենթարկում են նաւերը նաև պատերազմական գործողութիւններ սկսելուց առաջ։ Պատերազ-մի ժամանակ բռնւած կամ բանդարկւած նա-ւերի կանոնաւոր բռնւած լինելու և շլինելու համար ամեն տէրութիւն նշանակում է պատա-րաններ, որոնք քննում են այն խնդիրը, թէ պատերազմական նաւերն իրաւունք ունեին այդ նաւը բռնելու թէ ոչ։ Դրական սրոշման գէպքում նաւն իր ապրանքներով գրաւում են, իսկ նաւաստիրերն ու այլ պաշտօնեաներն ար-ձակում են, եթէ նաւը պատերազմական է, նրա վրայի զտնւած ծառայողները հաշւում են պատերազմական զերիներ։ Նա, ով զժզոհ է պատարանի յայտնած վճռից, կարող է վճռա-ջինջ բոլոր ներկայացնել որոշ ժամանակի մի-ջոցում, հակառակ գէպքում վճիռն անարգել գործադրում է։

4. ըռնեի միջոցների մէջ առանձին տեղ է

բռնում այն միջոցը, որ մի տէրութիւն առանց պատերազմ յայտնելու, իր խախտւած շահերը պաշտպանելու և կրած վիասները փոխարինելու համար իր նաւատորմով կտրում է այդ երկրի հազորդակցութիւնը գրսի աշխարհի հետ՝ ջրով։ Ճանապարհի փակումը որպէս զի օրինաւոր և ընդունելի լինի, պէտք է իրավես խուած լինի մուտքը դէպի այդ տէրութիւնը։

Պատմութիւնը այդ օրինակ բռնի զործողութիւնների օրինակիներ չտա է տեել և տալիս, բերենք մի քանիսը։

Տառն և լիներորդ դարում առաջին անգամ բռնի ճնշման այդ միջոցին զիմնեցին Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան թուրքիայի դէմ, Թուրք-յունական պատերազմներին վերջ տալու համար։ 1827 թ. այդ տէրութիւնները Թուրքիայի յարաբերութիւնները Յունաստանի ծովափների հետ կտրելու համար, իրենց նաւատորմով փակեցին Թուրքաց նաւերի ճանապարհը։ Առանց պաշտօնապէս պատերազմ յայտնելու և պատերազմական գործողութիւններին ձեռնարկելու, միացեալ տէրութիւնների նաւատորմը նաւարինեան ծովածոցում։ 1838 թ. Հնայելով այն հանգամանքին, որ Ֆրանսիայի նաւատորմը փակել էլ ծովով դէպի Մերսիքա մուտքը, այնուամենայնիւ Ֆրանսիական

դիտումատիան յայտարարում էր թէ ինքը չի  
պատերազմում, այլ միայն մուտքը փակում  
դէպի Մեքսիքա. իսկ այդ բռնի գործողու-  
թիւնը տեսակա տարի. 1839 թ. Մեզլիան  
և Փրանսեան միացած նոյն միջոցը գործ գրին  
Արգենտինեան հասարակապետութեան դէմ ին-  
եր տարի շարունակ:

1863 — 65 թ. Միացեալ նահանգների  
պատերազմի ժամանակ նոյն միջոցները են  
գործադրել Հիւսիսային նահանգները Հարա-  
րաւայինների ծովային հազորդակցութեան վե-  
րաբերմամբ: Մեր օրերում արդէն Գերմանիան,  
Մեզլիան և Իտալիան իրենց նաւատորմով կըտ-  
րիլ էին Վենեցուէլլական խնդրի ժամանակ  
նրա ծովային հազորդակցութիւնը:

Դիտութեան մէջ երկու հայեացք կայ բռնի  
այդ միջոցի գործադրելու մասին: Մի հայեաց-  
քով այդ գործողութիւնը հաշւում է անմար-  
դասէր վնասակար, ու իր հետեանքներով ա-  
ւելի օտար, չիզօք տէրութիւնների շահերին է  
դիպչում, քան բռն այդ կտրւած տէրութեան,  
իսկ ընդհանրապէս վնասում են մասնաւոր  
շահեր:

Եյդ միջոցի մասին միւս հայեացքը տ-  
սում է, թէ պատերազմը և թէ դա, երկուսն  
էլշարիք են, մէկը մեծ, միւսը փոքր. եթէ մեծ  
շարիքն օրինական է, փոքրն աւելի ևս, եթէ

մեծ շարիքը գործադրելի է, այն ժամանակ  
աւելի լաւ է որ փոքր շարիքը գործադրվի:  
Մինչ մեծ շարիքը առաջ է բերում մարկային  
սարսափելի զոհեր, փոքր շարիքը միայն բռնի  
ճնշողութիւն է, առանց այդ զոհերի: Ցեղոյ  
մի այսպիսի համեմատութիւն է անւում, — եթէ  
որիէ փոքր տէրութեան դէմ միջոցներ պիտի  
ձեռք առնեի, համեմատաբար որն է աւելի  
մարզասէր, պատերազմը, թէ ծովային հա-  
զորդակցութեան խաղաղ միջոցով ընդհատիլը:  
Մինչ պատերազմը կարող էր ոպառնալ նրա  
զոյսութեանը, այդ միջոցը միայն ծովով դէպի  
այդ երկիրը մուտքն է փակում, և եթէ առ-  
հասարակ կարելի է փոքր մի տէրութեան դէմ  
պատերազմ յայտնել, ինչու չի կարելի, նրա  
դէմ միայն մի փոքր գործողութիւն ձեռք առնել:

Այժմ անցնենք բռնի միջոցներից ամենա-  
ծայրահեղին՝ պատերազմին:

5. Պատերազմ: Միջազգային յարարե-  
րութիւնների մէջ, եթէ վերսիշեալ բռնի մի-  
ջոցներով հնար չէ եղել լուծել վիճելի խրն-  
դիքները, կամ վերականգնել խախտած իրա-  
ւունքները, ազգերը դիմել են պատերազմին,  
իրեն բռնի միջոցներից ամենից վերջին ծայրին,  
Պատերազմը ազգերի կեանքի մէջ մեշտ ամե-  
նաընդարձակ գործադրութիւն է ունեցել ու

րոնի միջոցների մէջ ամենաանմարդասէրն ու անարդարն է:

Պատերազմի էութեան մասին դանազան հայեացըներ կան: Ասաւածաբանները զրա մէջ Աստւածային պատիմն են տեսնում, մարզոց մելքերի հատուցման համար: Փիլիսոփաները նայում են զրա վրա իրր անհրաժեշտ շարիքի, որ հարկաւոր է մարդկային կեանքի կանոնաւոր ընթացքի համար: Հիգեին ասում է, «պատերազմը բացարձակ շարիք չէ. այլ ընդհակառակը ազգերի առողջութիւնն է ամրապնդում»: Երրարդ հայեացըով պատերազմը դոյսւթեան կռիւ է, ուստի և չի կարելի ոչ լաւ և ոչ վատ անւանել. այդ հայեացըով նա մի ճակատագրական անհրաժեշտութիւն է, որի գէմ մարդկային կամքն անզօր է: (Այդ հայեացըն են յայտնում նաև առհասարակ պատերազմական դրոզները. Մօլտկէ և այլք): Պատերազմի մասին շորորդ հայեացը իրաւաբանների է, որի վրա նրանք նայում են իրաւունքի տեսակէտից: Նոցա հայեացըով զա մի անխուսափելի հետեանք է մարդկային քաղաքակրթութեան և պետական կեանքի անկատարելութեան ու մի ճակատագրական անխուսափելի անհրաժեշտութիւն չէ, որի գէմ մարդու կամքն անզօր լինի: Այլ ընդհակառակը մարդկութիւնը քանի աւելի է քաղաքակրթուում, պետական կազմա-

կերպութեան մէջ քանի տւելի է հեռացնուում է այն պատճառները որ առիթ են տալիս պատերազմների, այնքան տւելի հնարաւոր է լինում խուսափել պատերազմի վտանգից և ընդհարման հաւանականութիւնից:

Պատերազմի իրաւունքը, նախընթաց երեսներում մենք տեսանք որ միջազգային բարգութիւններն առաջ են զալիս որևէ տէրութեան իրաւունքների խախտումից, և իրարանշչւր այն դէպքում, երբ խախտւել է մէկի իրաւունքը, նա ստիպողական միջոցներ է ձեռք տոնում վերականգնելու իր իրաւունքները, կամ պաշտպանելու իր այն իրաւունքները, որ մի այլ պետութեան կողմից խախտւելու վրանգի մէջ են: Ասել է իրաւարանական այն հիմունքները (նորմ) և դրանց հիման վրա մի տէրութեան կողմից ստիպողական միջոցներ զործագրելն իր շահերի պաշտպանութեան համար, կազմում են ստիպողական միջոցների իրաւունքը (право приぬжденія): Այդ իրաւունքը միջազգային յարաբերութիւնների մէջ պատկանում է տէրութեանը, իրը մի իրաւան անձի և կարող է զործագրել միայն տէրութեան կամ տէրութիւնների դէմ. և որովհետեւ միջազգային յարաբերութիւնների մէջ մասնաւոր անհատները կարող են ի նկատ տոնուել այն շափով, ինչ շափով որ կազմում

Են օլետութիւնը կազմող միութեան մի անդամ, ուստի և ստիպողական միջոցներ նրանց դէմ պիտի ուղղւած լինին՝ իբր իրաւունք խախառգ անկախ մեծութիւնների դէմ:

Միջազգային իրաւունքների խախտմանը կարող են ենթարկւել 1) տէրութիւնը, 2) մասնաւոր անհատների իրաւունքները և 3) ամբողջ միջազգային միութեան շահները:

1. Կարող են խախտւել տէրութեան, ինչպէս վերեսում արդէն տեսանք, հիմնական իրաւունքը, օրինակ ինքնապաշտպանութեան, անկախութեան, երկրի ամբողջութեան և այլն. երկրորդ այն իրաւունքները որ զաշնազրերով են ձեռք բերւած և երրորդ այն իրաւունքները, որ իրաւաբանական հիմունքների վրա են յենած:

2. Մասնաւոր մարդու իրաւունքների խախտւելու մասին արդէն ասել ենք, ուստի և այդ հիման վրա, այդ դէպքում պահանջատէր կարող է լինել այն տէրութիւնը, որի հպատակին է իրաւունքները խախտւած այդ մարդը. Այսպէս. Թուրքիան Պօլսի ծովափների համար պայմաններ էր կապել մի Ֆրանսիանը-պատակի հետ. երբ նա դէպի այդ մասնաւոր մարդը իր պարտաւորութիւնները չկատարեց, Ֆրանսիան իբր պահանջատէր հանդէս դուրս եկաւ պաշտպանելու իր հպատակին և պահանջել իրաւունքով նրան հասանելի գումարը:

3. Միջազգային կեանքի մէջ կան բաղմաթիւ հակագիր շահեր և իրաւունքներ, որոնք միջազգային միութիւնը կազմով բոլոր տէրութիւնների համար միևնույնն են: ա) Եյգափոխութիւննանուր շահեր ներկայացնում են դաշնապերը: Միջազգային դաշնապերը թէև կապում են մշտական տեսողութիւն ունենալու համար, սակայն իրաքանչիւր նոր ժամանակի պահանջի համար կարող է հետացած լինել նախկին դաշնապերը որոշումները, հետեաբար և պիտի փոփոխութեան ենթարկելին նոր ժամանակի պահանջի և սպու համաձայն: Միջազգային յարաբերութիւնների մէջ այդ փոփոխութիւնը շի կարող անել մի տէրութիւն, որ դէպրում խախտած կլինէին ընդհանուրի իրաւունքներն ու շահերը: Դաշնապերի որոշումների փոփոխութեան իրաւունքը պատկանում է այն տէրութիւնների զումարին, որոնք ստորագրել են այդ դաշնապերին ընդհանուր համաձայնութեամբ: Եերենք փաստեր: 1856 թ. Փարիզեան դաշնապերի Ռուսաստանն իրաւունքը չունէր Ահ ծովում հաւատորմ պահելու և բերդեր կառացանելու: Տարիներ յետոյ այդ բանն արդէն անհամապատասխան էր նրա շահերին, ուստի և 1871 թ. Լօնգօնում կայացած միջազգային համաձայնութեամբ Փարիզեան դաշնապերի այդ խնդրին վերաբերեալ որոշումները փոփո-

խութեան ենթարկւեցին, որի հիման վրա Ռուսաստանն այսօր իր Սև ծովեան գորեղ նաւատորմիզն ունի ու ծովային ամրութիւնների մի շաբթ:

Լօնդոնեան համաձայնութիւնը մի յատուկ յօդւած մտցրեց միջազգային պարտաւորութիւնների մասին՝ դաշնազիրների խախտելու նկատմամբ. այստեղ առած է. «Հիւսիսային Գերմանեայի, Աւստրօ-Վենեզըրեայի, Մեծ Բրիտանեայի, Խոպանեայի, Ռուսաստանի և Թուրքիայի ներկայացուցիչները ժողովւելով Լօնդոնի համախորհրդին, ընդունում են միջազգային իրաւունքի հիմնական սկզբունք, որ ոչ մի տէրութիւն չի կարող իրեն աղատ կացնել դաշնազրի պարտաւորութիւններից, և փոփոխել նրա որոշումները ոչ այլ կերպ, քան պայմանագրին սամնակցող կողմերի համաձայնութեամբ, որ ձեռք է բերւած բարեկամական համաձայնութիւնով»:

բ. Երբ մի տէրութիւն ուզում է միւս տէրութիւնների վրա համաշխարային տիրապետութիւն սահմանել. ինչպէս օրինակ նապոլէոն 1-ի օրով Փրանսիական կայսրութիւնը: դ. Առանց նախապէս յայտարարելու և առանց բաւականաշափ առիթների պատերազմի ձեռնարկելը՝ յարձակումի միջոցով: դ. Միջազգային հաղորդակցութեան ճանապարհների վշացնելը,

սրոնք անձեռնմխելի պիտի մնան (Կ. Պօլսի  
համաժողովի սրոշումներ), և, Քաղաքական  
ներկայացուցիչների իրաւունքների խախտումը.  
ըստ այդմ երբ նոյն իսկ վիրաւորանք է, հաս-  
ցնեում նրանց, այդ բանը դժգոհաթիւն և բո-  
զոր է առաջ բերում բոլոր ազգերի ներկայա-  
ցուցիչների կողմից:

Եթե խախտում են տէրութիւնների առաջ  
բերւած իրաւունքներն ու շահերը, ու ձեռք  
առած միջոցներից և ոչ մէկը արդինաւոր ելք  
չի ունենում, այն ժամանակ զրկւած կողմը  
դիմում է պատերազմին, թողնելով որ նա որո-  
շէ իր իրաւունքները:

Պատերազմը պաշտօնապէս չի յայտաբար-  
ւում սովարաբար, բայց պահանջւում է, հա-  
րակօրէն, քաղաքական ներկայացուցչի միջո-  
ցով, տեսլեկացնել պատերազմ սկսելու մտա-  
դրութեան մասին և ոչ թէ յանկաբծակի յար-  
ձակւել։ Պատերազմ յայտնելու միտքն ունի  
նաև երկու ընդհարման մէջ զտնւող տէրու-  
թիւններից մէկի վերջնագիրը (ուլտիմատում):

Որպէս զի մի պատերազմ լինի օրինաւոր  
թէ իրեն առաջ բերող պատճառների կողմից  
և թէ պատերազմը վարելու եղանակի նկատ-  
մամբ, նա պիտի պարտաւորապէս համապատա-  
սխանի միջաղղային իրաւունքի հիմունքներին։

Միջազգալին վէճերի առիթները մեզ  
պարզ կերպով ցոյց են տալիս, որ պատե-  
րազմն օրինաւոր է, եթէ վարւում է տէրու-  
թեան հիմնական իրաւունքների պաշտպանու-  
թեան համար: Նա օրինաւոր է նաև այն դէպ-  
քերում 1) երբ ազատարար նպատակներ ունի,  
ինչպէս Արևելեան քրիստոնեանների ազատու-  
թեան համար Ռուսաստանի պատերազմները  
Թուրքեայի հետ. 2) երբ մի ժողովուրդ իր  
ազգային անկախութիւնն է պաշտպանում.  
3) երբ մի տէրութեան աշխարհակալական  
ձկտումների դէմ է ուզգւած և այլն: Այդպիսի  
արդար և օրինական պատերազմների շար-  
քումնեն Հիւսիսային Ամերիկայի, Կուրայի,  
Բրազիլեայի, Յունաստանի, Սերբիայի, Բոլ-  
ղարեայի և այլն ազստամբութիւնները:

Ազգերի քաղաքական կեանքը առաջ է բե-  
րել տէրութիւնների շահերի ընդհարման նաև  
այլ աստղաբեզներ: Հակազիր այդ շահերը կառ  
զուտ քաղաքական են և կամ քաղաքակրթա-  
կան-տնտեսական: Առաջին դէպքում տէրու-  
թիւնների աշխատում են միջազգային բարդ  
խնդիրների մեջ քաղաքական դերակշռող ազ-  
գեցութիւն ձեռք բերել, ու այդ խնդիրների  
լուծումն իրենց շահերի տեսակէտից անել տալ:  
Այդպիսի կնճռոտ միջազգային խնդիրներից են  
Հեռաւոր և Մերձաւոր Արևելքի խնդիրները, և

զաղթականութեմիւններ ձեռք բերելու և այդ  
տոթիւ իրար հետ մրցելու քաղաքականութիւնը:

Կուլտուրական-տնտեսական մրցման մէջ, ա-  
ռաջինը արդիւնարերութեան պատելու, շուկայի  
խնդիրն է, որին կից է նաև քաղաքակրթական  
միջոցների տարածումը: Տէրութիւնների հա-  
կադիր շահերի մէջ քանի գնում աւելի ու ա-  
ւելի է առաջ մզւում տնտեսական շահերի հա-  
մար մրցումը:

Ինչ պատճառներից էլ ծագած լինի պա-  
տերազմը, նրան զրգող հանգամանքները որ-  
քան էլ արդարացի լինին, իրաւունքի տեսա-  
կետից, այնուամենայնիւ պատերազմը կայ և  
կմնայ իրր շարիք և թիւրիմացութիւնները լու-  
ծելու մի անսարդատէր միջոց: Ուստի և միջ-  
ազգային կեանքում զլխաւորապէս 19-րդ դա-  
րում, մշակւել են պատերազմից առաջացած  
սարսափները և անարդարութիւնները մեղմա-  
ցնելու և վերջացնելու մասին միջոցներ: Այդ  
մտքով առաջին քայլն եղել է 1780 թ. Եկա-  
տերինա 11-ի նախաձեռնութեամբ Եւրոպական  
շեղոք տէրութիւնների մէջ կայացած համա-  
ձայնութիւնը, որ կոչում է «Զինամած շեղոքու-  
թիւն»: Այդ համաձայնութիւնը հետեւալ որո-  
շումներն է կայացրել 1) նաւագնացութեան  
ազատութիւն դէպի պատերազմով կողմերի  
նաւահանգիստներն շեղոք տէրութիւնների նա-

ւերի և ապրանքների համար. 2) պատերազմովի սեփականութիւնը շեղոք տէրութեան նաւերի վրա անձեռնմխելի է, բացի պատերազմական մժերեղէնը. 3) արգելւած ապրանք կարող է կոչւել զէնքը, և պատերազմական պէտքերի համար առարկաները. 4) այն նաւահանգիստն է արտաքին հաղորդակցութիւնից կտրւած հաշւում, որը իրապէս շրջապատւած է թշնամու պատերազմական նաւերով։ Փարփղեան 1856 թ. համաձայնութեամբ սահմանում է ծովային պատերազմների ձեերը. 1864 թ. Ժենեվեան համաձայնութիւնը վերաբերում է վիրաւորւածներին ցոյց տալիք խնամքին. Այդ որոշմամբ, որին միացած են բոլոր աէրութիւնները (Ճապոնիան 1886 թ. ոկտած) պատերազմով երկու կողմերն էլ հաւասարապէս պարտաւոր են խնամք տանել վիրաւորւածներին։ Այն տեղերն, ուր վիրաւորւածները բժիշկներն ու բոլոր ծառայովները են, չեն կարող ենթարկել որիէ թշնամական դործովութեան։ Առողջացած, բայց պատերազմի անընդունակ թշնամի զինւորականները պէտք է վերազարձնեին հայրենիք, իսկ սպատերազմի ընդունակները պիտի մնան իբր պատերազմական դերի։ Վիրաւորւածների նշանը Խաչն է լինելու սպիտակ կտորի վրա։

1868 թ. Պետերբուրգեան համաձայնու-

թիւնով արգելւեց գործ զնել պայթուցիկ նիւթեր մի ֆունտից պակաս ծանրութեամբ։

1874 թ. կայացաւ Բրիւսսելիան միջադպային համաժողովը Ալէքսանդր Ա կայսրի նախաձեռնութեամբ. որով պատերազմով տէրութեան բնակիչները երկու մասի կարելի է բաժանել 1) պատերազմին մասնակցող կամ օժանդակադիմ և կամ դօրքի մէջ գտնւած՝ սակայն զսրծունեայ դեր չկատարող անձեր, որոնք զերի ընկնելիս, 'ի նկատ պիտի առնւեին իրր պատերազմական գերիներ և 2) պատերազմին ոչ մի մասնակցութիւն ցոյց շտւող խաղաղ ազգաբնակութիւն, որոց իրաւունքներն անձեռնմխելի են, երկրորդ զլխաւոր որոշումը վերաբերում է զրաւած երկրի կայքին, որտեղ մասնաւոր սեփականութեան իրաւունքն անձեռնմխելի է իսկ զրաւած տէրութեան ամբողջ կայքին անձնում է զրաւողի կառավարութեան տակ մինչի զրաւման վերջը։ Մի քաղաք ումբակոծելիս, նրան պիտի ենթարկեին միայն ամրոցները։ Քրաւած քաղաքը աւարի չպիտի մատնեի. և ային։

Պատերազմական գերիներ. Պատերազմի ժամանակ զինաթափ արւած և զերի վերցւած զինւորները կոչւում են պատերազմական զերիներ։ Պատերազմական զերիները հին ժամանակներում ենթակայ էին շատ խստութիւն-

ների։ Նոքա և սպանւում էին և մշտական զերի էին մնում և վաճառւում էին, և որոշ փրկանք ստանալով յետ էին վերադարձնեւում։ Նորագոյն ժամանակների զործ է պատերազմական զերիներին ցոյց տալ մարդասէր վերաբերմունք, ու պատերազմից յետոյ վերադարձնել հայրենիք, Գերութեան ամբողջ ընթացքում նոքա պիտի ստանան ապրուստի ամենատեսակ միջոց, ՚ի հաշիւ պատերազմական տուգանքի։ Դերի վերցւած այն անձինք սրանք լրտեսներ, աւարառուներ և փախուստ տւած զինւորներ են, պատերազմական զերիների շարքին չեն պատկանում։ Եմենախիստ վերաբերմունք ցոյց է տրւում զէպի լրտեսը, որին ենթարկում են պատերազմական ժամանակի դաշտային կոչւած զատարանին։ Պատերազմող կողմերից և ոչ մէկը չպիտի զործ ածէ թրշնամու զէմ այնպիսի միջոցներ, ինչպէս են ջրհորների թունաւորումն, գաւաճանական վերաբերմունք զէպի թշնամին և անպաշտպան կամ արգէն յանձնատուր եղող թշնամու սպանումը, բանակցութեան կամ յանձնատուր լինելու համար յատկացրած, ինչպէս և Կարմիր Խաչի դրօշակի ի շարը զործ դնելը և այն։

Փոխադարձ համաձայնութեամբ պատերազմական զործողութիւնների դաշտարած ժամանակ, երկու կողմից էլ այդ ժամանակաւոր

Խաղաղութիւնը շպիտի խախտւի, այդ ժամանակի ամրողջ ընթացքում։

Պատերազմի ժամանակ գրաւած երկրի վրա գրաւողի իրաւունքի մասին կասենք հատիկալը։ Միջազգային կեանքի մէջ գրաւող տէրութիւնը գրաւած երկրի նկատմամբ այդ երկրի ինքնիշխանութեան օրէնքները չի ոչնչացնում, չի վերացնում, որովհետեւ գրաւումը ժամանակաւոր գործողութիւն է։ Գրաւած երկրի նկատմամբ գրաւողի իրաւունքները գատառտանական-վարչական բնաւորութիւն ունին։ Խաղաղ բակիչների կայքն ու ստացւածքը գրաւողը անձեռնմխելի պիտի թողնէ, նրանց մասնաւոր իրաւունքներին շպիտի գիպշի, այլ ընդհակառակը պիտի ցոյց տայ հարկաւոր ոլաշտպանութիւն գրաւման բոլոր ժամանակի ընթացքում։ Այն քաղաքական կազմակերպութիւնը և քաղաքացիական իրաւունքները որ ունեին գրաւած երկրի ազգաբնակութիւնը, անձեռնմխելի պիտի լինին գրաւող տէրութեան կողմից որոշ սահմանափակումներով, որոնք տեսլի մասնաւոր բնաւորութիւն ունին և վերաբերում են գրաւման ամրողջ ժամանակին։ Եյտէս, գրաւողն իրաւունք ունի արգիլել որ քաղաքական խմբակցութիւններ և ժողովներ կազմւին, տպագրական խօսքի ազատութիւնը կարող է սահմափակել և այն։

Թէկ իւրաքանչիւր զրաւող հարկին ստիպած ժամանակ կարող է զրաւած երկրում իր դատաստանական կարգերն ու օրենքները զործադրել, սակայն ընդհանուր երկրի համար միջազգային սովորութեամբ, զրաւած տէրութիւնների քաղաքացիական գատարանները զօրծում են երկրի պետական օրենքներով այնպէս, ինչպէս և առաջ իսկ ինչ վերաբերում է զրաւած տէրութեան ստացւածքին — զէնքեր, մթերանոցներ, զրատազլուխներ, հարկեր և այլն զորա բոլորն անցնում են զրաւող տէրութեանը. Անշարժ կալւածքները և հասարակական հիմնարկութիւնները և եկամուտի այլ և այլ աղբուրները — երկաժմուղիներ, հանքեր, զործարաններ և այլն անցնում են զրաւողին՝ ժամանակաւորապէս օպուելու իրաւունքով, առանց զիազելու նրանց զոյութեանը.

Ժովային պատերազմ. — Մինչի այժմ մնենք խօսեցինք ընհանրապէս պատերազմի մասին և ցամաքային ղատերազմի ժամանակ պատերազմող կողմերի և զրաւողի մասին. Այժմ անցնենք ծափային պատերազմին. Ծովային պատերազմը նոյնպէս ծայրահեղ բռնի միջոց է, միջազգային վէճերը լուծելու և խախտած իրաւունքները վերականգնելու համար. տարրերութիւնը նրանումն է որ սա լինում է ծովի վրա, ծովային պատերազմի ժամանակ պատե-

րազմող կողմերն իրաւունք ունին զրաւելու իրար նաւեր, իրար մասնաւոր սեփականութիւններ և իւրացնելու չակառակ տէրութեան մասնաւոր սեփականութեան զրաւումն անթոյլատրելի է պատերազմական գործողութիւններն ու դիպլոմատիական յարաբերութիւնները կտրելուց առաջ, չակառակ կողմերն իրաւունք ունին զրաւելու այն բոլոր նաւերը, որ նաւում են թշնամի տէրութեան դրօշակի տակ և նրա անցագրով, Գրաւման ենթարկւած նաւերն ենթարկւում են յատկապէս այդ նպատակի համար սահմանւած, ժամանակաւոր դատարանների, որոնց իրաւասութեան տակ են զրւած զրաւման կանոնաւոր լինելու վճռները. Պատերազմի ժամանակ պատերազմող կողմերի պատերազմական նաւերն իրաւունք ունին բաց ծովի վրա կանգնեցնել ամեն մի նաւ, խուզարկել նաւի թղթերը և եթէ կատկածի են գնում, թէ նաւը պատկանում է թշնամի տէրութեան, բանզարկում են և տանում իրենց նաւահանգիստներից մէկը, եթէ բաց ծովի վրա սրել նաւ հակառակ տրւած նշանին կանգ չառնի, պատերազմական նաւն իրաւունք ունի բոնի միջոցներ գործ գնել նրա դեմ:

Չեզոքութիւն. — Պատերազմի դէպքում չեղաք է կոչում այն տէրութիւնը, որ չեղաք է պահում իրեն դէպի պատերազմող կողմերը,

այսինքն ոչ մի նպաստաւոր միջամտութիւն  
պատերազմաղ այս կամ այն կողմին չի ցոյց  
տալիս։ 2եզրութիւնը լինում է կամաւոր կամ  
բնական, երբ տէրութիւնները կամովին իրենց  
շեզօք են հրատարակում երկու կամ աւելի տէ-  
րութիւնների մէջ պատերազմ ծագելուց յետոյ։  
Եյդ շեզօքութիւնը լինում է դաշնագրական,  
երբ տէրութիւններն իրար հետ որոշ փոխա-  
դարձ պարտաւորութիւններով շեզօքութեան  
դաշնազիր են կնքում, որի հիման վրա պա-  
տերազմի ժամանակ պատերազմովի դաշնա-  
կիցը որոշ պայմանների գորութեամբ շեզօք է  
մնալու և չի միջամտելու պատերազմին։ 2ե-  
զրութեան այդպիսի դաշնագրներն երբեմն  
տրամադրում են միջամտութիւն այն գէպրում,  
երբ պատերազմին կմիջամտի մի երրորդ պե-  
տութիւն ՚ի մնաս իր դաշնակցի։ 2եզրը տէ-  
րութիւնները պարտաւոր են պահպանել բոլոր  
այն պայմանները, որ միջազգային յարաբերու-  
թիւնների մէջ բղխում է շեզօքութիւնից։ այն  
և 1) շեզօք տէրութիւնը ոչ փող, ոչ զէնք, ոչ  
պատերազմական միջերքներ, ոչ նաւեր և ոչ  
որևէ պատերազմական գործողութիւնների  
պէտքական նիւթեղին և առարկաներ իրա-  
ւունք չունի հասցնել պատերազմաղ կողմերից  
մէկին։ 2) Եթէ մի տէրութեան հպատակներից  
պատերազմաղ կողմերից մէկը փոխառութիւն

է անում, այդպիսի մի գրամտկան փոխառութիւնն չպիտի արգելվի և հակառակ կողմի համար, 3) Եթէ իր երկրի մեջ մի տէրութեան համար կամաւորներ են զբւում, արդելք շպիտի լինի հակառակ պատերազմող կողմի համար էլ նոյնին անելու, սակայն այդպիսի կամաւորների թիւը շատ մեծ խմբերով անթոյլատրելի է, 4) Երարանչիւր շեղոք տէրութիւն առ հասարակ անաշառ վերաբերմունք պիտի ունենայ պատերազմող երկու կողմերի նկատմամբ,

Եթէ մի շեղոք տէրութիւն որեւէ կերպ խախտի իր շեղոքութեան պարտաւորութիւններից մէկն ու մէկը, այն դէպքում պատերազմող այն կողմը, ՚ի վեաս որի է, նրա ալդ քայլը, իրաւունք ունի յայտարարել, որ շեղոքութիւնը խախտող այդ տէրութեան շեղոքութիւնն իր համար պարտաւորական չէ, և իրեն է վերապահում ցոյց տալ այնպիսի վերաբերմունք դէպի այդ տէրութիւնը, ինչպէս իր շահերը կը թելազրեն:

Պատերազմող կողմերի պարտաւորութիւնն է շխախտել շեղոք տէրութիւնների շեղոքութիւնը, չօգտւել նրա երկրոգ պատերազմական զործողութիւնների համար առհասարակ շըդիպշել նրանց շահերին. Այն դէպքում, եթր պատերազմող կողմերից մէկի դինուրները կամ խմբովին և կամ առանձին առանձին շեղոք

տէրութեան սահմանը կանցնին, կամ կամովի և  
կամ ստիպւած, այդ գէպրում շեղոք տէրու-  
թիւնը ձերբակալում է նրանց, զինաթափ ա-  
նում և հեռացնում է սահմանագլխից՝ իր եր-  
կրի աւելի ներքին նահանգները:

Պատերազմող կողմերի նաւերը կարող են  
օպտւել շեղոք տէրութիւնների նաւահանգստնե-  
րով միայն քարածուխ, ուտելու պաշար վեր-  
ցնելու և նաւերի մնասւածքները կարկատելու  
համար, իսկ ռազմամթերք վերցնելու իրաւունք  
չունին, այդպիսի մի գործողութիւն կնկատուի  
իրը շեղոքութիւնը խախտելու մի հանգա-  
մանք: Զեղոք նաւահանգստներում որեէ բռնի  
գործողութիւն կամ պատերազմող կող-  
մերի ընդհարումն անթոյլատրելի է, ուստի և,  
եթէ միաժամանակ որեէ շեղոք տէրութեան  
նաւահանգստում երկու պատերազմող կողմերի  
պատերազմական նաւեր զտնւին, նոքա միա-  
ժամանակ շեն կարող գուրս թսդնւել նաւա-  
հանգստից, այլ միմիանցից 24 ժամ տռնւազն  
ուշ: Զեղոք տէրութեան ջրերում պատերազ-  
մող կողմերը թէն կարող են նաւել, սակայն  
այդ սահմաններում հակառակորդի նաւերը գլ-  
րաւել շեն կարող, դա գէմ կլինէր շեղոք տէ-  
րութեան շեղոքութիւնը յարգելու պարտաւո-  
րութեանը, եթէ որեէ շեղոք տէրութիւն թոյլ  
է տալիս մի տէրութեան օպտւել իր նաւա-

հաճնպստներով վերոյիշեալ նպատակների համար, նոյն չեզոք տէրութիւնը պարտաւոր է նոյն բանը թոյլ տալ և նրա հակառակորդին:

Միջազգային յարաբերութիւնների մէջ առանձին նշանակութիւն ունի պատերազմի ժամանակ առևտրի չեզոքութեան վերաբերեալ պարտաւորութիւններն ու սկզբունքները, թէ պատերազմող կողմերի և թէ չեզոք տէրութիւնների համար:

Պարտաւորութիւններ եւ իրատնքներ առեւտրի մասին պատերազմի ժամանակ.— Սկզբունքով պատերազմի ժամանակ առևտուրը պատ պիտի լինի, սակայն նայելով թէ առեւտրի նիւթերն ինչ տեսակի ապրանքներ են, ըստ այնու էլ պատերազմող կողմերը վարւում են ծովի վրա այդ ապրանքների և նրանց տեղափոխող նաւերի հետ. Արդէն ասել ենք, որ չեզոք տէրութիւնը միջազգային օրէնքներով չի կարող որե նիւթեզէն կամ ապրանք հայթայթել պատերազմող կողմերից մէկին. Չետայելով դրան, իւրաքանչիւր տէրութիւն թոյլ է տալիս իր հպատակներին պատերազմող երկու կողմերին էլ հաւասարաղէս ամենատեսակ մթերքներ հասցնել. Եյս դէպքում որեէ տէրութիւն չեզոքութեան պարտաւորութիւնները այն ժամանակ խախտած կլինի, երբ թոյլ

տայ միայն պատերազմով մի կողմին հասցնել  
մըերքներ, իսկ միւս կողմին ոչ:

Պատերազմի ժամանակ ծովային տռետրի  
այն ապրանքները, որ ուղղւած են դէպի պա-  
տերազմող կողմերի նաւահանգստները, բաժան-  
ւում են երկու տիեզակի: Թոյլատրելի. 1) թոյ-  
լատրելի են հաշւում այն ապրանքները, որ  
պէտք չեն պատերազմական անմիջական գոր-  
ծադրութեան և ոչ էլ ներկայացնում են այն-  
պիսի հում նիւթ, որից պատերազմական դէպ-  
րերի հաւաք առարկաներ պատրաստուին, և  
առհասարակ պէտք գան իրենց մշակւած ձեռվ:  
2) Ենթոյլատրելի ապրանքներ՝ որոնց պա-  
տերազմող կողմի հասցնելը եթէ այսպէս կա-  
րելի է ասել, մաքսանեթզութիւն է հաշւում:  
Այդպիսի ապրանքների շարքին են պատկանում,  
դէնքերը, պատերազմական ամեն տեսակի մը-  
թերքներ, ռումբեր, պայթուցիկ նիւթեր, փո-  
խադրութեան միջոցներ, զօրքի հազուստեղին և  
ոարք ու կարգ: Այդ ապրանքների տեսակին են  
վերաբերում նաև կողմնակի կերպով այն ապ-  
րանքները, որ կարող են պատերազմական  
գործողութիւններին պէտք գալ. այսպէս հում  
երկաթ, շինութեան փայտեղին, առազաստ-  
ներ, ձիեր և այլն. նաև այնպիսի առարկաներ  
որ որոշ մշակութեան ենթարկելուց յետոյ մի-  
այն կարող են պէտքական լինել պատերազ-

մական զօրծողութիւնների ժամանակ:

Եմեն վաճառական այդ գէպքում ինքն է միայն պատասխանատու, և եթէ պատերազմող կողմերից մէկը զբաւի նրա այդ ապրանքներն ու փոխադրող նաւերը, տէրութիւնը ոչ մի կերպ չի միջամտի պաշտպանելու իր հըպատակի շահերը:

Իւրաքանչիւր սպատերազմող կողմ իրաւունք ունի շթոյլ տալ, որ իր հակառակորդին որեւէ մէկը մթերքներ հասցնէ. այդ նպատակով, առաջ բերած մաքսանենդութեան ապրանքներով բեռնաւորւած բոլոր նաւերն իրենց ապրանքներով զբաւում են անպայման կերպով.

---

Դլուխ ութերորդ. — Խախտւած իրաւունքների լուծելու այլ միջոցներ. — Քաղաքագիտական միջոցներ. — Անմիջական բանակցութիւններ. բարի ծառայութիւն. միջնորդութիւն. հրասագիտական միջոցներ կամ միջնորդ դատարան. — Դատավարութեան եղանակը. դաշնապրեր:

Միջազգային յարաքերութիւնների մէջ թիւրիմացութիւնների նախքան թէ բռնի ուժով լուծելը, կան և զօրծ են դրւում մի շաբք

քաղաքագիտական միջոցներ, որոնցով շատ  
անգամ հնարաւոր է լինում խուսափել, զնորի  
ուժով խախուած իրաւոնքները վերականգ-  
նելու դիմելուց:

1. Անմիջական քանակցութիւններ.—  
Միջազգային յարաքերութիւնների մէջ տէրու-  
թիւնների քաղաքական ներկայացուցիչների  
պլուաւոր աշխատանքն այն պիտի լինի, որ մի  
կողմից շմոռանալով իրենց երկրի շահերը,  
միւս կողմից աշխատին նախ լաւ յարաքերու-  
թիւններ պահպանել բոլոր տէրութիւնների  
հետ. երկրորդ ամեն կերպ առաջ գալիք թիւ-  
րիմացութիւնների առաջն առնեն և երրորդ,  
երր արգէն անհամաձայնութիւնը ծագել է,  
ջանք զօրծ գնեն հեռացնել թիւրիմացութիւն  
առաջ բերող պատճառները. Սոքա արգէն բա-  
րական են հասկանալու հտմար, թէ որպիսի  
ծանր և պատասխանատու պարտաւորութիւններ  
են դրւում քաղաքական ներկայացուցիչների  
վրա և որքան պատրաստութիւն, հմտութիւն  
և սառնարիւնութիւն է պէտք, որ կարողա-  
նան տանել իրենց վրա զրած այդ կական  
պարտաւորութիւնները. Ենհամաձայնութիւն  
ծագած դէպքերում նոքա պարտաւոր են պար-  
զել նոցա պատճառները, բանակցութիւնների  
մէջ մտնել, անձամբ, զրաւոր կամ յանձնաժո-  
ղովների միջոցով, նայելով թէ դէպքն ինչ ձեի

անմիջական բանակցութիւն է պահանջում, Այդ  
և առասարակ քաղաքական բանակցութիւն-  
ների ժամանակ երկու բանակցող կողմերն էլ  
պարտաւոր են խաղաղասիրութիւն և ազնւու-  
թիւն ցոյց տալ:

Խաղաղ վախճան ունեցող բանակցու-  
թիւնները վիճելի առարկայի նկատմամբ վեր-  
ջանում են կամ փոխադարձ զիջողութիւննե-  
րով և կամ, վիճող կողմերից մէկը յօդուտ  
միւսի իր պահանջներից հրաժարուելով:

2. Բարի ծառայութիւններ. — Միջազ-  
գային յարաբերութիւնների մէջ ընդունած է,  
թէև ոչ իրրե պարտադիր օրէնք, դիմել պա-  
տերազմող կողմերին, բարի ծառայութիւններ  
առաջարկելով. Այդ բանը պատերազմող կող-  
մերը կտրող են ընդունել և չնդունել: Բացի  
դրանից այդպիսի միջամտութիւն կարող են  
խնդրել և իրենք, պատերազմող կողմերը սրե  
բարեկամ տէրութիւնից:

Միջազգային յարաբերութիւնների վեր-  
ջին յիշեամեակի պատմութիւնը ցոյց է տալիս,  
որ եղել են գէպքեր, երբ առաջարկւած բա-  
րեկամ ծառայութիւնների ընդունելու պատ-  
ճառով հետաւոր է եղել արխւնհեղութիւնների  
առաջն առնել: Ենչպէս 1869 լ. Փարիզեան  
վեհաժողովը վերջ դրեց Կրետէ կողու ապս-  
տամբութեան պատճառով Թուրքեայի և Յու-

Նաստանի մէջ պատրաստող պատերազմական գործողութիւններին, Մինչ դեռ այդպիսի մի միջամտութիւն մերժւելու համար 1861—65 թ. Հիւսիսային և Հարաւային նահանգների (Միացեալ նահանգներում) արխինահեղ կոխւը տեղի ունեցաւ. իսկ 1870 թ. Փրանս-Պրուսական սոսկալի պատերազմը, Առաջին դէպքում մերժւել էր Ռուսաստանի բարի ծառայութիւնները, իսկ երկրորդ դէպքում Անգլիայի բարի ծառայութիւնները՝ յատկապես Փրանսեայի կողմից:

Տէրութիւնների բարի ծառայութիւններին դիմելու մասին յիշատակութիւն կայ Բերլինի 1885 թ. համաձայնութեան մէջ և ընդունել է Հատկայի խտղաղութեան համաժողովում իր ոչ պարտադիր մի միջոց:

3. Մ'իջնորդութիւնը միջազգային այն գործողութիւնն է, երբ երկու պատերազմոց կողմերի մէջ, մի, կամ միքանի տէրութիւններ, ինքնարերաբար կամ պատերազմովների ցանկութեամբ, աշխատում են հաշտութիւն կայացնել՝ մինչը կամ պատերազմը վերջացնելու համար. Միջնորդ տէրութիւնը իր գործողութիւնների մէջ պիտի լինի վերին աստիճանի անաշու, անկեղծ, ոչ մի կասկած չպիտի տայ. թէ ինքը թէրւած է այս կամ այն կողմը, յօդուտ սրա կամ նրա վերջացնելու միճելի գործը՝ շղեկավարւելով արդարութեան սկրզ-

բունքներով։ Միջնորդի միջամտութիւնը զէն-  
քով չպիտի լինի, որովհետեւ այդպիսի միջա-  
մտութիւնն արգէն շեղոքութեան խախտումն է,  
՚ի մնաս կողմերից մէկի։ Միջնարդը պիտի մաս-  
նակցէ կողմերի բոլոր բանակցութիւներին և  
նրան յայտնի պիտի լինին երկու կողմերի բո-  
լոր զրութիւնները ու պահանջները վիճելի  
յանդրի առթիւ։ Չնայելով այս բոլորին, նրա  
բոլոր տւուծ վճիռները պատերազմի պատճառ  
եղող վէճի նկատմամբ կարող են վիճող կող-  
մերից ընդունեիլ և շընդունեիլ. միջնորդի որո-  
շումները պարտադիր շեն վիճող կողմերի հա-  
մար. ուստի և միջնորդն աւելի հաշաեցնող է,  
Միջնորդութեան տարերութիւնը բարի ծա-  
ռայութիւններ առաջարկելու միջոցից ան է,  
որ վերջին դէպքում, բարի ծառայութիւններ  
առաջարկող տէրութիւնները միայն աշխատում  
են երկու վիճող կամ պատերազմող կողմերի  
մէջ բանակցութիւնների սկիզբը զնել, առանց  
լինելիք բանակցութիւնների մէջ զործնական  
դեր, կամ մասնակցութիւն ունենալու ու որո-  
շում ներկայացնելու։

Այժմ հետաքրքրութեան համար անցնենք  
տեսնելու, թէ միջաղպային յարաբերութիւն-  
ների մէջ միջնորդութիւնն ինչպիսի բնորոշիչ  
օրինակներ են տեսլի ունեցել և ինչ վախճա-  
նով։ Բայց նախքան այդ, առաջ բերենք Փա-

րիվեան (1856 թ.,) և Բերլինեան (1878 թ.) վեհաժողովների որոշումներից երկու յօդւած միջնորդութեան մասին։ Փարիզեան ժողովը յօդւած 8. «Եթէ Բ. Դուան և դաշնագրով կապւած տէրութիւններից մէկի կամ միքանիսի մէջ անհամաձայնութիւն առաջ դայ, որ յարաբերութիւնների խզումն սպառնայ, Բ. Դուռը և այդ տէրութիւններից իւրաքանչիւրը նախքան ուժ զործադրելու դիմելը, պարտաւոր են թոյլ տալ գաշնագրին միացած տէրութիւններին՝ միջնորդութեամբ այդ ճայրահեղութեան առաջն առնելու»։ Բերլինեան վեհաժողովը, յօդւած 12. «Այն դէպքում, եթէ այս թուղթն ստորագրողների մէջ առաջ դան լուրջ անհամաձայնութիւններ երկրի սահմանի վերաբերմամբ, կամ սահմանի վրա... այդ տէրութիւնները պարտաւոր են նախքան դէնքի ուժին դիմելը, խնդրել մէկ կամ միքանի բարեկամ տէրութիւնների միջնորդութիւնը»։

Միջնորդութեան օրինակներ. — Ռուսաստանը երկար ժամանակ բարի և արդիւնաւոր միջնորդի գեր է կատարել Պրուսեայի և Ռուստրեայի մէջ։ 1812 թ. նա իր միջնորդութիւնն առաջարկեց Անգլիային և Միացեալ Նահանգներին, որոնցից առաջնի մերժելու պատճառով պատերազմ տեղի ունեցաւ և տեսեց մինչի 1814 թ. ու վերջացաւ Գենտեան համա-

ձայնութեամբ։ 1866 թ. Եւոտրօ - Պրուստկան պատերազմի ժամանակ նապալէնի Ա-ը միջնորդութիւն արաւ այդ երկու կողմերի մէջ, որ նիկոլոսուրգիան խաղաղութեամբ վերջացաւ։ 1882 թ. Միացեալ նահանգներն առաջարկեցին իրենց միջնորդութիւնը 2ելիի և Գերուի ու Բոլիվիայի մէջ ծագած պատերազմի ժամանակ։ միջնորդութիւնն ընդունեց, ինչպէս և միջնորդի կայացրած սրոշումները։

Եթե Խոպանեայի և Գերմանիայի մէջ վէճ ծագեց Կարոլինեան կղզիների առթիւ, որ վերջինս ուժով յափշտակել էր ուզում, վէճը կարդարելու և պատերազմի առաջն տանելու համար, Գերմանիան միջնորդ ընտրեց Հռոմի Պապին։ Պապը խնդիրը լուծեց այսպէս, — կղզիները պատկանում են Խոպանեային, իսկ Գերմանիան այդ կղզիների նաւահանգստաներում իր նաւերի համար կայիշն ունենալու իրաւունք ունի։

Խոպանօ-Ըմերիկեան պատերազմում միջնորդի դեր կատարեց Ֆրանսիան. Վենեցուէլլայի խնդրում՝ Միացեալ նահանգները և այն։

գ. Միջնորդ դատարան. Միջազգային յարաբրութեան մէջ թիւրիմացութիւնների խաղաղ ճանապարհներով լուծելու ցանկալի ձեր՝ վէճերը միջնորդ դատարանին յանձնելն է, որ ընդհարման խնդիրներով և որի վճռուները պարտապիր են։

Վիճող կողմերն եթե ցանկանում են իրենց վէճը միջնորդ դատարանով վերջանայ, նոքա այդ մասին նախապէս դրաւոր համաձայնունութիւն են կայացնում, որով պարտաւորում են դիմել միջնորդ դատարանի և Հնազանդւել նրա արձակած վճիռներին, Այս սկզբնական պայմանագիրը սովորաբար նաև պարունակում է իր մէջ վիճելի խնդրի որոշումը, երկու կողմերի պահանջները, այն իրաւաբանական հիմունքները, որոնցով կարելի է խընդիրը լուծել դատաւորի կամ դատաւորների անձնաւորութիւնները, դատարանի տեղը և ժամանակը:

Միջազգային յարաբերութիւնների մէջ, ինչպէս միջազգային իրաւագէտ Դրէյֆուսը հաշւել է 1894—1891 թ. մօտ 100 տարւայ ընթացքում 58 անդամ աղքերն իրենց մէջ ծաղած վէճերը լուծելու համար դիմել են միջնորդ դատարանի. իսկ մինչի այժմ այդ թիւը համնում է 75-ի, Բերենը օրինակներ:

Ալարամեան վէճ.—Միացեալ նահանգների 1861—65 թ. ներքին պատերազմներին Անգլիան յայտարարել էր իրեն շեղոր, բայց աւելի համակիր էր գէպի Հարաւային նահանգները, թէի շեղորութիւնը սչնչով շխախտեց. Երբ Հարաւային նահանգների ելքը գէպի բաց ծով փակւած էր Հիւսիսային նահանգների պատերազմական նաւագործմավ, Հարաւայինի զործա-

կալները Լիվերպուլում (Մնդլիս) պատրաստել  
էին տալիս ծովային աւազակութեան համար  
նաւերի և յարձակում էին չիւսիսային նահանգ-  
ների առետրական նաւերի վրա, բաց ծովում,  
թալանում էին ասլրանքը, իսկ նաւերը այրում,  
որովհետեւ աւարը չարաւային նահանգների  
նաւահանգստները տանել անհնար էր. Այդ տ-  
ւազակային նաւերից ամենանշանաւորը Ալարա-  
մա նաւն էր, որի անսւնով և վեճը կոչւեց  
Ալարամեան:

Պատերազմի ընթացքում չիւսիսային նա-  
հանգների ներկայացուցիչը քանիցո մտանացոյց  
արաւ Լիվերպուլում կատարող այդ իրողու-  
թինների վրա, ոակայն Մնդլիան միշտ զը-  
տնում էր, որ արագոյցները բաւականաշափ  
հիմնաւոր շեն և այն:

Պատերազմից յետոյ Միացեալ նահանգները  
խիստ պահանջներ արին Մնդլիայից, բաւա-  
րարութիւնն տալու ոչ միայն աւազակային նաւ-  
երի հասցրած լինասների համար, այլ և այն  
լինասների որ կողմնակի կերտով հասել էր պա-  
տերազմի երկար տեսելու պատճառով։ Վէճը  
սուր կերպարանը ստացաւ, բայց բարերախ-  
տարար 1869 թ. յունուարի 14-ին երկու կող-  
մերը համաձայնութիւն կայացրին զսրծը միշ-  
նոր գատարանի յանձնելու, 1871 թ. նախ-  
կին համաձայնութիւնը զլուխ չկալու պատ-

ճառով, կայացաւ մի նոր համաձայնութիւն, որի գորութեամբ ընտրւեցին մի մի հոգի Անդլիայի և Միացիալ Նահանգների կողմից և մի մի հոգի էլ երեք չեղոք տէրութեան կողմից — Ետալիայի, Զուլիցերեայի և Բրազիլիայի կողմից։ Քատարանն իր նիստերն սկսեց 1871 թ. դեկտեմբերի 15-ին և տևեց մինչև 1872 թ. սեպտեմբերի 14-ը։ Ամերիկան իր թղթում պահանջում էր ինչպես ասացինք նաև պատերազմի ձգձգւելուց առաջացած կողմնակի վետանիերը, մի հանգամնը, որ քիչ մեաց պիտի արգելք գառնար զործի խաղաղ ճանապարհով լուծելուն, ոտկայն միջնորդ գատարանի անդամների բռնած դիրքի և խոհեմութեան շնորհիւ զործը խաղաղ ընթացք ստացաւ, որով մերժւեց Ամերիկայի շտվազանց և ապացուցանելու կարօտ պահանջները։ Եյդ զործի առթիւ Միջնորդ Գատարանի վճիռը նոպաստաւոր չէր Անգլիայի համար, նա որոշել էր, որ Միացիալ Նահանգներին հասած մնաների փոխարէն, Անգլիան վճարէ Կրան 15 միլիոն դոլար։ Անգլիան անխօս հոգատակեց այդ վճուն։ Խուսաց կայորները յաճախ եղել են միջնորդ գատաւոր զանազան վիճով կողմերի մէջ։ Եսպէս. 1820 թ. Ալեքսանդր 1-ին կայսրն Անգլիայի և Միացիալ Նահանգների մէջ ծագած մի վիճելի խնդրի առթիւ ընտրւեց միջ-

նորդ դատաւոր, որի վճռին համաձայնեցին երկու տէրութիւններն էլ, Միջնորդ դատաւորութիւն է արել Ալէքսանդր Ա կայսրը Պետրոսի և ձապօնեայի մի նաւի պատճառով ծագւած վէճի համար 1875 թւին: Ալէքսանդր Ա Կայսրը 1891 թ. միջնորդ դատաւորութիւն արաւ Փրանսեայի և Հոլանդեայի Գվիանայում սահմանների պատճառով ծագած վէճի համար: Եւ այն:

Միջնորդ դատարանի էութիւնը.—Միջազգային միջնորդ դատարանի էութիւնը կազմւած է հետեւեալ երեք մասերից 1) Կազմակերպութիւն, 2) Իրաւասութեան շրջան և 3) Դատավարութիւն.

1) Միջնորդ դատարանի կազմակերպութիւնը.—Միջազգային միջնորդ դատարանի անդամները կարող են լինել թւափ շատ և քիչ: Միջնորդ դատարանը կարող է կազմւած լինել նաև միայն մի անձից. բայց առհասարակ զերակշռող է այն հայեացքը, թէ միջնորդ դատարանը պիտի լինի մի կալեգեալ (ընկերակցական) հիմնարկութիւն: Պրօֆ. Մարտէնսի կարծիքով, միջնորդ դատաւոր կարող է լինել իւրաքանչիւր իրաւարանական մարմին, լինի նա մի անձն թէ մի հիմնարկութիւն:

Միջնորդ դատարանի պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդ տեսակ դատաւորի գերեր

կատարել են Ռուսաց և Գերմանեայի կայսրները, Միացեալ Նահանգների Նախագահնը և այլն, այսինքն առանձին տռանձին անհատներ:

Միջզգային իրաւագէտ Բլինչլիի կարծիքով միջնորդ դատարանի համար պէտք է ընտրել իրաւարանական ֆակուլտետներ և այնպիսի անձինք, որոնք ունենային այն բոլոր անհրաժեշտ պատրաստութիւնը, որ երաշխաւոր էր խնդրի կշռագատելը՝ հիմնաւոր և անաշառ կերպով։ Ամենից նպատակայարմարը մշտական միջնորդ դատարանի հիմնարկութիւնն է, որին կարողանային պարտաւորաբար յանձնել տէրութիւնների մէջ ծագած բոլոր վէճերը։

2) Դատարտանի իրաւասութիւնը—Միջազգային յարաբերութիւնների մէջ վէճերի առարկայ եղել են օտարահագատակների իրաւունքները, մնասների մասին ծագած վէճերը, դաշնագրերի բացատրելու եղանակի մասին ծագած վէճերը և այլն. Թիվոնի կարծիքով միջազգային վէճերը կարելի է բնորոշել հետեւալ կերպով, 1) իրաւարանական խնդիրներ, որոնք հեշտութեամբ կարող են ենթարկել իրաւարանական քննութեան. 2) Քաղաքական խնդիրներ, որոնք այնքան էլ հեշտութեամբ չեն կարող իրաւարանական քննութեան ենթարկել և 3) խնդիրներ, երբ ազգային պա-

տիւն է շոշափուում զործի մէջ։ Բոլոր այս  
խնդիրները կարող են ենթարկել միջնորդ գա-  
տարանի իրաւասութեանը։

3) Դատավարութիւն. — Թէ ի՞նչ ձեռվ  
պիտի լինի միջնորդ գատարանի դատավարու-  
թիւնը, միջազգային իրաւունքը դրա մասին  
որոշ պարտադիր կարգեր չէ սահմանել։ Դա-  
տավարութեան համար օգտառում են վոյտթիւն  
ունեցող դատարանների դատավարութեան  
եղանակով և բացի դրանից իրենց-դատաւոր-  
ներին է թողնելում դատավարութեան աւելի  
յարմարաւոր ձեն ընդունել։ Միջազգային երկու  
յայտնի վէճերի մէջ — Ալարամեան և Յերին-  
գեան նեղուցի — դատավարութեան ժամանակ  
նրանց ընթացքն այսպէս է եղել 1) վիճող  
կողմերը ներկայացրել են իրենց պահանջները,  
2) դրան հետեհել է հակառակ կողմերի փոխա-  
դարձ պատասխանները և 3) կողմերի վերջ-  
նական եղրակացութիւնները, որոնցից յետոյ  
դատարանի վճիռը։

Դատավարութեան ժամանակ միջնորդ գա-  
տարանը գործելով քննութեան է առնում և ո-  
րոշումներ կայացնում ՚ի նկատ ունենալով 1) միջազգային իրաւունքը, օրէնքներն ու դաշ-  
նագրերը, 2) գործին համապատասխանող  
միջազգային սովորութիւնները, 3) վճիռը տէ-

բոլինների օրէնքները, 4) տռհասարակ դիտնականի կարծիքների կարծիքը և այլն,

Միջազգային միջնորդ գատարանի որոշումները վիճելի են 1) եթէ խախտել է երկու կողմից կայացրած սկզբնական համաձայնութիւնը, 2) երբ խախտել է քաղաքակրթութեան հիմնական կազմերը, օրինակ, եթէ վիճող կողմիրին չեն լսել, և 3) եթէ միջազգային իրաւունքի օրէնքների կոպիտ խախտումն է թոյլ տրւել:

Միջնորդ գատարանի գաղափարն այնքան է քաղաքացիութիւն զտել միջազգային յարարերութիւնների մէջ, որ այժմ ձգտումներ են լինում, նոյն իսկ վէճեր շեղած ժամանակին էլ գոխագարձ համաձայնութիւններ կայացնել, ապագային ծագելիք վէճերը միջնորդ գատարանի յանձնելու: Վերջին մի տարւայ ընթացքում մի շաբար տէրութիւններ համաձայնութիւններ կայացրին իրենց մէջ ծագելիք վէճերը միջնորդ գատարանով լուծելու համար: Ինչպէս Շեղլիան, Փրանսիան, Իտալիան և այլն: Միջնորդ գատարանով իրար մէջ վէճերը կարգաւորելու համար Միացեալ նահանգները 1890 թւին գաշնազիր կնքեց Սմերիկայի բոլոր տէրութիւնների հետ, որի հիման վրա բոլոր ծագած վէճերը գաշնազիր գոյութեան ամրոգչ

ընթացքում պարտաւորապէս պիտի յանձնեն միջնորդ գատարանի։ Այդ դաշնագիրը միայն մի դէպքի համար պարտագիր չէ, երբ խնդիրը վերաբերում է դաշնագիրը ստորագրող որիէ տէրութեան անկախութեանը։ Այդպիսի դէպքիրում միջնորդ դատարանի կարող է յանձնել զործը միայն կողմերի փոխազարձ համաձայնութեամբ։

Միացեալ նահանգներն այդ դաշնագիրը կնքել են իբր փորձ քսան տարով. այդ դաշնագիրը պարունակում է մի կէտ, որի հիման վրա նրան կարող են միանալ նաև կողմնակի, ոչ Ամերիկայի տէրութիւններ։ Վաշինգտօնի կառավարութիւնը Դաշնագրի այդ կէտի հիման վրա, նրա օրինակներն ուղարկեց Եւրոպուղական պետութիւններկն 'ի տեղեկութիւն։

Վերջաբան, Հաազայի խաղաղութեան  
միջազգային համաժողով.— 1898 թ. Ռուս.  
կայսերական կառավարութիւնը օգոստոսի 12-ի  
շրջաբերական և տպա նոյն տարւայ դեկտեմ-  
բերի 30-ի բացատրական գրութիւններով դի-  
մեց Պետերբուրգում գտնւած տէրութիւնների  
բոլոր ներկայացուցիչներին մի մարդասէր ա-  
ռաջարկութեամբ, որի հիմնական միտքն է  
ընդհանուր համաձայնութիւնով ձեռք առնել  
այնպիսի միջոցներ, որով հնարաւոր լինէր ազ-  
գերի զինւած ընդհարումների առաջի առնել  
նախ, և երկրորդ աղատել նրանց այն ծանր և  
ճնշող լուծից, որ զրել են յարաճուն պատե-  
րազմական ծախքերը:

Առաջարկութեանը յաջորդող բանակցու-  
թիւններին այն արդինքն ունեցան, որ 1899 թ.  
մայիսի 6-ին, (նոր տոմարով 18-ին), տէրու-  
թիւնների փոխադարձ համաձայնութեամբ Հո-  
լանդեայի Հաազա քաղաքում, յատկապէս նրա  
Բուշ կոչւած պատմական դգիակում գումարւեց  
Խաղաղութեան Միջազգային Համաժողովը:  
Համաժողովին մասնակցել են 26 տէրութիւն,  
ի միջի այլոց Ասիայից՝ Ճապոնեան, 2ինա-  
տանը, Պարսկաստանը և Թուրքեան: Ամերի-  
կան ունէր միայն մի ներկայացուցիչ-Միացեալ  
նահանգները.

Ժողովի հենց սկզբից բաժանւել է երեք  
մասնաժողովի. որոց մէջն և կենդրանանում է  
համարեած թէ խաղաղութեան համաժողովի  
ամբողջ գործունէութիւնը։ Առաջին յանձնա-  
ժողովն զբաղւել է «պինաթափութեան» խըն-  
դրով, որտեղ ըննաւթիւն էին տանւելու շորո  
վվասոր կէտ Ռուսաստանի բացատրական  
յալտարարութիւններից այն է, 1) համաձայ-  
նութեան զալ զաղարեցնելու ապազայի ովա-  
ռազինութիւնը և պատերազմական ծախրերի  
շատացնելը. 2) արգելել նոր տեսակի հրա-  
զինների և պայթուցիկ նիւթերի զործածումը.  
3) զործ շածել աւերմուեքներ տռաջ բերագ  
բաղադրութիւններ. չճպել ուսմբեր օգապիրիկի  
միջոցով և շպարծածել ընդունեայ ականա-  
նաւեր. 4) շինել պատերազմական նաւեր  
և այլն։

Երկրորդ յանձնաժողովը պատերազմա-  
կան օրէնքների յանձնաժողովն է։ Այդ ժո-  
ղովն 1) զբաղւելու էր Յթիւսնելի 1874 թ. ժո-  
ղովի զբաղմունքների վերաքննութեամբ, որ  
մերարեռում էր պատերազմի օրէնքներին և ոս-  
կորութիւններին։ Հայեցողութեան էր առնելու  
ծովային պատերազմների ժամանակ ժենեեան  
համաձայնութեան որոշումների գործազրու-  
թեան եղանակները և ծովային պատերազմի  
ժամանակ խեղդողներին ազատելու համար

շեղոք տէրսւթիւնների նշանակած նաւերի շե-  
ղոքութիւնը ճանաչելը:

Երբորդ յանձնաժողովին պատվելու էք միջ-  
նորդութեան և միջնորդ գատարանի խնդիր-  
ներսի:

Համաժողովի գործունէութիւնը ոչ մի ար-  
դիւնք չտւեց ժողովի ղբազման նիւթ եղագ  
ղլիստաւոր և ծանրակշիռ խնդիրների նկատմամբ:  
Չնդունեցին ոչ սպառազինութիւնը գաղարե-  
ցնելու, ոչ տէրութիւնների տյդ մասին նա-  
խահաշիւնները որևէ սահմանի տակ դնելու ա-  
ռաջարկութիւնները:

Աւելիորդ համարելով մի առ մի նկարա-  
դիւն բանակցութիւնների և խնդիրների լուծ-  
ման ընթացքի մանրամասնութիւնները, կան-  
ցնեմ անմիջապէս այն եղբակացութիւններին,  
որոնց յանգեց համաժողովը:

Համաժողովի ամենազործունեայ և իր  
հետևանքներս արդիւնաւոր յանձնաժողովը եր-  
րարդ յանձնաժողովի է: Այդ յանձնաժողովով  
ընդունեց որ, տէրութիւնների մէջ ծագած  
վէճերի և թիւրիմացութիւնների դէպրում,  
կազմնակի տէրութիւնները կարող են առա-  
ջարկել բարի ծառայութիւններ, անել միջնոր-  
դութիւն, և որ զլիստաօրն է ընդունեց միջ-  
աղգային միջնորդ գատարանի հաստատու-  
թիւնը՝ թէ և ոչ պարտազիր, որ Անդրայի

կողմից առաջարկած ծըլրագրի պլիսաւոր հիմն  
էր կազմում:

Երկրորդ յանձնաժողովի մշակած ծրագր-  
ներից լնդունւեցին նախ ծովային պատերազմի  
ժամանակ Ժենեվան 1864 թ. համաձայնու-  
թեան որոշումների գործ դնելը և ցամաքային  
պատերազմների ժամանակ Բրիւսուլի 1874 թ.  
շընդունւած միջոցների որոշ կէտերի մասին  
համաձայնութեան գալը:

Բացի գրանից համաձայնութիւն է կայա-  
ցել նաև հետեւալ երեք կէտերի նկատմամբ 1)  
օդապարիկով և այլ տեսակ նորահար միջոց-  
ներով պայթուցիկ նիւթեր չձգել թշնամու-  
վրա. 2) չգործածել այնպիսի ռումբեր, որոնք  
օդը թունաւորում են խեղզող պազերով և 3) չը-  
գործածել այն տեսակի դնդակներ, որոնք պայթե-  
լով մարմնի մէջ, աւերմունքներ առաջացնեն.

Համաժողովը չկարողանալով մի շարք  
խնդիրների նկատմամբ համաձայնութեան գալ,  
իր եզրակացութիւնների մէջ հինգ տեսակի  
ցանկութիւններ է յայտնել 1) որ զինուրական  
ծանր բեռի և ծախսերի լուծը թեթեա-  
ցնելէր՝ մարդկութեան բարոյական և նիւթական  
շահերի տեսակէտից. 2) որ չեզոք տէրութիւնների խնդիրը՝ դառնայ յաջորդ համաժողովի  
զբաղմունքի առարկայ. 3) որ ծովային հրացան-  
ների և հրազէնների բերանի լայնութեան և

տեսակի խնդիրը տէրութիւնների փոխագարձ  
բանակցութիւնների խնդիր լինէր, ապագայ  
համաժողովին միատեսակ սրոշման յանգելու  
համար. 4) որ մօտիկ ապագայում գումարէր  
մի ժողով՝ վերաքննելու ժենեան համաձայ-  
նութիւնը և 5) որ ապագայ համաժողովներին  
յանձնելու քննելու ծովային պատերազմների  
ժամանակ մասնաւոր սեփականութեան և թշշ-  
նամու քաղաքների, զիւղերի, նաւահանգստ-  
ների ռմբակութիւնը արդելելու կամ կա-  
նոնաւորելու խնդիրները:

Ահա այն բոլորն, ինչ որ արել է Խաղա-  
ղութեան Միջազգային Համաժողովն իր թէ  
վերջնական որոշումներով և թէ յայտնած ցան-  
կութիւններով՝ ապագայի մասին:





## ԲԱՎԱՆԴԱԿԱՌԻԹԻՒՆ

ԵՐԻԱ

1. Մի քանի խօսք . . . . . 5

2. Գլուխ առաջին. — Միջազգային իրաւունքի առարկան. Տէրութիւն. — Նրա իրաւունքները բռնած տարածութեան վրա Սահմաններ. Երբ կարսդ է մի տէրութիւն միջազգային միութեան անդամ լինել: Նոր աէրութիւն. — Նրա կազմելը. Միջազգային միութեան վերաբերմունքը դէպի նա: Նոր աէրութիւն ճանաչելու եղանակը . . . . . 7 — 18

3. Գլուխ երկրորդ. — Տէրութեան հիմնական իրաւունքները. — Անկախութեան կամ ինքնիշխանութեան իրաւունք. Զանազան ձեի քաղաքական կազմակերպութիւններ. Խնքնիշխանութեան դերը պետութեան ներքին կեանքում. Ներկայացուցիչներ նշանակելը. պատերազմ յայտաբարելու և հաշտութիւն կապելու իրաւունք . . . . . 18 — 32

4. Գլուխ երրորդ — Խնքնապաշտպանութիւն. — Պրա համար ձեռք առած միջոցներ. պահպանողական և յարձակողական դաշնագրեր. Յառաջադիմելու կամ ազատ զարգանալու իրաւունք. — Տնտեսական և արդիւնաբերական խնդիրներ. դադութներ ձեռք բերելու և երկրներ գրաւելու եղանակները. Հաւասարութեան իրաւունք. — Միջազգային յարաբերութիւնների մէջ հաւասարութեան հիմնական սկզբունքը. Տէրութիւնների տարրերութիւնները . . . . . 32 — 60

5. Գլուխ շորբորդ — Հաղորդակցութիւն կամ յարաբերութեան իրաւունք. — Աղգերի հաղորդակցութեան միջոցներ. կարսդ է մի տէրութիւն կղզիանալ

իր մէջ, փակել իր սահմաններն օտարների առաջ,  
թոյլ շտալ օգտւելու ճանապարհների հաղորդակցու-  
թեամբ և այլն . . . . . 61—72

6. Գլուխ հինդերորդ.—Պետութիւնների կրած  
փոփոխութիւններից առաջ եկած հետևանքները.—  
Փոփոխութիւնների կերպը. դրանից ծագած պարտա-  
ւորութիւններ. պետութեան գոյութեան վերջանալը.  
զրա հետևանքները ժառանգութեան խնդիր և պար-  
տաւորութիւններ . . . . . 73—84

7. Գլուխ վեցերորդ.—Միջազգային պարտաւո-  
րութիւններ.—Միջազգային զետեր, լճեր, նեղուցներ,  
ջրանցքներ, ծովեր և ծովափնեայ մասեր. զրանց  
դէրը Միջազգային յարաբերութիւնների մէջ. Սուէզի  
և Պանամայի ջրանցքներ. Դարդանելի նեղուցը 84—92

8. Գլուխ հօթներորդ.—Միջազգային վէճեր և  
թիւրիմացութիւններ վերացնելը.—կայ արդեօք միջ-  
ազգային կազմակերպութիւն լուծելու այդ բարդու-  
թիւնները. Խախտած իրաւունքներ և զրանց վերա-  
կանգնելու եղանակները. — Խոնի միջոցներ. Պատե-  
րազմ.—Նրա իրաւունքը. Պատերազմ վարելու ձևը.  
Դերիններ. Գրաւողի իրաւունքը. Ծովային պատերազմ.—  
Հեղոքութիւն. Պարտաւորութիւններ և իրաւունքներ  
պատերազմի ժամանակ առևտորի մասին . 92—122

9. Գլուխ ութերորդ.—Խախտած իրաւունքների  
լուծելը և այլ միջոցներ. — Ընմիջական բանակցու-  
թիւններ. Բարի ծառայութիւններ. Միջնորդութիւն.  
Իրաւուգիտական միջոցներ կամ միջնորդ դատարան.  
Դրա էութիւնը, իրաւուառութիւնը, դատավարութեան  
եղանակը. Դաշնագրեր . . . . . 122—136

Վերջարան. — Հաազայի խաղաղութեան միջադ-  
պային համաժողով զրա հետևանքները . 137—142



